

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐԱԶԵՐՄԱՅԻՆ
ԷՆԵՐԳԻԱՅԻ ԾՐԱԳՐԻ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ	5
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	7
1.1. Ծրագրի համատեքստը	7
1.2. Ծրագրի նկարագրությունը	8
1.3. Տարաբնակեցման քաղաքականության շրջանակի պատրաստման տրամաբանական հիմնավորումը	11
1.4. Տարաբնակեցման քաղաքականության շրջանակի նպատակն ու սկզբունքները	12
1.5. Տարաբնակեցման տեսակն ու ծավալը Ծրագրի շրջանակում	13
2. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿ	17
2.1. Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ	17
2.2. Պետական կառավարման մարմիններ	18
2.3. Տեղական ինքնակառավարման մարմիններ	21
2.4. Տարաբնակեցման գործողությունների ծրագրի իրականացման գրասենյակ	22
2.5. Բողոքների լուծման հանձնաժողով	22
2.6. Հասարակական կազմակերպություններ	22
2.7. Համաշխարհային բանկ	23
3. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ	24
3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը	24
3.2. Համաշխարհային բանկի քաղաքականությունը	31
3.3 Հայաստանի օրենքների և Համաշխարհային բանկի հարկադիր տարաբնակեցման քաղաքականության համեմատությունը	32
3.4. Եզրակացություններ. բացթողումների լրացմանն ուղղված միջոցառումներ	37
4. ՓՈՆՏԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	38
4.1. Փոխհատուցման և/կամ վերականգնման իրավունքները	38
4.2. Փոխհատուցման և վերականգնման իրավունքները	39
4.3. Ազդեցության ենթակա գույքի գնահատումը	43
5. ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	45

5.1. Տարաբնակեցման վերաբերյալ պահանջները և նախագծային փուլում ստուգման գործընթացը	45
5.2. Տարաբնակեցման գործողությունների ծրագրի տեսակները.....	46
5.3. Տարաբնակեցման գործողությունների պլանի մշակումն ու հաստատումը.....	48
5.4. ՏԳԾ տեղեկատվության վերաբերյալ պահանջները.....	48
5.5. Տարաբնակեցման գործողությունների ծրագրի իրականացման գործընթացը..	49
6. ԲՈՂՈՔՆԵՐ ԵՎ ԴԺԳՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	52
7. ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ	56
8. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ	57
9. ԾԱԽՍԵՐ ԵՎ ԲՅՈՒՋԵՆԵՐ.....	58
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՍԽԵՄԱ	59
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ.....	63
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՅԱՆԿ	64
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՅԱՆԿ... ..	65
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՏԳԾ-Ի ՁԵՎԱԶԱՓԵՐԸ ԵՎ ՀԱԿԻՐՃ ՏԳԾ-Ն	68
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՏՎՅԱԼՆԵՐ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ	69
ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ	70
ՀԱՎԵԼՎԱԾ 8. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ.....	76
ՀԱՎԵԼՎԱԾ 9. ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՌԱՑՄԱՆ ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՁԵՎԱԹՂԹԵՐԸ	77
ՀԱՎԵԼՎԱԾ 10. ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՁԵՎԱԹՈՒՂԹ	79
ՀԱՎԵԼՎԱԾ 11. ԾՐԱԳՐԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅՈՒՅԱԿԸ	81
ՀԱՎԵԼՎԱԾ 12. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ	82

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՆԽ	Նախագծային խորհրդատու
ՏԱ	Տեղահանված անձ
ՀՎԷԷ հիմնադրամ	Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ
ՀՀ կառավարություն	Հայաստանի Հանրապետության կառավարություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ (համայնքային իշխանություններ)
ՀԿ	Հասարակական կազմակերպություններ
ԳՔ	Գործառնական քաղաքականություն
ԾԱԵԱ	Ծրագրի ազդեցությանը ենթակա անձ
ՀԼ	Հանրային լուսմներ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԷԲՊՆ	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն
ՏԳԾ	Տարաբնակեցման գործողությունների ծրագիր
ՏԳԾԻԲ	Տարաբնակեցման գործողությունների ծրագրի իրականացման բաժին
ՏՔՇ	Տարաբնակեցման քաղաքականության շրջանակ
ԱԳԿՊԿ	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ՀԲ	Համաշխարհային բանկ

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույն փաստաթղթում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ սահմանումները՝

«Տարաբնակեցման քաղաքականության շրջանակ». վերաբերում է սույն փաստաթղթին, որը ներկայացնում է ազդեցության ենթարկված անձանց տարաբնակեցման քաղաքականության ընդհանուր իրավակիրառ դաշտը՝ Երկրաչեբմային Էներգիայի ծրագրի համար: Տարաբնակեցման քաղաքականության շրջանակի ներքո նկարագրվում են տարաբնակեցման գործընթացն ու մեթոդները, ներառյալ՝ ազդեցության ենթակա անձանց փոխհատուցումը, վերաբնակեցումն ու կենսամակարդակի վերականգնումը:

Ծրագրի ազդեցությանը ենթարկված անձ (ԾԱԵԱ). վերաբերում է անձանց, ովքեր սույն ծրագրի արդյունքում ազդեցության են ենթարկվել տնտեսապես կամ սոցիալական առումներով՝ կապված (a) հողի մշտական կամ ժամանակավոր հարկադիր օտարման հետ, որի արդյունքում վերաբնակեցվել են կամ կորցրել են կացարանը, կորցրել են գույքը կամ դեպի գույքն ունեցած մուտքը, կորցրել են եկամտի աղբյուրները կամ կենսապահովման միջոցները՝ անկախ այն բանից, թե ազդեցության ենթակա անձինք պետք է տեղափոխվեն այլ բնակավայր, թե ոչ, կամ (b) դեպի օրենքով սահմանված հատուկ նշանակության պարկեր և պաշտպանված տարածքներ մուտքերի հարկադիր սահմանափակումների հետ, որը բացասական ազդեցություն է թողնում ազդեցության ենթարկված անձանց կենսամակարդակի վրա:

Իրավունքների նկատմամբ **«կասեցման օրը»** հրապարակայնորեն հայտարարվում է իրականացնող մարմնի կողմից, որից հետո կատարված բարելավումների նկատմամբ փոխհատուցման իրավունքն այլևս չի դիտարկվի: Այդ հայտարարությունից անմիջապես հետո կմեկնարկի ԾԱԵԱ-ների մարդահամարը:

«Տարաբնակեցում». ընդհանուր եզր է, որը վերաբերում է հողի օտարմանը և գույքի կորստի դիմաց փոխհատուցմանը՝ անկախ այն հանգամանքից, թե դա փաստացի/ֆիզիկական վերաբնակեցում է, թե տնտեսական տեղահանում, հողի, կացարանի, գույքի կամ այլ կենսապահովման միջոցների կորուստ, և ներառում է բոլոր միջոցառումները, որոնք ձեռնարկվել են՝ մեղմելու Ծրագրի ցանկացած և բոլոր բացասական ազդեցությունները, որոնք կարող են առաջանալ Ծրագրի հետևանքով՝ կապված ԾԱԵԱ-ների գույքի և կենսապահովման միջոցների հետ, այդ թվում՝ փոխհատուցում, վերաբնակեցում (որտեղ կիրառելի է) և վերականգնում:

Տարաբնակեցման ազդեցությունը զգալի է, եթե ֆիզիկապես վերաբնակեցվել է ավելի քան 200 անձ և/կամ ազդեցության է ենթարկվել նրանց արտադրողական ակտիվների ոչ պակաս քան 10%-ը:

Տարաբնակեցման ազդեցությունը զգալի չէ, եթե վերաբնակեցվել են 200-ից պակաս թվով անձինք և ազդեցության են ենթարկվել նրանց 10%-ից պակաս արտադրողական ակտիվները:

«Վերաբնակեցում» նշանակում է ԾԱԵԱ-ների ֆիզիկական տեղահանումն այն վայրից, որը հանդիսանում էր նրա բնակավայրը նախքան Ծրագրի իրականացումը:

«Փոխարինման արժեքը» ակտիվների/գույքի արժեքն է, որը հաշվարկվել է գույքի գնահատման մեթոդով, որն օգնում է հաշվարկել այն գումարը, որը բավարար է կորցրած գույքը փոխարինելու համար, ներառյալ՝ գործառնական ծախսերը, հարկերը կամ այլ կիրառելի վճարները: Գնահատման այս մեթոդի կիրառման պարագայում կառույցների ու գույքի մաշվածությունը չպետք է հաշվի առնվի:

«Փոխհատուցում» նշանակում է օտարված գույքի փոխարինման արժեքի վճարում կանխիկով:

«Վերականգնում» նշանակում է սույն ՏԲԾ կամ ՏԳԾ շրջանակում տրամադրված փոխհատուցում, որը չի ենթադրում օտարված գույքի փոխարինման արժեքի վճարում:

«Հողի հարկադիր օտարում» նշանակում է այն գործընթացը, որի միջոցով անձին պետական գերատեսչության կողմից պարտադրվում է փոխհատուցման դիմաց անձի սեփականություն հանդիսացող կամ անձի կողմից տնօրինվող հողամասի ամբողջական կամ մասնակի օտարումն ի օգուտ այդ գերատեսչության՝ հանրային նպատակներից ելնելով:

«Ժամանակավոր՝ հողի սահմանափակ օգտագործման ընթացակարգ» նշանակում է այն գործընթացը, որով հողամասի սեփականատերը կամ տնօրինողը պարտադրված է որոշակի փոխհատուցման դիմաց թույլ տալ իր հողամասի մի մասի օգտագործումն անձանց կամ հաղորդուղիների, ենթակառուցվածքի տարանցման համար, սակայն հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը մնում է անփոփոխ: ՀՀ օրենսդրության համաձայն՝ այս սահմանումը վերաբերում է «սերվիտուտին»:

«Բողոքների լուծման հանձնաժողով» նշանակում է ծրագրի մակարդակով ձևավորված հանձնաժողով, որը լսելու է ԾԱԵԱ-ների բողոքներն ու դժգոհությունները՝ կապված տարաբնակեցման, այդ թվում՝ ծրագրի հետևանքով հողի, տների և այլ գույքի օտարման, կենսապահովման միջոցների կորստի հետ:

ԱՄՓՈՓՈՒՄ

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության հայեցակարգը (2013 թ.), Հայաստանի զարգացման ռազմավարությունը և Ազգային անվտանգության ռազմավարությունն ուղղված են սեփական հանածո վերականգնվող էներգետիկ ռեսուրսների զարգացմանը: Համաշխարհային բանկի (ՀԲ) ֆինանսական աջակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացված դաշտային հետազոտական աշխատանքներն օգնեցին գնահատել Քարքարի երկրաջերմային տարածքում հետազոտական հորատում անցկացնելու հնարավորությունը: Արդյունքում, Քարքարի երկրաջերմային տարածքում հետազոտական հորատման անցկացումը (Հայաստանի երկրաջերմային էներգիայի ծրագիր) Վերականգնվող էներգետիկայի ընդլայնման ծրագրի¹ ներդրումային պլանում ՀՀ կառավարության կողմից սահմանվել է որպես վերականգնվող էներգետիկայի առաջնահերթ ծրագրերից մեկը: Հայաստանի երկրաջերմային էներգիայի ծրագիրը (Ծրագիր) կֆինանսավորվի Համաշխարհային բանկի կողմից և կիրականացվի Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի (ՀՎԷԷ հիմնադրամ) կողմից:
2. Տարաբնակեցման քաղաքականության շրջանակի (ՏՔՇ) նպատակն է ապահովել ընդհանուր ուղեցույց՝ ծրագրի բացասական ազդեցություններին, մասնավորապես՝ տարաբնակեցմանն առնչվող խնդիրներին ժամանակին անդրադառնալու, համապատասխան և արդյունավետ միջոցներով նվազագույնի հասցնելու և/կամ մեղմացնելու համար, եթե լինեն այդպիսիք և երբ լինեն: Համաձայն ՀԲ-ի տարաբնակեցման քաղաքականության՝ բազմակի բաղադրիչներ ունեցող ծրագրերի համար պետք է մշակվի ՏՔՇ, եթե տարաբնակեցման չափն ու տեղավայրը հնարավոր չէ իմանալ գնահատման ժամանակ, ինչպես այս Ծրագրի դեպքում: ՏՔՇ-ն մշակվում է Հարկադիր տարաբնակեցման (ԳՔ 4.12) վերաբերյալ Համաշխարհային բանկի քաղաքականության և Հայաստանի Հանրապետության (ՀՀ) օրենսդրության պահանջների շրջանակներում:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1. Ծրագրի համատեքստը

3. «Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության հայեցակարգը» (2013թ.), որը հաստատվել է ՀՀ նախագահի կողմից², հայտարարում է, որ Հայաստանը որդեգրել է

¹ Հաստատվել է 2014 թվականի հուլիսին

² 23-ը հոկտեմբերի, 2013 թ., NK-182-N

կայուն տնտեսական զարգացման քաղաքականություն, որը ենթադրում է տնտեսության համընթաց զարգացում և այդ ենթատեքստում էներգետիկան, որպես կարևորագույն ոլորտ, կոչված է ապահովելու երկրի այնպիսի առաջընթաց, որը բնապահպանական խնդիրների համակարգման և հավասարակշռման միջոցով նախադրյալներ կստեղծի հաջորդ սերունդների կայուն զարգացման համար՝ միաժամանակ նվազեցնելով էներգիայի կորուստների մակարդակը: Քանի որ Հայաստանում բացակայում են սեփական հանածո վառելիքաէներգետիկ պաշարները, էներգետիկ անվտանգության ապահովումը պայմանավորված է տնտեսության էներգաարդյունավետության բարձրացմամբ, ատոմային էներգետիկայի զարգացմամբ և վերականգնվող էներգապաշարների արդյունավետ օգտագործմամբ:

4. Հայաստանը գտնվում է խիստ տեկտոնական և նոր հրաբխային պրոցեսների զարգացման գոտում: 1990-2000 թվականներին կատարվեցին մի շարք նախնական գնահատումներ դոնորների³ և ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության (ԷԲՊՆ) աջակցությամբ, որոնք հաստատեցին երկրաջերմային ռեսուրսների առկայությունը երկրի տարբեր մասերում և տեղորոշեցին այն պոտենցիալ տարածքները, որտեղ կարող էին լինել էներգիայի պիտանի ռեսուրսներ: Սակայն, այս գնահատումներից ոչ մեկ չէր ներառում մակերևույթի հետազոտման համակողմանի հետազոտական աշխատանքներ այդ տարածքներից որևէ մեկում:
5. Հայաստանի Երկրաջերմային էներգիայի ծրագիրը, որը հաստատվեց 2009 թվականին, միջոցներ տրամադրեց դաշտային համակողմանի հետազոտություններ անցկացնելու համար երկրաջերմային էներգիայի աղբյուրների առավել հնարավոր տարածքներում՝ Գրիձորում և Քարքարում հետազոտական հորատումների իրագործելիությունը գնահատելու համար: ՎԷԸՕ Ներդրումային ծրագրում (2014 թ.) Քարքարը ՀՀ կառավարության կողմից սահմանվել է որպես առավել խոստումնալից երկրաջերմային տարածք, քանի որ ուսումնասիրությունները վկայում են տեղանքում երկրաջերմային ռեսուրսների առկայության մասին: Այնուամենայնիվ, Քարքարը գտնվելով Հայաստանի Սյունիքի բարձրավանդակի հարավ-արևելյան մասում, պետք է հետագա հետազոտման ենթարկվի՝ պաշարների որակը և քանակը հաստատելու նպատակով:

1.2. Ծրագրի նկարագրությունը

6. Առաջարկվող Հայաստանի երկրաջերմային էլեկտրակայանի ծրագրի նպատակն է գնահատել Քարքարի տեղանքում երկրաջերմային պաշարները՝ էներգիայի արտադրության համար: Սահմանվել է հետևյալ շրջանակը՝ (i) մուտքային ճանապարհի, ջրամատակարարման ենթակառուցվածքի, հորատման հարթակի կառուցում և փորձնական հորատանցքերի հորատում, և (ii) տեխնիկական օժանդակություն, որը

³ Այդ թվում՝ USAID (1998), EBRD (2001) և GEF (2007).

ներառելու է հանքահորի կարոտած/հորի երկրաֆիզիկական ուսումնասիրությունն և արտանետվող գազերի կարոտած, հոսքի փորձաքննություն, քիմիական նյութերի նմուշառում և վերլուծություններ, հորատման աշխատանքների տեխնիկական վերահսկողություն, և (iii) առաջարկվող ծրագրի իրականացնող մարմնի՝ ՀՎԷԷ հիմնադրամի լրացուցիչ գործառնական ծախսերը: Ծրագրի ընդհանուր արժեքը գնահատվել է 2.4-11.45 մլն. ԱՄՆ դոլար՝ կախված հորատումների սցենարից: Ծրագրի ֆինանսավորման ընդհանուր հասանելի գումարը կազմում է 11.45 մլն. ԱՄՆ դոլար, ներառյալ՝ ՎԷԸԾ դրամաշնորհը՝ 8.55 մլն. ԱՄՆ դոլար և Կառավարության կողմից համաֆինանսավորումը՝ 2.90 մլն. ԱՄՆ դոլար:

7. Ծրագիրը բաղկացած է հետևյալ երկու բաղադրիչներից՝ հետախուզական հորատանցքերի հորատման և առնչվող շինարարական աշխատանքների բաղադրիչ և տեխնիկական օժանդակության բաղադրիչ:

Բաղադրիչ 1. Հետախուզական հորատանցքերի հորատման և առնչվող շինարարական աշխատանքներ

8. Այս բաղադրիչը կներառի՝ (i) մուտքային ճանապարհի կառուցում դեպի հորատման տարածք, (ii) ջրամատակարարման ենթակառուցվածքների կառուցում, (iii) հորատման հարթակի կառուցում և (iv) մեկ կամ երկու հորատանցքերի հորատում:
9. **Մուտքային ճանապարհի կառուցում.** միակ մատչելի ճանապարհը դեպի առաջարկվող հորատումների տեղանքը 18 կմ երկարությամբ և 2-3 մ լայնությամբ անհարթ ճանապարհն է, որն աստիճանաբար առաջացել է համայնքի անդամների կողմից խոտհարքի համար փոքր բեռնատարներով երթևեկելու հետևանքով: Կոպճային նյութից նախատեսվող մուտքային ճանապարհը պետք է ունենա անհրաժեշտ հնարավորությունները՝ ապահովելու ծանր բեռների տեղափոխումը, քանի որ հորատման հարթակի մոբիլիզացիայի, կոնտեյներների, նյութերի համար օգտագործվում են ծանր կցավագոններ և հարթակով բեռնատարներ: Բեռնատարների քանակը կարող է լինել 50-80-ի սահմաններում՝ կախված հորատման հարթակի տեսակից՝ առավելագույնը շուրջ 60 մետրական տոննա քաշով բեռնվածքով: Այսպիսի սարքավորումը տեղավորելու համար ճանապարհը պետք է ունենա նվազագույնը 4 մ լայնություն: Բացի այդ, խողովակների տեղադրումն առաջարկվող կոպճային ճանապարհի տակ նույնպես հարկ կլինի նախատեսել գարնանը այդ ճանապարհով անցնող ջրի հոսքի պատճառով:
10. **Ջրամատակարարման ենթակառուցվածքի կառուցում.** թարմ ջուրը դեպի հորատման հարթակ անհրաժեշտ է մատակարարել խողովակի միջոցով՝ հորատման գործողության ողջ ընթացքում: Սրա համար հնարավոր է, որ անհրաժեշտ լինի կառուցել փոքր ջրամբար, որը կապահովի ջրի հոսքի պահանջվող ինտենսիվությունը դեպի տարածք: Ջրի աղբյուրը գտնվում է նույն տարածքում՝ հորատման վայրից ավելի պակաս քան 1 կմ դեպի արևելք, որտեղ առկա են ջրի աղբյուրներ, որոնք կապահովեն

բավականաչափ հոսք տարվա չոր եղանակներին: Հորատման գործողությունների ավարտից անմիջապես հետո ամբարտակը կարող է հեռացվել:

11. **Հորատման հարթակի կառուցում.** կկառուցվի հորատման հարթակը, որը հարթ մակերևույթ է, որտեղ կտեղակայվեն հարթակը, համապատասխան սարքավորումները և հորատողների ճամբարը: Հորատման հարթակ պետք է կառուցվի հորատանցքերի համար ընտրված յուրաքանչյուր վայրում (այսինքն՝ յուրաքանչյուր հորի համար մեկ հատ):
12. **Փորձնական հորատանցքերի հորատում.** սա կներառի մեկ կամ երկու նեղ հորատանցքերի հորատում՝ 1500 -1800 մ, որից հետո կկառուցվեն միջին կամ արտադրական չափերի հորեր:

Բաղադրիչ 2. Տեխնիկական օժանդակություն

13. Այս բաղադրիչը
Ծրագրի շրջանակում կֆինանսավորի խորհրդատվական և ոչ խորհրդատվական ծառայությունները և կներառի (i) հանքահորի կարոտած/հորի երկրաֆիզիկական ուսումնասիրություն. այն կներառի հորատանցքերից հատված ապարների վերլուծությունը, հորի ջերմաստիճանի և ճնշման չափումները և կարևոր տվյալների հավաքագրումը (օրինակ՝ հորատման աշխատանքների առաջընթացը, հոսքագծի ջերմաստիճանի փոփոխությունները և այլն) և՛ հորատման ընթացքում, և՛ հորատման աշխատանքների յուրաքանչյուր փուլում, (ii) հոսքի փորձաքննություն, քիմիական տարրերի նմուշառում. այն ներառելու է հորի պոտենցիալ հզորության գնահատումը, հանքային ջրերի և գոլորշու հարաբերակցությունը և ջերմապարունակությունը: Այն կներառի նաև հանքային ջրերի նմուշառումը՝ պաշարների վերլուծության և էներգիայի արտադրության ընթացքում հնարավոր խնդիրների առաջացումը գնահատելու համար, ինչպես օրինակ՝ նստվածքները և/կամ կոռոզիան: Սա կօգնի որոշել, թե էներգիայի փոխակերպման ինչպիսի տեխնիկա պետք է օգտագործել: (iii) Հորատման աշխատանքների տեխնիկական վերահսկողության և իրականացմանն օժանդակող խորհրդատու. սա կներառի աջակցության ցուցաբերում ՀՎԷԷ հիմնադրամին հորատման աշխատանքների իրականացման և վերահսկողության առնչությամբ և հանքահորի կարոտածի, արտանետվող գազերի կարոտածի, հոսքի փորձաքննության և հորատանցքերից հատված ապարների քիմիական վերլուծության արդյունքների դիտարկումը, (iv) գործառնական խորհրդատվական ծառայություններ. սա կներառի աջակցություն Կառավարությանը՝ իրականացման գործընթացի կառուցվածքը սահմանելիս՝ մասնավոր հատվածին երկրաջերմային էներգիայի կայանների կառուցման և շահագործման աշխատանքներում ներգրավելու համար: (v) ՀՎԷԷ հիմնադրամի լրացուցիչ գործառնական ծախսերը. սա կներառի ՀՎԷԷ հիմնադրամի լրացուցիչ գործառնական ծախսերը, որոնք առնչվում են ծրագրի իրականացմանը:
14. Ծրագրի միջոցով ՀՀ կառավարությունը նպատակ ուներ նպաստել տեղավայրը մասնավոր սեկտորի վերածելու ռիսկերի նվազեցմանը: Տեղավայրում երկրաջերմային

պաշարների առկայության դեպքում, այս օժանդակությամբ կարելի է նպաստել, որպեսզի երկրաջերմային էներգիան մասնավոր ներդրողների համար ֆինանսական առումով գրավիչ ներդրումների պատճառ հանդիսանա, իսկ Հայաստանի ցանցի համար՝ էլեկտրականության մատչելի աղբյուր: Այն նաև ցույց կտա Հայաստանում ընդհանուր առմամբ երկրաջերմային էներգիա ստանալու իրագործելիությունը: Առաջին հաջողված ծրագիրը կարող է զարգացնել երկրի երկրաջերմային պաշարներ զարգացնելու ներքին կարողությունները Հայաստանում այլ հավանական երկրաջերմային տեղանքներում: Այն նաև վստահություն կներշնչի ներդրողներին, որ Հայաստանում երկրաջերմային էներգիայի ոլորտը ընձեռում է կենսունակ և շահութաբեր ներդրումների հնարավորություն:

15. Քարքարի Երկրաջերմային էներգիայի ծրագիրը կունենա մի շարք բնապահպանական և սոցիալական համատեղ օգուտներ: Մասնավորապես՝ (i) էներգիա ստանալու նպատակով հողօգտագործման նվազեցում. վերականգնվող էներգիա արտադրող այլ տեխնոլոգիաների համեմատությամբ (ինչպես օրինակ՝ արևային կամ քամու) երկրաջերմային էներգիայի նպատակով օգտագործվում է համեմատաբար փոքր հողատարածք, (ii) աղտոտիչ արտանետումների նվազեցում. երկրաջերմային էլեկտրակայանն ունի ներուժ՝ նվազեցնելու ջերմոցային գազերը, ինչպես նաև գազային էլեկտրակայանների կոշտ արտանետումները, (iii) աշխատատեղերի ստեղծում. կարճաժամկետ հնարավոր աշխատատեղերի ստեղծում երկրաջերմային տեղանքի հետախուզական աշխատանքների ընթացքում, հատկապես, մուտքային ճանապարհի շինարարական աշխատանքների ընթացքում, (iv) ենթակառուցվածքներ. մասնավորապես, Ծրագրի ընթացքում կառուցվելիք մուտքային ճանապարհը հետագայում կօգտագործվի համայնքի անդամների կողմից:

1.3. Տարաբնակեցման քաղաքականության շրջանակի պատրաստման տրամաբանական հիմնավորումը

16. Համաշխարհային բանկի ֆինանսավորումը ծրագրին կտրամադրվի այն պայմանով, որ Ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչ պետք է համապատասխանի (մյուսների շարքում) Հարկադիր տարաբնակեցման վերաբերյալ 4.12 (ՀԲ ԳՔ 4.12) Համաշխարհային բանկի Գործառնական քաղաքականության (ԳՔ) հետ: ՀԲ ԳՔ 4.12-ը մատնանշում է, որ ՏՔՇ-ն պետք է կազմվի, եթե տարաբնակեցման ծրագրի ազդեցությունների չափն ու տեղավայրը հնարավոր չէ իմանալ և սահմանել նախքան Ծրագրի գնահատումը, ինչպես այս Ծրագրի դեպքում:
17. Կատարվել է Ծրագրի բաղադրիչների գրավոր փաստաթղթերի վերանայում և վերլուծություն՝ բացահայտելու համար հնարավոր ազդեցությունների ամենահավանական շրջանակը և սահմանելու ամենահամապատասխան և ողջամիտ մեղմացնող միջոցառումները: Այնուամենայնիվ, մուտքային ճանապարհների,

ջրամատակարարման ենթակառուցվածքի, հորատման հարթակի վերջնական նախագիծը դեռևս պատրաստված չէ, հետևաբար անկանխատեսելի ազդեցությունները կարող են առաջանալ ծրագրի որոշակի գործողությունների արդյունքում: Որոշ ազդեցությունների առկայության դեպքում կարող են նաև պահանջվել ուրիշ, ավելի համապատասխան մեղմացնող միջոցառումներ, քան նկարագրված է սույն հաշվետվության մեջ: Հետևաբար, սույն ՏՔՇ-ի եզրակացությունները և առաջարկները կենթարկվեն փոփոխությունների, եթե դրա անհրաժեշտությունը լինի Ծրագրի իրականացման ընթացքում, որի մասին պետք է զեկուցվի համապատասխանաբար:

1.4. Տարաբնակեցման քաղաքականության շրջանակի նպատակն ու սկզբունքները

18. ՏՔՇ-ի նպատակն է կանխել և/կամ մեղմացնել հողօգտագործման կամ հողի օտարման հետ կապված ծրագրի գործողությունների իրականացման հետևանքով առաջացող, սոցիալական բնույթ ունեցող հնարավոր բացասական ազդեցությունները: ՏՔՇ-ի նպատակն է համառոտ նկարագրել ծրագիրը և այն բաղադրիչները, որոնց համար պահանջվում է հողերի օտարում և տարաբնակեցում, Ծրագրի իրավական շրջանակը՝ ներառյալ և՛ ՀՀ օրենսդրության, և՛ ՀԲ-ի ԳՔ4.12 պահանջները, ինչպես նաև առաջարկել քաղաքականությունների միջև եղած բացերը լրացնելու միջոցառումներ, որոշել իրավասության չափորոշիչները Ծրագրի ազդեցությանը ենթարկված անձանց (ԾԱԵԱ) տարբեր դասակարգումները սահմանելու համար, սահմանել փոխհատուցման մոտեցումները կորցրած գույքի նկատմամբ, ինչպես նաև ազդեցությանը ենթակա գույքը գնահատելու մեթոդները, նկարագրել տարաբնակեցման ծրագրերի մշակման և հաստատման ընթացքը, հստակեցնել տարաբնակեցման գործունեության ինստիտուցիոնալ, իրականացման և մոնիտորինգի նախապատրաստական աշխատանքները, սահմանել բողոքների լուծման մեխանիզմները, ԾԱԵԱ-ների հետ ունեցած հանրային լուումների/խորհրդատվական մեխանիզմները, նկարագրել տարաբնակեցման ֆինանսավորման հետ կապված պայմանավորվածությունները: Մասնավորապես, ՏՔՇ-ի նպատակն է այնպես ուղղորդել Տարաբնակեցման գործողությունների ծրագրերի (ՏԳԾ) մշակումը, որ տարաբնակեցման հետ կապված հետագա ցանկացած հարցերի դեպքում ծրագրի ազդեցությանը ենթարկված բոլոր անձինք իրենց կորուստների դիմաց ստանան փոխհատուցում՝ շուկայական գնով հաշվարկված փոխարինման արժեքով, և կիրառվեն վերականգնման միջոցառումներ, որպեսզի վերականգնվի նախքան Ծրագրի իրականացումը ԾԱԵԱ-ների ունեցած կենսամատակարարակը:
19. Ծրագիրը կընթանա այն սկզբունքով, ըստ որի հնարավորինս պետք է խուսափել կամ նվազագույնի հասցնել հարկադիր տարաբնակեցումը՝ հետազոտելով և բացահայտելով

ծրագրի նախագծի բոլոր գործող այլընտրանքային տարբերակները⁴: Եթե հարկադիր տարաբնակեցումն անխուսափելի է, տարաբնակեցման գործողությունները պետք է ծրագրվեն և իրականացվեն որպես կայուն զարգացման ծրագրեր՝ ապահովելով բավականաչափ ներդրումային ռեսուրսներ, որպեսզի տարաբնակեցված կամ ծրագրի բացասական ազդեցություններին ենթարկված անձինք կարողանան օգտվել ծրագրի օգուտներից: Բացի այդ, վերաբնակեցված անձանց հետ պետք է անցկացնել իմաստալից խորհրդատվություններ և նրանց ընդգրկել տարաբնակեցման ծրագրերի ծրագրման ու իրականացման գործընթացներում, ինչպես նաև նպաստել նրանց ապրելակերպի բարելավմանն ու կենսամակարդակի բարձրացմանը կամ առնվազն վերականգնել նրանց նախկին վիճակը՝ հասցնելով նրանց մինչև վերաբնակեցումը կամ մինչև Ծրագրի իրականացումն ունեցած կենսամակարդակին, որը որ ավելի բարենպաստ էր: Այս սկզբունքները և դրանցից բխող տարաբնակեցման միջոցառումները վերաբերում են Ծրագրին և դրա բոլոր բաղադրիչներին՝ անկախ նրանից տարաբնակեցման խնդիրների ծավալն ու բարդությունը պահանջում են տարաբնակեցման ծրագրերի մշակում, թե ոչ:

1.5. Տարաբնակեցման տեսակն ու ծավալը Ծրագրի շրջանակում

20. Ծրագրի շինարարական աշխատանքները, մասնավորապես՝ մուտքային ճանապարհը դեպի հորատումների տեղամաս, ջրամատակարարման ենթակառուցվածքներ և հորատման հարթակ, կիրականացվեն Շոուկ, Սպանդարյան և Սառնակունք գյուղական համայնքների⁵ սահմանային տարածքում: Ծրագրի այս փուլում դժվար է հստակ տեղեկություններ իմանալ տարաբնակեցման հնարավոր ազդեցությունների վերաբերյալ, որոնք կարող են առնչվել առաջարկվող գործողություններին, քանի որ նախագիծը դեռևս պատրաստված չէ: Հավանաբար, ճանապարհը կհետևի գոյություն ունեցող ծրագծին. միակ մատչելի ճանապարհը դեպի առաջարկվող հորատումների տեղանքը 18 կմ երկարությամբ և 2-3 մ լայնությամբ անհարթ ճանապարհին է, որն աստիճանաբար առաջացել է համայնքի անդամների կողմից խոտհարքի համար փոքր բեռնատարներով երթևեկելու հետևանքով: Այս դեպքում այն կառաջացնի աննշան գծային ազդեցություն՝ առանց որևէ զգալի ազդեցության: Ջրամատակարարման ենթակառուցվածքի և հորատման հարթակի տեղակայման համար անհրաժեշտ կլինի նոր ծրագիծ: Թեև նախագիծը դեռևս պատրաստված չէ, կադաստրային քարտեզների ուսումնասիրությունները և դաշտային այցելությունները Քարքարի տեղանք, համալրվեցին համայնքապետերի հետ հարցազրույցներով՝ ազդեցության նախնական գնահատման համար: Արդյունքները բերված են ստորև:

⁴ Հարկադիր տարաբնակեցման վերաբերյալ Համաշխարհային բանկի Գործառնական քաղաքականությունը (ՀԲ ԳՔ 4.12), 2002 թ.-ի հունվար, էջ1

⁵ Շինարարական աշխատանքները նախատեսվում են Բաղադրիչ 1-ի ներքո: Բաղադրիչ 2-ը չի ներառում այնպիսի գործողություններ, որոնք կպահանջեն հողի օգտագործում կամ օտարում:

1.5.1. Հողի օգտագործումը և կառույցները

21. Ծղուկ և Սպանդարյան համայնքների կաղաստրային քարտեզների ընդհանուր ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ Քարքարի տեղավայրում (ներառյալ՝ բլրի ստորոտը, որտեղ պետք է կառուցվի մուտքային ճանապարհը, երկրաջերմային տարածքը) հիմնականում համայնքային հողեր են: Գոյություն ունեցող մուտքային ճանապարհն անցնում է մոտ 50 մասնավոր սեփականատերերի պատկանող հողակտորներով, որոնք ցրված են, ինչը հնարավորություն կընձեռի նախագծողին նվազագույնի հասցնել ազդեցությունը սեփականատերերին պատկանող հողակտորների վրա և հնարավոր դեպքերում խուսափել հողի օտարումից կամ հողի օգտագործմանը որևէ կերպ միջամտելուց: Այնուամենայնիվ, նախագծողը պետք է ուսումնասիրի կաղաստրային քարտեզները, սերտորեն համագործակցի տեղական իշխանությունների հետ և կատարի երկրաբանական հետազոտություն: Ծղուկի համայնքապետի հետ հարցազրույցի տվյալներով բլրի բարձրադիր մասում⁶ կան շուրջ 10 վարձակալված հողակտորներ: Այս հողակտորների վրա Ծրագրի ազդեցությունից նույնպես կարելի է խուսափել նախագծային թիմի և տեղական իշխանությունների սերտ համագործակցության շնորհիվ: Դաշտային այցելությունների ընթացքում դիտարկեցինք, որ հարակից որոշ հողերում համայնքի անդամները զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ, թեև թվում էր, որ դրանց մեծ մասը չէր օգտագործվում մշակաբույսերի աճեցման համար: Քանի որ տեղանքը ժայռային բլուր է՝ խիստ թեթև լանջերով, այն պիտանի չէ մշակման համար:
22. Հողակտորները համայնքի անդամների կողմից օգտագործվում են խոտհարքի համար և որպես արոտավայրեր: Հովիվներն արոտավայրերում արածեցնում են համայնքի



անդամներին պատկանող ոչխարներին: Սովորաբար, նրանք բարձրանում են սարերը և մնում 6-8 ամիս: Նրանք վրան են տեղադրում և օգտագործում գոյություն ունեցող կառուցվածքները (բետոնե խողովակներ, հորեր/բունկերներ և այլն) իրենց առօրյա կյանքը կազմակերպելու համար: Կառուցվածքները տեղակայված են գոյություն ունեցող

⁶ Ըստ կաղաստրային քարտեզի տվյալների՝ այն տեղակայված է մուտքային ճանապարհի սկզբնամասից 5 կմ հեռավորության վրա:

ճանապարհի կողքին, սակայն դրանք ցրված են և նոր նախագծված ճանապարհը կարող է հեշտությամբ շրջանցել դրանք:

23. Համայնքի անդամները հիմնականում զբաղվում են անասնապահությամբ, հետևաբար,



համայնքային հողերից հավաքված խոտն ապրուստի կարևոր աղբյուր է: Մուտքային ճանապարհը կառուցելուց հետո համայնքի անդամները կկարողանան օգտագործել բարելավված ճանապարհը՝ խոտը մեքենաներով տեղափոխելու համար:

24. Մի շարք անավարտ շինություններ և մեկ մետաղական շարժական կրպակ գտնվում են նախատեսված ճանապարհից 30-50 մ հեռավորության վրա: Մեկ տնային տնտեսություն



օգտագործում է մետաղական շարժական կառույցը առանց իրավական գրանցման, որը գտնվում է մուտքային ճանապարհի սկզբնամասից 30 մ հեռավորության վրա: Ոռոգման ենթակառուցվածքը, ինչպես նաև չօգտագործվող ոռոգման ենթակառուցվածքի մնացորդները, բետոնե մի քանի գեոդեզիական կետեր գտնվում են ճանապարհի կողքին: Ընտրված ծրագիծը կարող է և պետք է շրջանցի այդ բոլորը:

1.5.3. Մշակաբույսեր և ծառեր

25. Չկան մշակաբույսեր կամ ծառեր ազդեցության հնարավոր տարածքում:

1.5.4. Եզրակացություն

26. Այս գլխում ցույց տրվեց, որ ծրագրային տարածքում համայնքին պատկանող հասանելի հողերը և ցրված մասնավոր սեփականություն հանդիսացող հողակտորները, կառույցները, այդ թվում՝ անավարտ և իրավական գրանցում չունեցող կառուցվածքները նախագծողներին թույլ կտան խուսափել կամ նվազագույնի հասցնել ազդեցությունը մասնավոր սեփականության և/կամ օգտագործվող հողերի վրա՝ ծրագիծը և ենթակառուցվածքի տեղադիրքն ընտրելիս: Այնուամենայնիվ, ազդեցության վերջնական գնահատումը պետք է իրականացվի կասեցման օրը սահմանելու պահի դրությամբ՝ ՏՔՇ-ում նկարագրված ընթացակարգի համաձայն, որը պետք է կատարվի ծրագրի նախագծային փուլում: Այնուամենայնիվ, քիչ հավանական է, որ կառաջանան զգալի սոցիալական ազդեցություններ: Չի ակնկալվում, որ ծրագիրը կպահանջի հողի հարկադիր օտարում, ԾԱԵԱ-ների ֆիզիկական տեղահանում կամ որևէ զգալի ազդեցություն ԾԱԵԱ-ների կենսամակարդակի և եկամտի վրա:
27. Թեև չի ակնկալվում, որ ծրագիրը կպահանջի մասնավոր հողի կորուստ, շինարարության ընթացքում հնարավոր է ժամանակավոր կամ մշտական ազդեցություն համայնքային հողերի վրա շինարարական աշխատանքները (մեքենաներ/մեխանիզմներ, շինարարական աղբ), շինարարական ճամբարները կազմակերպելու հետևանքով: Համայնքային կամ մասնավոր հողերի վրա ժամանակավոր կամ մշտական ազդեցությունների դեպքում, կնախաձեռնվեն մի շարք միջոցառումներ՝ համայնքի և ԾԱԵԱ-ների վրա բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար: Նախագծի մշակման ընթացքում բացի մուտքային ճանապարհի լայնացման, ջրամատակարարման համակարգի և հորատման հարթակի համար անհրաժեշտ հողերից, հնարավորության դեպքում կտեղորոշվեն նաև այն վայրերը, որոնք հնարավոր է, որ ազդեցություն կկրեն շինարարության ընթացքում դեպի շինհրապարակ մուտք գործելու կամ շինարարական մեխանիզմների շահագործման հետևանքով և այլն, և փոխհատուցումը կվճարվի համաձայն սույն ՏՔՇ-ի: Ի լրումն, ՀՎԷԷ հիմնադրամը կփոխհատուցի ցանկացած կորստի համար, որն առաջանում է ծրագրի գործողությունների արդյունքում՝ սույն ՏՔՇ-ով սահմանված սկզբունքների և դրույթների հիման վրա:

2. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿ

28. Մի քանի հաստատություններ՝ յուրաքանչյուրն իր առանձնակի դերերով ու պարտավորություններով հանդերձ, պատասխանատվություն կկրեն ՏԲԾ-ի սկզբունքների և նպատակների վերահսկման և իրականացման համար, հատկապես՝ հետագա ՏԳԾ(ներ)ը մշակելիս և իրականացնելիս: Ներգրավված հաստատությունների գործառնական դերերը թվարկված են ստորև:

2.1. Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ

29. Վերականգնվող էներգետիկայի ոլորտում Հայաստանի Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը (ՀՎԷԷ հիմնադրամ) վճռորոշ դեր ունի: ՀՎԷԷ հիմնադրամն անկախ կազմակերպություն է, որը նպաստում է վերականգնվող էներգետիկայի ոլորտում ներդրումների կատարմանը՝ հովանավորելով վերականգնվող էներգետիկային առնչվող ուսումնասիրություններն ու ծրագրերը և աջակցելով վերականգնվող էներգետիկայի տեղական կազմակերպություններին և շահառուներին: Մի շարք այլ ծրագրերի շարքում ՀՎԷԷ հիմնադրամն իրականացրել է Հայաստանում հիդրոէլեկտրակայանների զարգացմանն ուղղված ծրագիր, Քարքարի երկրաջերմային տեղանքի մակերևույթի համակողմանի հետազոտական աշխատանքներ, ինչպես նաև հիդրոէներգետիկ ռեսուրսների ներուժի և արևային ՖՎԿ համակարգի և բիոէթանոլի արտադրության և վերականգնվող էներգետիկային առնչվող այլ ուսումնասիրություններ:

30. ՀՎԷԷ հիմնադրամը պատասխանատվություն է կրում Ծրագրի ընդհանուր կառավարման, այդ թվում՝ բոլոր գնումների գործընթացների, ֆինանսական կառավարման, հաշվետվությունների, մոնիտորինգի և գնահատման պարտավորությունների վերաբերյալ: ՀՎԷԷ հիմնադրամը պատասխանատվություն է կրում ՏԲԾ-ի ներքո բոլոր գործողությունների ընդհանուր վերահսկողության և մոնիտորինգի իրականացման համար: ՀՎԷԷ հիմնադրամի բնապահպանության և սոցիալական անվտանգության մասնագետները պատասխանատու են անվտանգության միջոցառումների կառավարման համար: ՀՎԷԷ հիմնադրամը կուղղորդի, կվերահսկի բաղադրիչների առաջընթացը և հաշվետվություններ կպատրաստի դրանց վերաբերյալ: Այն կգրադվի տարաբնակեցման խնդիրներով, որոնք պահանջում են տեղական իշխանությունների կողմից գործողությունների նախաձեռնում և համակարգում: Տարբեր խորհրդատուներ կարող են աջակցություն ցուցաբերել ՀՎԷԷ հիմնադրամին տարաբնակեցմանն առնչվող առաջադրանքներն ու գործողություններն իրականացնելիս, մասնավորապես՝

a. Նախագծային խորհրդատուն (ՆԽ) կմշակի Ծրագրի նախագծերը: ՆԽ-ն պատասխանատու կլինի ծրագրի ծրագծի որոշման և տեղադիրքի համար, որը պետք է

լինի ՏՔՇ-ի սկզբունքների համաձայն՝ Ծրագրի ազդեցություններից խուսափելու կամ դրանք նվազագույնի հասցնելու համար: ՆԽ-ն պարտավոր կլինի նախագծման փուլում տվյալներ հավաքագրել ազդեցության ենթարկված հողակտորների, գույքի, ԾԱԵԱ-ների և նրանց ընտանիքների/տնային տնտեսությունների վերաբերյալ՝ մարդահամարի և սոցիալ-տնտեսական հետազոտության նպատակով, ինչպես նաև տարածել Ծրագրին և բաղադրիչներին առնչվող տեղեկությունները: Այս նպատակներով ՆԽ-ն կարող է ունենալ անվտանգության մասնագետ:

Ե. Արտոնագրված գնահատողի հետ կկնքվի ժամանակավոր պայմանագիր, ով կիրականացնի ազդեցությանը ենթարկվող գույքերի գնահատում և փոխհատուցման հաշվարկում՝ ՀՀ գնահատման օրենքների և չափանիշների, ՀԲ ԳՔ 4.12-ի և սույն ՏՔՇ-ի համաձայն, ըստ անհրաժեշտության:

2.2. Պետական կառավարման մարմիններ

2.2.1. Նախարարություններ և կոմիտեներ

31. Նախարարություններն ու կոմիտեները, որոնց հետ ՀՎԷԷ հիմնադրամը կհամագործակցի և կհամակարգի տարաբնակեցման խնդիրները, ներկայացված են ստորև՝ իրենց հիմնական համապատասխան գործառույթներով: Բոլոր նախարարությունները կարող են մասնակցել ՏԳԾ-ի մշակման գործընթացի վերաբերյալ խորհրդակցություններին:

ՀՀ տարածքային կառավարման նախարարություն (ՏԿՆ)

32. ՏԿՆ-ն ունի հետևյալ դերերն ու պարտականությունները, որոնք կարող են վերաբերել տարաբնակեցման հետ կապված խնդիրներին՝ (i) տարածքային կառավարման քաղաքականության դրույթների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների սոցիալ-տնտեսական զարգացման մասին օրենքների, ծրագրերի և նախագծերի մշակում ու կիրարկում՝ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով, (ii) պետական ջրային ենթակառուցվածքի կառավարում և անվտանգ ու ապահով օգտագործում, (iii) ջրային ենթակառուցվածքի ներդրումային քաղաքականության մշակում և իրականացում, ներդրումային քաղաքականության փորձաքննության կազմակերպում, (iv) միզբացիոն գործընթացների պետական կարգավորման մասին քաղաքականության մշակում և իրականացման համակարգում; (v) պետական մոբիլիզացման պահուստների ձևավորում ու կառավարում, և այլն:

33. ՏԿՆ-ն տարածքում պետական լիազոր մարմինն է, որը կարող է ունենալ, սակայն սահմանափակված չլինել ՏԳԾ գործընթացում հետևյալ դերակատարմամբ՝ (i) աջակցություն ՏԳԾ-ի մշակման և իրականացման գործընթացում՝ տարաբնակեցման

գործողություններում պետական լիազոր մարմնի լիազորությունների ներք; (ii) Բողոքների լուծման հանձնաժողովի անդամ, եթե կիրառելի է, և այլն:

ՀՀ բնապահպանության նախարարություն (ԲՆ)

34. ՀՀ ԲՆ-ն պատասխանատու է բոլոր բնական ռեսուրսների պաշտպանության և պահպանման համար հետևյալ միջոցներով՝ (i) մթնոլորտային օդի, ջրի, հողի և հանքային ռեսուրսների արդյունավետ կառավարման, օգտագործման և պահպանման մասին պետական քաղաքականության մշակում, կառավարում և իրականացում, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական ազդեցությունների մեղմում և կանխարգելում, (ii) բնապահպանական օրենսդրության մշակում և կիրարկում, այդ թվում՝ բնապահպանական նորմեր և ստանդարտներ, թույլտվություններ և դրանց հետ կապված վճարներ ու պահումներ և այլն:

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն (ԷԲՊՆ)

35. ՀՀ ԷԲՊՆ-ն պատասխանատու է բնական պաշարների պահպանման, կայուն օգտագործման և վերականգնման համար և իրականացնում է իր համապատասխան գործառույթները Օգտակար հանածոների պաշարների գործակալության և Ընդերքի տրամադրման գործակալության միջոցով:

ՀՀ առողջապահության նախարարություն (ԱՆ)

36. ՀՀ ԱՆ-ն պատասխանատու է տարբեր նպատակներով հողի օգտագործման գոտիների սանիտարական պահպանման մասին քաղաքականության սկզբունքների մշակման և կիրարկման համար:

ՀՀ մշակույթի նախարարություն (ՄՆ)

37. ՀՀ ՄՆ-ն մշակում է պատմամշակութային հուշարձանների գույքագրման, պահպանման, օգտագործման սկզբունքները, պարամետրերը, նորմերը, ինչպես նաև հաստատում է մշակութային և պատմական հուշարձանների պահպանության գոտիների նախագծերն ու պաշտպանության ռեժիմները:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն (ԱԻՆ)

38. ՀՀ ԱԻՆ-ը մշակում և իրականացնում է ՀՀ կառավարության քաղաքականությունը արտակարգ իրավիճակներում բնակչության քաղաքացիական պաշտպանության ոլորտում: ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համակարգում գործող կառուցվածքային մարմիններից է «Հայաստանի հիդրոոդերևութաբանական և մոնիտորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ը:

ՀՀ քաղաքաշինության նախարարություն (ՔՆ)

39. ՀՀ ՔՆ-ն մշակում է հողերի որոշ տեսակների օգտագործման քաղաքաշինական սահմանափակումների և նորմերի հաստատման վերաբերյալ քաղաքականության դրույթները, որոնք սահմանվում են Հողային օրենսգրքի պահանջների համաձայն:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե (ԱԳԿՊԿ)

40. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն ունի հետևյալ դերերն ու պարտականությունները, որոնք կարող են վերաբերել տարաբնակեցման հետ կապված խնդիրներին՝ (i) անշարժ գույքի (այդ թվում՝ հողի) միասնական ազգային կադաստրի պետական քաղաքականության մշակում և իրականացում, (ii) իր իրավասության շրջանակներում հողային ռեսուրսների կառավարման և օգտագործման քաղաքականության սկզբունքների մշակում, հողի օգտագործման պետական վերահսկողության իրականացում՝ աջակցելու հողային իրավունքների ինստիտուտի և հողի շուկայի ստեղծմանը, (iii) կադաստրային, այդ թվում՝ հողերի քարտեզների մշակում, (iv) անշարժ գույքի տեղեկատվական համակարգի ստեղծում և սպասարկում և կադաստրային տվյալների տրամադրում; (v) անշարժ գույքի իրավունքների պետական գրանցում, (vi) ՀՀ հողային ֆոնդի հողային հաշվեկշռի ձևավորում և հողերի դասակարգում՝ ըստ տեսակների, (vii) անշարժ գույքի, այդ թվում՝ հողերի կադաստրային գնահատում, (viii) անշարժ գույքի համար բազային հարկի սահմանում, այդ թվում՝ հողի հարկ:

41. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն ունի իր տարածքային ստորաբաժանումները և սերտորեն աշխատում է տեղական ինքնակառավարման մարմինների հետ: ՏԳԾ-ի մշակման ընթացքում պետք է խորհրդակցել կադաստրի հետ, մասնավորապես, կապված ԾԱԵԱ-ների գույքի և սեփականության իրավունքի ճանաչման և հաստատման հետ, գույքի և սեփականության իրավունքի գրանցման և վերագրանցման հետ և այլն:

2.2.2. Մարզպետարաններ (Տարածքային ինքնակառավարման մարմիններ)

42. Մարզպետարաններն իրականացնում են ՀՀ կառավարության մարզային քաղաքականությունը հետևյալ ոլորտներում՝ ֆինանսներ, քաղաքաշինություն, տնային տնտեսություններ և կոմունալ ծառայություններ, տրանսպորտ ու ճանապարհաշինարարություն, գյուղատնտեսություն և հողօգտագործում, կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն, մշակույթ և սպորտ, բնություն և բնապահպանություն, առևտուր, հասարակական սնունդ և սպասարկում: Մարզային քաղաքականությունը վերոնշյալ ոլորտներում իրականացվում է մարզպետարանների,

ինչպես նաև համապատասխան մարզի ենթակայության տակ գտնվող կազմակերպությունների միջոցով: Հողային հարաբերությունների կարգավորման հարցում տեղական ինքնակառավարման մարմինների դերի համառոտ նկարագիրը հետևյալն է՝

a. բնակեցման հիմնական ծրագրերի մշակում և հողերի գոտիավորման ու օգտագործման մեխանիզմների իրականացում համայնքի վարչական տարածքի շրջանակներում՝ համաձայն սահմանված ընթացակարգերի,

b. ըստ հիմնական բնակեցման ծրագրերի, համայնքի վարչական տարածքի շրջանակներում և սահմանված ընթացակարգերի համաձայն, հատկացնել և օտարել համայնքին և պետությանը պատկանող հող՝ «Մեփականաշնորհման մասին» օրենքի համաձայն;

c. տնօրինել համայնքին պատկանող հողը՝ ըստ «Մեփականության մասին» օրենքով նախատեսված ընթացակարգերի,

d. իրականացնել՝ (i) հողի շարունակական գրանցում, (ii) համայնքային հողերի օգտագործման համար հողային հարկերի և վարձավճարների գանձում, (iii) հողի օգտագործման նկատմամբ վերահսկողություն և օգտագործման նկատմամբ սահմանափակումների պահպանման ապահովում, (iv) օրենքով սահմանված այլ լիազորություններ:

e. Աջակցություն՝ (i) հողի պետական գրանցում, (ii) համայնքների վարչական տարածքներին հատկացված հողի պաշտպանության ապահովում, (iii) բնապահպանական և պատմամշակութային նորմերի կատարում ու դրանց ուղղված միջոցառումների իրականացում, (iv) անտառածածկ տարածքների օգտագործման մեխանիզմների հանրապետական և տարածքային ծրագրերի իրականացում:

43. Մարզպետարանների ներկայացուցիչները կարող են ներգրավվել Բողոքների լուծման հանձնաժողովում և ՏԳԾ-ի պատրաստման ու իրականացման ընթացքում կարող են դիմել նրանց խորհրդին՝ որպես հողային հարաբերությունները կարգավորող մարզային պետական մարմինների:

2.3. Տեղական ինքնակառավարման մարմիններ

44. Համայնքային իշխանությունները⁷ (Տեղական ինքնակառավարման մարմինները (ՏԻՄ)) կարևոր դեր կխաղան թե՛ Ծրագրի ընդհանուր իրականացման, թե՛ տարաբնակեցմանն առնչվող գործողությունների կատարման ընթացքում: ՏԻՄ-երն իրենց իրավասության շրջանակներում ակտիվորեն կներգրավվեն տարաբնակեցման նախապատրաստական

⁷ Ծղուկ, Սպանդարյան և Սառնակունք գյուղական համայնքների տեղական ինքնակառավարման մարմինները

աշխատանքներում և իրականացման գործընթացներում՝ սկսած նախագծման նախապատրաստական փուլից, մասնավորապես՝ ազդեցությանը ենթարկված հողակտորների սեփականության կարգավիճակի, ԾԱԵԱ-ների և այլնի բացահայտման գործընթացներում: Նրանց հետ կանցկացվեն հանրային լուսմներ, և նրանք, որպես միջնորդներ, կներգրավվեն բողոքների և դժգոհությունների լուծման գործընթացներում նախքան այդ դժգոհությունները Բողոքների լուծման հանձնաժողովին ներկայացնելը: Համայնքային իշխանությունները ծրագրային գործունեության նպատակով, այդ թվում՝ մուտքային ճանապարհների, շինարարական ճամբարների, խողովակների նոր ծրագծի համար և այլն, կարող են նաև տրամադրել համայնքին պատկանող հողերը ժամանակավոր օգտագործման նպատակով կամ մշտապես օտարել դրանք: Այդպիսի դեպքերում ՏԻՄ-երը հանդես են գալիս որպես համայնքային հողերի օտարման/օգտագործման պայմանագրերի կողմ:

2.4. Տարաբնակեցման գործողությունների ծրագրի իրականացման գրասենյակ

45. Եթե տարաբնակեցման ծավալները զգալի են, և ՀՎԷԷ հիմնադրամն ի վիճակի չէ իրականացնել առնչվող բոլոր գործողությունները, Տարաբնակեցման գործողությունների ծրագրի իրականացման բաժինը (ՏԳԾԻԲ), որը ՀՎԷԷ կողմից լիազորված մարմին է, կարող է իրականացնել տարաբնակեցման գործողություններ: Որոշումը կկայացվի ՏԳԾ-ի մշակման փուլում: Եթե անհրաժեշտ է և երբ անհրաժեշտ է, ՏԳԾԻԲ –ը կապահովի վերահսկողության և խորհրդատվական ծառայություններ՝ ՏԳԾ-ի իրականացման գործում ԾԻԳ-ին աջակցելու նպատակով (Մանրամասները ներկայացված են Գլուխ 5.5-ում):

2.5. Բողոքների լուծման հանձնաժողով

46. Բողոքների լուծման հանձնաժողովը (ԲԼՀ) կստեղծվի ծրագրային մակարդակում՝ տարաբնակեցման հարցերին առնչվող դժգոհությունները և բողոքները լուծելու նպատակով՝ փորձելով կանխել տարաձայնությունների լուծումը դատական կարգով (մանրամասները ներկայացված են Գլուխ 6-ում):

2.6. Հասարակական կազմակերպություններ

47. Հայաստանում և, մասնավորապես՝ ծրագրին առնչվող տարածաշրջանում գործող հասարակական կազմակերպությունները (ՀԿ-ներ) սերտորեն ներգրավված են

համայնքային կյանքում: Մասնավորապես, ՀԿ-ներն⁸ օգնում են լուծել համայնքային խնդիրները, պաշտպանել խոցելի խմբերի շահերը, պաշտպանել շրջակա միջավայրը, ապահովել հիմնական սոցիալական ծառայությունները, կազմակերպել տեղեկատվական քարոզարշավներ և այլն: ՀԿ-ները ներգրավված կլինեն Ծրագրի տարաբնակեցմանն առնչվող յուրաքանչյուր գործողությունում, ներառյալ՝ յուրաքանչյուր ՏԳԾ-ի մշակման և իրականացման գործընթացներին: Մասնավորապես, ՀԿ-ները կհրավիրվեն մասնակցելու բոլոր հանրային լսումներին, որոնք կկազմակերպվեն ազդեցության ենթակա համայնքներում՝ գործընթացի վերաբերյալ իրենց տեսակետներն ու առաջարկությունները ներկայացնելու, ինչպես նաև, ցանկության դեպքում, ԾԱԵԱ-ին աջակցություն ցուցաբերելու նպատակով:

2.7. Համաշխարհային բանկ

48. ՀԲ-ն կլինի Ծրագրի ֆինանսավորող մարմինը: Ծրագրի պարբերական վերահսկողությունն իրականացնելուց բացի, ՀԲ-ն կդիտարկի և կհաստատի Ծրագրի ՏԳԾ-ները, Պաշտոնական ստուգման հաշվետվությունները, Համապատասխանության հաշվետվությունները:

⁸ Ծրագրային տարածքում աշխատող ՀԿ-ների անվանացանկը ներկայացված է Հավելված 11-ում:

3. 3. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ

3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը

49. Հայաստանի Հանրապետությունում հողի օտարման և տարաբնակեցման հարցերին առնչվող իրավական դաշտը հիմնականում բաղկացած է հետևյալ իրավական ակտերից՝

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունվել է 1995 թ., փոփոխվել է 2005 թ.),
- Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին օրենք (ընդունվել է 27.11.2006 թ., ուժի մեջ է մտել 30.12.2006 թ., փոփոխվել է 2014 թ.),
- Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք (ընդունվել է 02.05.2001 թ., ուժի մեջ է մտել 15.06.2001թ.),
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք (ընդունվել է 05.05.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ.), Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին օրենք (ընդունվել է 04.10.2005 թ., ուժի մեջ է մտել 26.11.2005 թ.),
- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք (ընդունվել է 17.06.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999 թ.),
- ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք (ընդունվել է 28.11.2007, ուժի մեջ է մտել 01.01.2008 թ.):

Սահմանադրությունը

50. ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածը (այսուհետև՝ Սահմանադրություն), ընդհանուր առմամբ, ընդունում է, որ գույքային իրավունքը (սեփականության իրավունքը) ճանաչվում և պաշտպանվում է Հայաստանի Հանրապետությունում: Սահմանադրության 31-րդ հոդվածը սահմանում է, որ գույքը կարող է օտարվել հասարակության և պետական կարիքների համար միայն բացառիկ՝ գերակա հանրային շահի դեպքում՝ համաձայն օրենքով սահմանված կարգի և համապատասխան փոխհատուցման հիման վրա: Այս համատեքստում հատուկ ուշադրություն պետք է դարձնել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածին, որը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ հանրության շահի և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով և ընդհանուր միջազգային իրավունքի սկզբունքներով»:

Քաղաքացիական և հողային օրենսգրքեր

51. Թեև հողը/սեփականությունը օտարելու գործընթացը հիմնականում ղեկավարվում է վերոնշյալ օրենքով, սակայն կա հարցերի մի առանձին խումբ, որոնք կարող են առաջանալ ծրագրի իրականացման ընթացքում ուրիշի գույքի սահմանափակ օգտագործման հետ կապված: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և հողային օրենսգրքերն անդրադարձել են այս հարցերին:
52. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 210-րդ հոդվածը (ինչպես նաև Հողային օրենսգրքի 50-րդ հոդվածը) սահմանում են, որ հողատարածքի սեփականատերերը/օգտագործողները կարող են պահանջել իրենց հարևան հողատարածքի սեփականատիրոջից կամ այլ հողատարածքների սեփականատերերից իրենց շնորհել այդ հողատարածքների սահմանափակ օգտագործման իրավունքը (սերվիտուտ): Սերվիտուտը կարող է հաստատվել հարևան հողամասի միջով քայլելու և ձիով անցնելու, էլեկտրաէներգիայի գծերի տեղադրման և շահագործման, հաղորդուղիների և խողովակաշարերի, ջրամատակարարման և մեխորացիայի համար: Սերվիտուտը կարող է լինել կամավոր կամ պարտադիր, եթե կողմերի միջև սերվիտուտի համաձայնություն չի կայանում: Քաղաքացիական օրենսգրքի 212 (3) հոդվածը նախատեսում է, որ խողովակաշարերի, հանրային կարիքներին ծառայելու համար ստեղծվող ինժեներատեխնիկական ենթակառուցվածքների պահպանման և սպասարկման համար պետք է ստեղծվի պարտադիր մշտական անվճար սերվիտուտ: Սերվիտուտը ենթակա է պետական գրանցման օրենքով նախատեսված կարգով:

Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին օրենքը

53. Հողը/սեփականությունը օտարելու ու տարաբնակեցման հարցերին վերաբերող ամենակարևոր իրավական ակտը Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին օրենքն է (Գերակա հանրային շահի մասին օրենքը). Գերակա հանրային շահի մասին օրենքը սահմանում է այն դեպքերը, երբ պետք է իրականացվի գույքի օտարում և օտարման իրականացման գործընթաց: Այն կիրառվում է բոլոր օբյեկտների նկատմամբ (անշարժ և շարժական գույք, սեփականության իրավունքի, արժեթղթեր և այլն), որոնք սեփականության իրավունքով պատկանում են ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև համայնքներին, որոնք պաշտոնապես գրանցված են ՀՀ-ում՝ օրենքով սահմանված կարգով:
54. Օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է բացառիկ՝ գերակա հանրային շահը որպես օտարման սահմանադրական հիմք և սահմանում է խնդրո առարկա օտարման իրականացման հետևյալ պահանջները՝ ա) օտարում՝ օրենքով սահմանված կարգի համաձայն և բ) օտարվող գույքի դիմաց պետք է տրվի նախնական համարժեք փոխհատուցում: Ավելին, այն սահմանում է, որ հասարակության և պետության կարիքը չի կարող համարվել բացառիկ՝ գերակա հանրային շահ, եթե օտարման նպատակի

իրագործումը չի սկսվելու բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին Կառավարության համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ յոթ տարվա ընթացքում:

55. Օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է այն սկզբունքները/պայմանները, որոնց համաձայն պետք է որոշվի բացառիկ՝ գերակա հանրային շահը: Այսպիսով, օրենքը սահմանում է, որ (i) հանրային շահը պետք է գերակա լինի օտարվող սեփականության սեփականատիրոջ շահերից, (ii) գերակա հանրային շահի արդյունավետ իրագործումը չի կարող ապահովվել առանց տվյալ սեփականության օտարման, (iii) գերակա հանրային շահից ելնելով՝ սեփականության օտարումը չպետք է չհիմնավորված վնաս պատճառի սեփականատիրոջը, (iv) հանրային շահը գերակա է ճանաչվում Կառավարության որոշմամբ, (v) գերակա հանրային շահի առկայության փաստը կարող է վիճարկվել դատական կարգով:
56. Գերակա հանրային շահը կարող է հետապնդել հետևյալ նպատակները՝ ա) պետության ու հասարակության անվտանգության ապահովումը, բ) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված պարտավորությունների կատարման ապահովումը, գ) միջազգային և հանրապետական նշանակության պատմության և մշակութային արժեքների կամ հուշարձանների, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման կամ պահպանության ապահովումը, դ) շրջակա միջավայրի պահպանության ապահովումը, ե) կրթության, առողջության, սպորտի, ինչպես նաև գիտության կամ մշակույթի զարգացման ապահովումը, զ) հեռահաղորդակցության, տրանսպորտի, էներգետիկայի, հողօգտագործման, քաղաքաշինական, ջրամատակարարման, ջերմամատակարարման բնագավառում համապետական կամ համայնքային կամ միջհամայնքային կարևոր նշանակություն ունեցող ծրագրերի իրականացման ապահովումը, է) անձանց կյանքի, առողջության կամ սեփականության պաշտպանությունը, ը) արտակարգ իրավիճակների կանխումը, արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների նվազեցումը, արտակարգ իրավիճակների հետևանքների վերացումը:
57. Օրենքը նաև կարգավորում է օտարվող սեփականության շրջանակի որոշման հետ կապված հարցերը: Մասնավորապես, օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է, որ եթե օտարվում է հողամասը, ապա հողամասի հետ միասին օտարման են ենթակա նաև հողամասի վրա գտնվող անշարժ գույքը (շենքեր, շինություններ, այլ ամրացված գույք և այլն), ինչպես նաև հողամասի վրա գտնվող այլ բարելավումները: Եթե օտարվում է շենք կամ շինություն, ապա շենքի կամ շինության հետ միասին օտարման են ենթակա նաև այդ շենքի կամ շինության սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը: Եթե օտարվում է սեփականության մի մասը, ապա սեփականատերն իրավունք ունի պահանջելու նաև սեփականության չօտարված մասի օտարում հետևյալ դեպքերում՝ 1) գույքի չօգտագործվող մասը սեփականատիրոջ համար կորցնում է տնտեսական կամ

գործառույթային այն նշանակությունը, որն ունեւր մինչև օտարվող մասի առանձնացվելը՝ անկախ սեփականության օտարվող և չօտարվող մասերի համամասնությունից, 2) գույքի չօտարվող մասը օտարվող մասի համեմատությամբ աննշան է: Չօտարված մասն օտարելու պահանջ սեփականատերը կարող է ներկայացնել բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին Կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում: Եթե ձեռք բերողը հրաժարվում է ձեռք բերել սեփականության չօտարվող մասը, ապա սեփականատերն իրավունք ունի հայցը ներկայացնել դատարան:

58. Այս առումով պետք է նաև նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ունի լավ հաստատված նախադեպային իրավունք՝ կապված ունեցվածքի (սեփականություն, գույք) հասկացության մեկնաբանման հետ, որն օգտագործված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածում և խիստ ցանկալի է, որպեսզի այն հաշվի առնվի օտարվող գույքի շրջանակը որոշելիս: Այստեղ հետաքրքրական են հետևյալ օրինակները՝
59. Բրոնիովսկին ընդդեմ Լեհաստանի գործի 129-րդ կետ. - 1-ին արձանագրության 1-ին հոդվածի առաջին մասում ունեցվածքի հասկացությունն անկախ նշանակություն ունի, որը չի սահմանափակվում նյութական իրերի սեփականությամբ և անկախ է ազգային օրենքում պաշտոնական դասակարգումից: Նույն կերպ, քանի որ նյութական իրերը, որոշակի այլ իրավունքներն ու շահերը, որոնցից բաղկացած են միջոցները, կարող են համարվել գույքային իրավունքներ, հետևաբար, որպես ունեցվածք՝ այս դրույթի նպատակների համար: Յուրաքանչյուր դեպքում հարցը, որ պետք է դիտարկվի, այն է, թե արդյոք ամբողջությամբ դիտարկված դեպքի հանգամանքները համարվում են հայտատուի անվանը շնորհված նյութական շահ, որը պաշտպանվում է 1-ին արձանագրության 1-ին հոդվածով:
60. Կոպեչկին ընդդեմ Սլովակիայի գործի 25-րդ կետ. - Դատարանը հիշեցնում է, որ ըստ նախադեպային իրավունքի, - ունեցվածքը 1-ին արձանագրության 1-ին հոդվածի իմաստի շրջանակներում կարող է լինել գոյություն ունեցող ունեցվածք՝ կամ միջոցներ, այդ թվում՝ պահանջներ, որոնց դեմ դիմողը կարող է վիճել, որ նա ունի սեփականության իրավունքից արդյունավետ օգտվելու առնվազն օրինական ակնկալիքներ:
61. Օրենքը, ավելին, նախատեսում է, որ պետությունը, համայնքը և/կամ կազմակերպությունը կարող են հանդես գալ որպես հասարակության և պետության կարիքների համար օտարվող գույքի ձեռքբերող:
62. Օրենքի 7-րդ հոդվածը նշում է, որ Կառավարության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշումից բխող սահմանափակումները պետք է գրանցվեն Կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում՝ օրենքով սահմանված կարգով: Որոշումն ուղարկվում է գույքի սեփականատերերին և այլ անձանց, որոնք գույքի հետ կապված գրանցված գույքային իրավունքներ ունեն՝ Կառավարության նշված որոշումն ուժի մեջ մտնելուց 7 օրվա ընթացքում:

Կառավարության որոշումը հրապարակվում է ՀՀ պաշտոնական տեղեկագրում և 3000-ից ոչ պակաս տպաքանակ ունեցող լրատվամիջոցներում ու կարող է բողոքարկվել դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

63. Նույն հոդվածում նաև նախատեսվում է, որ Կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո լիազոր մարմինը պետք է կազմի օտարվող սեփականության նկարագրության արձանագրությունը, որին իրավունք ունեն մասնակցելու սեփականատերը/համասեփականատերերը և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողները: Գույքի նկարագրության արձանագրության մեկ օրինակը, վերջինս կազմելուց հետո՝ երեք օրվա ընթացքում ուղարկվում է սեփականատիրոջը և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցող անձանց: Արձանագրությունը կարող է բողոքարկվել Կառավարության լիազոր մարմնին կամ դատարան այն ստանալուց հետո՝ 10 օրվա ընթացքում:
64. Հանրային գերակա շահի օրենքը նաև ընդունում է, որ մինչև Կառավարության կողմից վերը նշված որոշման ընդունումը հավանական ձեռքբերողն իրավունք ունի Կառավարությանն առաջարկություն ներկայացնել օտարման ենթակա սեփականության/գույքի նախնական ուսումնասիրման մասին (որը ներառում է նաև գույքի նկարագրության արձանագրության պատրաստումը): Նախնական ուսումնասիրությունն իրականացվում է Կառավարության որոշման հիման վրա: Օրենքը նաև սահմանում է հետազոտողների իրավունքներն ու պարտականությունները:
65. Հանրային գերակա շահի 9-րդ հոդվածը սահմանում է, որ հանրային գերակա շահի ճանաչման մասին Կառավարության որոշումը կարող է բողոքարկվել դատարանում օտարման ենթակա գույքի սեփականատիրոջ կամ այլ շահագրգիռ անձանց կողմից հանրային գերակա շահի ճանաչման մասին Կառավարության որոշումը ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:
66. Օրենքի 10-րդ հոդվածը նախատեսում է, որ գույքի ձեռքբերողը/գնողը պետք է մինչև ՀՀ կառավարության որոշմամբ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման գործընթացը սկսելու վերջնաժամկետը օտարվող սեփականության սեփականատերերին և օտարվող սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներին ուղարկի սեփականության օտարման համաձայնագրի/պայմանագրի նախագիծը: Սեփականության սեփականատերն օտարման պայմանագիրը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, պարտավոր է հայտնել ձեռքբերողին օտարման սեփականության նկատմամբ այն գույքային իրավունքներ ունեցողների մասին, որոնք իրենց իրավունքը չեն գրանցել կամ ենթակա չեն եղել գրանցման: Եթե սեփականատերը չի հայտնում ձեռքբերողին նշված անձանց մասին, ապա նա է պատասխանատու առանց նրանց մասնակցության իրականացված օտարման ժամանակ այդ անձանց պատճառված վնասների համար: Սեփականատերը

կարող է ներկայացնել իր մեկնաբանությունները պայմանագրի նախագծի մասին և սկսել բանակցել:

67. Օրենքի 11-րդ հոդվածը սահմանում է, որ օտարվող սեփականության դիմաց սեփականատիրոջը վճարվում է համարժեք փոխհատուցում: Համարժեք փոխհատուցումը շուկայական արժեքը 15 տոկոսով գերազանցող գինն է: Շուկայական արժեքը որոշվում է համաձայն Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի գնահատման գործունեության մասին օրենքով սահմանված կարգի: Համաձայն Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի գնահատման գործունեության մասին օրենքի՝ գնահատումը պետք է կատարվի արտոնագրված գնահատողների կողմից: Գնահատման արդյունքները պետք է արտացոլվեն գնահատման հաշվետվությունում, որի կառուցվածքը սահմանվում ըստ Գնահատման պետական ստանդարտի: Շուկայական արժեքը չի ներառի որևէ ավելացում կամ նավագեցում, որը պայմանավորված է հետևյալ պատճառներով՝ (i) գույքի օտարման նպատակը, (ii) հասարակության և պետության կարիքների համար գույքի օտարման հանգամանքները, (iii) գույքի օտարմանն առնչվող ձեռքբերողի կողմից ցանկացած նախնական գործողություն (ներառյալ նախնական ուսումնասիրությունը), (iv) գույքի նկատմամբ գույքային իրավունքները: Ձեռքբերողը օտարված գույքի սեփականատիրոջը փոխհատուցում է գույքի օտարման հետ կապված բոլոր ֆինանսական պարտավորությունների դիմաց (հարկեր, պարտադիր վճարումներ և այլն): Օրենքը նաև նախատեսում է, որ օտարվող գույքի նկատմամբ սեփականության իրավունքներ ունեցող անձինք փոխհատուցվում են օտարվող գույքի դիմաց վճարվող փոխհատուցման գումարից:
68. Ըստ օրենքի 12-րդ հոդվածի, եթե օտարման պայմանագրի նախագիծն օտարվող սեփականության սեփականատիրոջը և օտարվող սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներին ուղարկելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում օտարման պայմանագիր չի կնքվում, ապա ձեռքբերողը պարտավոր է փոխհատուցման ենթակա գումարը հանձնել դատարանի կամ նոտարի դեպոզիտ հաշվին և փոխհատուցման գումարի չափի հաշվարկը պետք է կատարված լինի այն դեպոզիտ հանձնելուց ոչ շուտ, քան մեկ շաբաթ առաջվա դրությամբ: Եթե օտարվող սեփականության սեփականատերը և օտարվող սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողները 7 օրվա ընթացքում ստանում են դեպոզիտի գումարը, օտարման պայմանագիրը համարվում է կնքված:
69. Օրենքի 13-րդ հոդվածը նախատեսում է, որ եթե ձեռքբերողի կողմից փոխհատուցման գումարը դեպոզիտ հանձնելուց հետո յոթ օրվա ընթացքում չի կնքվում օտարման պայմանագիրը, ապա ձեռքբերողը պարտավոր է մեկամսյա ժամկետում սեփականության օտարման հայցով դիմել դատարան: Այս դեպքում դատարանի քննարկման առարկա կարող է լինել միայն փոխհատուցման գումարի չափի հարցը: Փոխհատուցման գումարի

վերաբերյալ դատարանի որոշումը պետք է հիմք լինի սեփականության օտարման համար:

70. Հանրային գերակա շահի օրենքը սահմանում է հասարակության և պետության կարիքների համար օտարվող գույքի սահմանափակումները: Մասնավորապես, փոխհատուցման ենթակա չեն բարելավումները (որոնք նկարագրված չեն սույն օրենքի Հոդված 14(1)-ում) սեփականության վրա, որը օտարվում է ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով օտարվող գույքի նկարագրության արձանագրությունը կազմելու հաջորդ օրը, ինչպես նաև երրորդ կողմին տրված կամ երրորդ կողմից ստացված իրավունքները:
71. Օրենքը նաև նախատեսում է այն հիմքերը, թե երբ է ՀՀ կառավարության կողմից գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշումն անվավեր համարվում: Մասնավորապես, 16-րդ հոդվածը նախատեսում է, որ եթե ձեռքբերողը օտարվող սեփականության սեփականատիրոջը և/կամ գույքային իրավունք ունեցողին չի ուղարկում օտարման պայմանագրի նախագիծը կամ նոտարի կամ դատարանի միջոցով դեպոզիտ հաշվին չի փոխանցում փոխհատուցման գումարը օրենքով սահմանված ժամկետում, ապա համարվում է, որ ձեռքբերողը հրաժարվում է տվյալ սեփականությունը ձեռք բերելու իրավունքից և տվյալ սեփականության մասով բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին բոլոր իրավական փաստաթղթերը համարվում են անվավեր: Նշված որոշումը կարող է ճանաչվել անվավեր դատարանի կողմից, եթե ի թիվս այլ հանգամանքների, ՀՀ կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում չեն սկսել այն գործողությունները, որոնք հիմք են ծառայում սեփականության օտարման համար:
72. Հանրային գերակա շահի օրենքի վերջին վերանայումը սահմանում է դատարանի սահմանափակումները՝ որոշումներ կայացնելու առումով: Մասնավորապես, դատարանը պետք է քննի և որոշում կայացնի օտարվող գույքի փոխհատուցման գումարի վերաբերյալ հայցը ստանալուց հետո՝ 2 ամսվա ընթացքում:
73. Այդ որոշումները պետք է վիճարկվեն/բողոքարկվեն Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում՝ Վարչական դատավարության օրենսգրքի պահանջների համաձայն: Ըստ 3-րդ հոդվածի՝ անձը կամ իրավաբանական մարմինն իրավունք ունի դիմել ՀՀ վարչական դատարան, եթե պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունները/կամ անգործությունը և վարչական ակտերը կամ դրանց պաշտոնատար անձինք խախտել կամ խախտում են ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով երաշխավորված իրավունքներն ու ազատությունները: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ օրենսգիրքը չի սահմանում ժամկետներ ՀՀ վարչական դատարանի վարույթի համար: 81-րդ հոդվածը սահմանում է, որ դատական վարույթը, որպես կանոն, պետք է ավարտվի մեկ նիստով՝ առանց հետաձգումների: Դատավարության նախապատրաստումը և վարույթը պետք է

ավարտվեն ողջամիտ ժամկետում: Վերը նշվածի հետ միասին ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը նախատեսում է պարզեցված/արագացված ընթացակարգ մի շարք դեպքերի համար, որոնցից, մեր դեպքում, առավել կիրառելի են հետևյալները՝ ա) երբ ներկայացված հայցն ակնհայտորեն լավ հիմնավորված է կամ բ) երբ ներկայացրած հայցը ակնհայտորեն անհիմն է: Վարչական դատարանի որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

74. Իրավիճակը փոքր ինչ այլ է, երբ գործը գնում է դատարան օրենքի 13-րդ հոդվածով (օտարման պայմանագրի ստորագրումը դատարան դիմելու միջոցով) նախատեսված դեպքերով: Այս գործերը քննվում են ընդհանուր իրավասության դատարանի կողմից, եթե վիճարկվող փոխհատուցման չափը 5 մլն. դրամից ցածր է և քաղաքացիական դատարանի կողմից, եթե այն հավասար է կամ գերազանցում է 5 մլն. դրամը: Դատական վարույթն իրականացվում է ըստ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջների: Ինչպես նախորդ դեպքում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նույնպես չի նախատեսում խիստ ժամկետներ գործի քննության համար և սահմանում է, որ գործը պետք է քննել դատարանում ողջամիտ ժամկետում (111-րդ հոդված): Այստեղ նույնպես դատարանը կարող է կիրառել արագացված կարգ, եթե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածը նախատեսում է, որ դատարանն իրավունք ունի քննել արագացված կարգով, եթե՝ ա) գործի բնույթը պահանջում է անհապաղ դատաքննություն, բ) հայցը ակնհայտորեն հիմնավորված է, գ) հայցը ակնհայտորեն անհիմն է:
75. Ընդհանուր իրավասության դատարանների և քաղաքացիական դատարանի որոշումներն ուժի մեջ են մտնում մեկ ամսից և կարող են բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան: Իր հերթին, վերաքննիչ դատարանը նույնպես սահմանափակված չէ խիստ ժամկետներով և պետք է քննի գործը ողջամիտ ժամկետում՝ հաշվի առնելով ընդհանուր իրավասության/քաղաքացիական դատարանի կողմից գործը քննելու ժամկետները: Վերաքննիչ դատարանի որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

3.2. Համաշխարհային բանկի քաղաքականությունը

76. ՀԲ ԳՔ 4.12-ի հիմնական նպատակն է ուսումնասիրել բոլոր այլընտրանքները՝ խուսափելու կամ գոնե նվազագույնի հասցնելու հարկադիր տարաբնակեցումը: Եթե տարաբնակեցումն անխուսափելի է, տարաբնակեցման գործողությունները պետք է ընկալվեն և իրականացվեն որպես կայուն զարգացման ծրագրեր՝ բավարար ներդրումային միջոցներ ապահովելու միջոցով հնարավորություն ընձեռելով ծրագրի հետևանքով տարաբնակեցված անձանց կիսել ծրագրի օգուտները: Տարաբնակեցված անձանց համար պետք է ապահովվի բովանդակալից խորհրդատվություն և հնարավորություններ՝ տարաբնակեցման ծրագրերի պլանավորմանն ու իրականացմանը մասնակցելու համար: Տեղահանված անձինք կստանան աջակցություն՝

իրենց կենսապահովման միջոցները և կենսամակարդակը բարելավելուն, կամ ողջամիտ ժամկետներում դրանք առնվազն մինչև տարաբնակեցվելը կամ մինչև ծրագրի իրականացումն սկսելը իրենց ունեցած կենսամակարդակը վերականգնելուն (որն ավելի բարձր է) ուղղված գործողությունների առնչությամբ:

77. Քաղաքականությունը տարածվում է հողը և այլ գույքը վերցնելու վրա, երբ հողի օտարումը հանգեցնում է կացարանի մշտական կամ ժամանակավոր կորստի, արտադրական գույքի լիարժեք կամ մասնակի կորստի, կամ դրանց հասանելիության և եկամտի աղբյուրների կամ կենսապահովման այլ միջոցների կորստի վրա: Այս քաղաքականությունը նաև տարածվում է այլ գործողությունների վրա, որոնք հանգեցնում են հարկադիր տարաբնակեցման, որոնք ըստ Բանկի՝ ա) անմիջականորեն և զգալիորեն կապված են Բանկի օժանդակությամբ իրականացվող ծրագրի հետ, բ) անհրաժեշտ են ծրագրային փաստաթղթերում նախատեսված նպատակների իրականացման համար և գ) իրականացվել են կամ նախատեսվում է դրանց իրականացում ծրագրին զուգընթաց: Ազգային օրենսդրության հետ բոլոր հակասությունների դեպքում գերակայում է ԳՔ 4.12-ը, բացառությամբ այն դեպքերի, երբ ազգային օրենսդրությունը ԾԱԵԱ-ների համար ապահովում է ավելի բարձր փոխհատուցում:

3.3 Հայաստանի օրենքների և Համաշխարհային բանկի հարկադիր տարաբնակեցման քաղաքականության համեմատությունը

Աղյուսակ 1 Հայաստանի Հանրապետության օրենքների և Համաշխարհային բանկի ոչ կամավոր/հարկադիր տարաբնակեցման քաղաքականության համեմատությունը

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը	Համաշխարհային բանկի ոչ կամավոր/հարկադիր տարաբնակեցման քաղաքականությունը	Եզրակացություն Բացթողումների մասին	Բացթողումները շտկելու գործողություններ
1. Իրավասությունը և իրավունքները			
Գույքի (հող, շենքեր, այլ բարելավումներ) նկատմամբ կադաստրի պետական կոմիտեում իրենց սեփականության իրավունքը գրանցած անձինք իրավունք ունեն ստանալու փոխհատուցում օտարվող հողի, ծրագրի արդյունքում հասցված վնասի/ապամոնտաժման և կորցրած բերքի համար (Հանրության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին օրենք), կամ այն դեպքերում, երբ հողերը չեն օտարվում, սակայն մասամբ օգտագործվում են	Անձինք, ովքեր հողի նկատմամբ ունեն իրավական գրանցման կարգավիճակ, ստանում են փոխհատուցում իրենց կորցրած հողի դիմաց:	Ընդհանուր առմամբ, ՀՀ օրենսդրության և ՀԲ ԳԾ դրույթները նույնն են, բացառությամբ գույքի նկատմամբ իրավական գրանցման կարգավիճակ չունեցող անձանց վերաբերյալ դրույթի:	Բացը լրացնելու համար առաջարկվում է՝ հետևել ՀԲ ԳԾ 4.12-ին:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը	Համաշխարհային բանկի ոչ կամավոր/հարկադիր տարաբնակեցման քաղաքականությունը	Եզրակացություն Բացթողումների մասին	Բացթողումները շտկելու գործողություններ
<p>հանրային ծրագրերի համար (սերվիտուտ) (Քաղաքացիական օրենսգիրք (հոդվածներ 210-218), Հողային օրենսգիրք (հոդվածներ 50 և 100)):</p> <p>Անձինք, ովքեր սեփականության նկատմամբ ունեն այլ գույքային իրավունքներ (վարձակալության իրավունք, ազատ օգտագործման իրավունք և այլն) փոխհատուցում ստանալու իրավունք ունեն, իսկ այդ անձանց փոխհատուցման չափը ներառված է և վճարվում է գրանցված սեփականատերերին վճարվող փոխհատուցումից (Հանրության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին օրենք (հոդված 11)):</p> <p>Այն անձինք, ովքեր իրենց սեփական հողի վրա շենքեր են կառուցել, սակայն չեն գրանցել դրանք, իրավունք ունեն ստանալ փոխհատուցում, եթե նրանք գրանցել են իրենց իրավունքները ՀՀ կառավարության «Գերակա հանրային շահի մասին» օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 15 օրվա ընթացքում:</p>			
<p>ԱԵԱ-ները, ովքեր իրավական հնարավորություն ունեն ստանալու սեփականության իրավունք, պետք է իրավական կարգավիճակ ստանան և փոխհատուցվեն որպես գույքի լիարժեք սեփականատեր, եթե գրանցեն սեփականության նկատմամբ իրենց իրավունքները «Հանրային գերակա շահի մասին» օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 15 օրվա ընթացքում:</p>	<p>Անձինք, ովքեր չունեն իրավական գրանցման կարգավիճակ հողի նկատմամբ, սակայն այդ հողի կամ գույքի նկատմամբ պահանջներ ունեն և եթե այդ պահանջներն ընդունելի են երկրի օրենսդրությամբ կամ ընդունելի են դառնում տարաբնակեցման ծրագրով նախատեսված գործընթացով, ստանում են փոխհատուցում իրենց կորցրած հողի համար:</p>		
<p>Անձինք, ովքեր սեփականության նկատմամբ իրենց իրավունքները չեն գրանցել կադաստրի պետական կոմիտեում, փոխհատուցում ստանալու իրավունք չունեն:</p>	<p>Անձանց, ովքեր հողի նկատմամբ չունեն ՀՀ օրենքով սահմանված կարգով իրավական գրանցման կարգավիճակ կամ, եթե նրանց պահանջներն իրենց կողմից զբաղեցված հողի նկատմամբ ընդունելի չեն երկրի օրենսդրությամբ, կտրամադրվի տարաբնակեցման նպաստ՝</p>		

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը	Համաշխարհային բանկի ոչ կամավոր/հարկադիր տարաբնակեցման քաղաքականությունը	Եզրակացություն Բացթողումների մասին	Բացթողումները շտկելու գործողություններ
	որպես իրենց կողմից զբաղեցված հողի փոխհատուցում, և այլ անհրաժեշտ օժանդակություններ, եթե նրանք ծրագրային տարածքը զբաղեցրել են մինչև կասեցման օրը:		
Օտարման դեպքում սեփականատիրոջը պետք է վճարվի փոխհատուցում շուկայական արժեք + 15%-ի չափով՝ առանց հարկերի համար մասհանումների կամ գրանցման ծախսերի Ծախսերը, որոնք առաջանում են հանրության և պետության կարիքների համար գույքի օտարման գործընթացում, փոխհատուցվում են ձեռքբերողի միջոցներից:	Փոխհատուցման չափը պետք է բավարար լինի կորցրած հողի և այլ գույքի փոխարինման համար՝ տեղական շուկայի փոխարինման արժեքի չափով, ներառյալ՝ գործառնական ծախսերը:	ՀՀ օրենսդրությունը և ՀՀ ԳԾ 4.12-ը նախատեսում են փոխհատուցում կորցրած հողերի համար: Ազգային օրենսդրությունը ավելի նպաստավոր է ԱԵԱ-ների համար:	Բացը լրացնելու համար առաջարկվում է՝ 1) հետևել հողի և կառույցների փոխհատուցման վերաբերյալ ՀՀ օրենսդրության պահանջներին
Ոչ մի դրույթ չկա եկամտի/կենսապահովման միջոցների վերականգնման միջոցառումների վերաբերյալ	ՀԲ քաղաքականությունը պահանջում է եկամտի/ կենսապահովման միջոցների վերականգնում	ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում դրույթներ եկամտի/ կենսապահովման միջոցների փոխհատուցման և/կամ տեղափոխման գործընթացի ընթացքում բոլոր ԱԵԱ-ների կրած ծախսերի համար:	Բացը լրացնելու համար առաջարկվում է՝ հետևել ՀՀ ԳԾ 4.12-ին:
Զգալի ազդեցության ենթակա ԾԱԵԱ-ների ու խոցելի խմբերի և/կամ տարաբնակեցման ծախսերի վերաբերյալ հատուկ օժանդակություններ չեն նախատեսվել	Տարաբնակեցվողների մեջ հատուկ ուշադրություն պետք է դարձնել խոցելի խմբերի կարիքներին, հատկապես նրանց, ովքեր աղքատության սահմանագծից ցածր կենսամակարդակ ունեն, չունեն հող, ծերերին, կանանց և երեխաներին, տեղաբնիկներին, էթնիկ փոքրամասնություններին, կամ այլ տարաբնակեցված անձանց, ովքեր կարող է պաշտպանված չլինեն հողի փոխհատուցման վերաբերյալ	ՀՀ օրենսդրությունը դրույթներ չի նախատեսում խոցելի խմբերի համար	Բացը լրացնելու համար առաջարկվում է՝ հետևել ՀՀ ԳԾ 4.12-ին:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը	Համաշխարհային բանկի ոչ կամավոր/հարկադիր տարաբնակեցման քաղաքականությունը	Եզրակացություն Բացթողումների մասին	Բացթողումները շտկելու գործողություններ
	ազգային օրենսդրությամբ:		
2. Հանրային լսումների, մասնակցության և տեղեկատվության վերաբերյալ պահանջները			
<p>ԱԵԱ-ները պետք է պատշաճորեն ծանուցվեն օտարման գործընթացի մի շարք կարևոր փուլերի վերաբերյալ: Մասնավորապես, նրանց պետք է ծանուցել բացառիկ՝ գերակա հանրային շահի մասին Կառավարության որոշման վերաբերյալ, գույքի նկարագրության արձանագրության մեջ արտացոլված արդյունքների, նպատակի, կարևորության և հետազոտության իրավաբանական հետևանքների մասին, օտարման առաջարկի, ներառյալ՝ պայմանագրի նախագծային տարբերակում ընդգրկված փոխհատուցման գումարների, դատարանի դեպոզիտային հաշվին փոխանցվելու մասին:</p> <p>Ծանուցումների կամ ՀՀ գերակա հանրային շահի մասին օրենքով նախատեսված փաստաթղթերի (փաստաթղթեր, դիմումներ, առաջարկություններ և այլն) ուղարկումը հասցեատերերին, համարվում է պատշաճ, եթե այն ուղարկվել է նրանց պատվիրված նամակով՝ առաքման վերաբերյալ նշումով, կամ այլ միջոցներով, որոնք ապահովում են հաղորդակցությունը, կամ հասցեատիրոջ կողմից ստորագրված հետադարձ ստացականով :</p> <p>Տեղական ինքնակառավարման մարմինները պետք է համայնքներին լրատվամիջոցներով և հանրային լսումների միջոցով տեղեկացնեն</p>	<p>Տարաբնակեցված անձինք և իրենց համայնքները, ինչպես նաև նրանց հյուրընկալող ցանկացած համայնք, պետք է ժամանակին ապահովվի համապատասխան տեղեկատվությամբ, տարաբնակեցման վերաբերյալ խորհրդատվությամբ, տարաբնակեցման պլանավորմանը, իրականացմանը և մոնիտորինգին մասնակցելու առաջարկվող հնարավորություններին:</p>	<p>ՀՀ օրենսդրության և ՀԲ ԳԾ 4.12 դրույթները տարբեր են, սակայն ոչ հակասական:</p>	<p>Բացը լրացնելու համար առաջարկվում է՝</p> <p>կիրառել և՛ ՀՀ օրենսդրության , և՛ ՀԲ ԳԾ 4.12-ը՝ որպես մեկը մյուսին լրացնող:</p>

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը	Համաշխարհային բանկի ոչ կամավոր/հարկադիր տարաբնակեցման քաղաքականությունը	Եզրակացություն Բացթողումների մասին	Բացթողումները շտկելու գործողություններ
<p>իրենց միջավայրում ակնկալվող փոփոխությունների վերաբերյալ (Կառավարության 1998թ. հոկտեմբերի 28-ի թիվ 660 որոշում):</p>			

3.4. Եզրակացություններ. բացթողումների լրացմանն ուղղված միջոցառումներ

78. Սկզբունքորեն, հողի օտարման և տարաբնակեցման հետ կապված Հայաստանի օրենսդրությունն ու կանոնակարգերը և ՀԲ ԳԾ 4.12-ը համապատասխանում են ոչ միայն ազդեցության ենթակա ընտանիքների կամ անձանց փոխհատուցման նպատակին, այլ նաև վերականգնման նպատակին: Սակայն, ՀՀ օրենքներում պարզ չէ, թե ինչպես պետք է վերականգնումն իրականացվի և, գործնականում, վերականգնման ապահովումը թողնվում է տեղական ինքնակառավարման մարմինների և ծրագրի առանձին կողմնակիցների կողմից ձեռնարկվող ժամանակավոր միջոցառումներին: Մեկ այլ և բավականին մեծ տարբերությունը ՀՀ օրենսդրության և ՀԲ քաղաքականության միջև այն է, որ ՀԲ ԳԾ 4.12-ը ճանաչում է սեփականության իրավունքը գրանցած և չգրանցած սեփականատերերի, ինչպես նաև գրանցված և չգրանցված վարձակալների, այսինքն՝ սեփականության գրանցման բացակայությունը արգելք չի հանդիսանում փոխհատուցման և վերականգնման համար: Հայաստանի օրենքների ու կանոնակարգերի և ՀԲ 4.12-ի միջև հնարավոր բացերը լրացնելու համար սույն ՏՔԾ-ն նախատեսում է փոխհատուցում՝ սեփականության իրավունքը գրանցած և սեփականություն իրավունքը չգրանցած հողօգտագործողների համար ազդեցության ենթարկված ողջ գույքի դիմաց, ինչպես նաև վերականգնման աջակցություն՝ սեփականության իրավունքը չգրանցած օգտագործողներին: Ի լրումն, ՏՔԾ-ն նախատեսում է, որ ՏԳԾ-ները պետք է ներառեն վերականգնման համապատասխան փաթեթներ ԾԱԵԱ-ների համար, որոնք կարող են խոցելի լինել և/կամ որոնց վերաբնակեցման կարիքը կարող է առաջանալ, որոնք կրում են ձեռնարկատիրական գործունեության կորուստ, կամ կարող են զգալի ազդեցության ենթարկվել: Ավելին, քանի որ հրապարակայնությունը և հանրային լուումները ՀՀ օրենքներում լավ չեն ներկայացված և սահմանափակված են միայն տեղեկատվության հրապարակման գործունեությամբ, ծրագիրը կապահովի (հավանական) ԾԱԵԱ-ների և նրանց փաստաբանների կամ ներկայացուցիչների (օրինակ՝ քաղաքացիական հասարակության կազմակերպություններ), մասնավորապես՝ ծրագրի ազդեցությանը ենթակա խոցելի խմբերի պատշաճ ընդգրկումը հանրային լուումների և մասնակցության գործընթացին՝ ծրագրի իրականացումից առաջ և իրականացման ընթացքում (տե՛ս նաև ստորև բերված 7-րդ բաժինը): Ի լրումն, կհիմնվի բողոքների լուծման մեխանիզմ (տես նաև 6-րդ բաժինը) և ծրագրի իրականացման ֆիզիկական աշխատանքները չեն սկսվի նախքան ծրագրի կամ ենթաբաղադրիչի փոխհատուցման և վերականգնման բոլոր միջոցառումների ավարտը՝ համաձայն համապատասխան Տարաբնակեցման գործողությունների ծրագրի:
79. Ազգային օրենսդրության հետ բոլոր տեսակի հակասությունների դեպքում գերակայում է ՀԲ ԳԾ 4.12-ը, բացառությամբ այն դեպքերի, երբ ազգային օրենսդրությունն ավելի բարենպաստ է ԾԱԵԱ-ների համար:
80. Համաձայն ՀԲ ԳԾ 4.12-ի 4-րդ պարբերության՝ այս միջոցառումները վերաբերում են ծրագրի բոլոր բաղադրիչներին, որոնք հանգեցնում են հարկադիր տարաբնակեցման՝ անկախ ֆինանսավորման աղբյուրից:

4. ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

81. Ծրագրի շրջանակում տարաբնակեցման գործողությունները կիրականացվեն ըստ փոխհատուցման իրավունքի և իրավասությունների շրջանակի, որոնք մշակվել են՝ հիմնվելով ՀՀ օրենսդրության և ՀՔ ԳՔ 4.12-ի վրա: ՏՔԾ-ի հիմնական սկզբունքն այն է, որ ԾԱԵԱ-ները պետք է ստանան աջակցություն իրենց ջանքերում՝ ուղղված սեփական կենսամակարդակի, եկամուտ վաստակելու կարողության և արտադրական մակարդակների բարելավմանը կամ, առնվազն վերականգնել այն կենսամակարդակը, որը նրանք ունեին մինչ ծրագիրը, ընդ որում՝ սեփականության իրավունքի կարգավիճակի բացակայությունը չի բացառում փոխհատուցման և/կամ վերականգնման աջակցություն ստանալու համար այս անձանց համապատասխանությունը:
82. Հավելված 1-ում ներկայացված է պայմանական իրավունքների սխեման: Ծրագրի որևէ կոնկրետ բաղադրիչին առնչվող ազդեցությունների բացահայտման ժամանակ անհրաժեշտ է վերանայել և համապատասխանաբար թարմացնել իրավունքների սխեման և փոխհատուցման նկատմամբ իրավասության/իրավունքների նկարագրերը:

4.1. Փոխհատուցման և/կամ վերականգնման իրավունքները

83. Փոխհատուցման և/կամ վերականգնման աջակցության իրավունք ունեցող ԾԱԵԱ-ներն ընդգրկված են հետևյալ երեք խմբերում՝
- Անձինք, ովքեր ունեն գրանցված իրավունքներ հողի նկատմամբ, որն ունի պատշաճ իրավական գրանցում՝ համաձայն ՀՀ օրենսդրության,
 - Անձինք, ովքեր չունեն գրանցված իրավունքներ հողի նկատմամբ մարդահամարը սկսելու պահի դրությամբ, սակայն ունեն պահանջներ այդ հողի նկատմամբ, և որ այդ պահանջներն ընդունելի են ՀՀ օրենքներով կամ կընդունվեն տարաբնակեցման ծրագրում ձևակերպված գործընթացի միջոցով,
 - Անձինք, ովքեր չունեն ընդունելի գրանցված իրավունք կամ պահանջ իրենց կողմից զբաղեցրած հողի նկատմամբ:
84. Գրանցված իրավունքների կամ սեփականության իրավունքի բացակայությունը նրանց չի զրկում իրավասություններից:
85. ՀՔ ՕՔ4.12 –ը ներառում է փոխհատուցման/վերականգնման ենթակա ծրագրի հետևյալ տնտեսական և սոցիալական ուղղակի ազդեցությունները, որոնք պայմանավորված են՝
- Հողի հարկադիր օտարմամբ, որն առաջ է բերում
 - ծածկի տեղափոխություն կամ կորուստ,

- ii. մշտական կամ ժամանակավոր ազդեցության ենթակա հող,
 - iii. գույքի կորուստ կամ դեպի գույքը մուտքի կորուստ, ներառյալ՝ տները կամ այլ կառույցները, մշակաբույսերը, ծառերը կամ այլ գույքը, ձեռնարկատիրական գործունեությունը և /կամ արտադրության այլ միջոցները և/կամ
- b. Եկամտի աղբյուրների կամ կենսապահովման միջոցների կորուստը, անկախ այն բանից, թե ազդեցության ենթակա անձինք պետք է տեղափոխվեն այլ վայր, թե ոչ, կամ
 - c. Դեպի օրենքով սահմանված հատուկ նշանակության պարկեր և պաշտպանված տարածքներ մուտքերի հարկադիր սահմանափակումները, որը բացասական ազդեցություն է թողնում վերաբնակեցված անձանց կենսամակարդի վրա:

86. Փոխհատուցման իրավունքը կսահմանափակվի կասեցման օրով: Բոլոր ԾԱԵԱ-ները, ովքեր ապրում են և/կամ ունեն/օգտագործում են գույք (ինչպես օրինակ՝ կառուցվածքներ, ծառեր, մշակաբույսեր և այլն) ծրագրային տարածքում նախքան կասեցման օրը, կարող են հաշվի առնվել իրենց կորուստների փոխհատուցման համար և/կամ վերականգնման աջակցություն ստանալու համար: ԳՔ 4.12-ը սահմանում է, որ այն ԾԱԵԱ-ները, ովքեր ծրագրի ազդեցության տարածքներում կհաստատվեն կասեցման օրից հետո, փոխհատուցման իրավունք չեն ունենա: Փաստը, որ փոխհատուցման իրավունքի համար կսահմանվի ծրագրի կասեցման օր, կհաղորդվի ազդեցության ենթակա համայնքներին նախագծային փուլում կազմակերպվող հանրային լուսմների ընթացքում: Կասեցման ճշգրիտ օրը կհրապարակվի ՀՎԷԷ հիմնադրամի և ՏԻՄ-երի կողմից նախապես, որին անմիջապես կհետևի ԾԱԵԱ-ների մարդահամարի հետազոտությունն ու գույքագրման իրականացումը: Նախագծի պատրաստման ընթացքում ՏԻՄ-երը ոչ միայն կհաստատեն նախագիծը՝ հետևելով տեղական գործընթացներին և պահանջներին, այլև կարող են նաև պատրաստել արձանագրություն՝ նշելով, որ հաստատված նախագծի արդյունքում որևէ մասնավոր կամ համայնքի կողմից օգտագործվող հող ազդեցության չի ենթարկվի: Կասեցման օրը կլինի ԾԱԵԱ-ների մարդահամարի հետազոտության և/կամ ազդեցության ենթակա գույքի հետազոտության մեկնարկի օրը: Բոլոր մարդիկ, կազմակերպությունները, որոնք մուտք են գործում ծրագրային տարածք, և/կամ մարդիկ, որոնք իրականացնում են շինարարական աշխատանքներ, ծառերի տնկում, բարելավումներ կասեցման օրից հետո, իրավասու ԾԱԵԱ-ներ չեն և որևէ փոխհատուցում և/կամ աջակցություն չեն ստանա: Սակայն, նրանց կանխավ կներկայացվի ծանուցում, որով վերջիններիս կխնդրվի ազատել տարածքները, ապամոնտաժել ազդեցության ենթակա շինությունները նախքան Ծրագրի իրականացումն սկսելը: Նրանց ապամոնտաժված կառույցներն ու նյութերը չեն առգրավվի, նրանք տուգանքներ չեն վճարի կամ սանկցիայի չեն ենթարկվի:

4.2. Փոխհատուցման և վերականգնման իրավունքները

87. Փոխհատուցման իրավունքները հիմնված են այն տրամաբանության վրա, որ տարաբնակեցումը, վերականգնման և փոխհատուցման ծրագրերը պետք է բարելավեն կամ նվազագույնը՝ վերականգնեն ԾԱԵԱ-ների նախքան ծրագիրն ունեցած կենսամակարդակը և ապահովեն, որպեսզի վերջիններս դառնան Ծրագրի օգուտների շահառուներ: Փոխհատուցման

և/կամ վերականգնման իրավունք ունեցող բոլոր ԾԱԵԱ-ները (պարբերություն 83-86) կփոխհատուցվեն նախքան շինարարական աշխատանքները: Պարբերություն 83(i) և (ii) -ի ներքո սահմանված ԾԱԵԱ-ների համար նախատեսված է փոխհատուցում միայն հողի կորստի համար, և այլ աջակցություն՝ համաձայն ՏԳԾ-ի: Պարբերություն 83 (ii) –ի ներքո սահմանված ԾԱԵԱ-ներին կտրամադրվի տարաբնակեցման աջակցություն իրենց կողմից զբաղեցրած հողի համար սեփականության նկատմամբ իրենց իրավունքները գրանցելուց հետո: Սեփականության նկատմամբ իրավունքների գրանցման գործընթացը և գործողությունների ծրագիրը պետք է սահմանվեն ՏԳԾ-ում: Պարբերություն 83(iii)-ի ներքո սահմանված ԾԱԵԱ-ներին կտրամադրվի տարաբնակեցման աջակցություն իրենց կողմից զբաղեցրած հողի դիմաց փոխհատուցման փոխարեն, և այլ աջակցություն՝ համաձայն ՏԳԾ-ի: Բոլոր անձանց, որոնք ներառված են պարբերություն 83 (i), (ii), կամ (iii)-ում, կտրամադրվի փոխհատուցում հողից բացի այլ գույքի կորստի դիմաց:

88. Անձինք, ովքեր կասեցման օրից հետո ոտնձգություն կկատարեն տարածքում (պարբերություն 86), փոխհատուցման կամ տարաբնակեցման որևէ այլ տեսակի աջակցության իրավունք չեն ունենա:

Փոխհատուցման հիմնական սկզբունքները

89. Տնտեսական կորուստների և/կամ ֆիզիկական տեղահանման համար փոխհատուցման նախնական դրույքաչափերը կառաջարկվեն ԾԱԵԱ-ներին՝ նրանց հնարավորություն տալով համեմատել դրանք շուկայում գերակայող գների հետ:

90. Իրավասու պետական մարմինների կողմից նախապատվություն կտրվի այն ԾԱԵԱ-ներին, ովքեր վերակառուցում են իրենց տները սեփական ուժերով: Նրանց կցուցաբերվի նաև աջակցություն սեփականության անհրաժեշտ իրավունքները և պաշտոնական վկայականները ձեռք բերելու հարցում:

91. Այն դեպքում, եթե համայնքի ենթակառուցվածքները, ինչպես օրինակ՝ դպրոցները, գործարանները, ջրի աղբյուրները, ճանապարհները, կոյուղագծերը, էլեկտրամատակարարման համակարգը, կամ համայնքային այլ ռեսուրսները, ինչպիսիք են՝ անտառային տարածքները կամ արոտավայրերը, ենթարկվում են ազդեցության, ապա դրանք կփոխարինվեն նորերով, որոնց համար համայնքը կամ հաղորդուղու սեփականատերը չի վճարի: Դրանք կվերակառուցվեն և/կամ կբարելավվեն այնպես, որ կվերականգնվեն նրանց նախքան ծրագիրն ունեցած գործառույթները, ինչպես նաև կապահովվի այս ծառայությունների հասանելիությունը ԾԱԵԱ-ներին: Վերականգնման միջոցների և մեխանիզմների վերաբերյալ մանրամասները պետք է ներկայացված լինեն ՏԳԾ-ում:

Տարաբնակեցման ռազմավարություններ և դրամական փոխհատուցում

92. Նախապատվությունը կտրվի հողի վրա հիմնված տարաբնակեցման ռազմավարություններին, այն ԾԱԵԱ-ների դեպքում, ովքեր իրենց ապրուստը վաստակում են հողի միջոցով: Այս ռազմավարությունները կարող են ներառել տարաբնակեցումը պետական կամ մասնավոր սեփականություն հանդիսացող հողի վրա, որը օտարված կամ գնված է տարաբնակեցման նպատակով: Հողի փոխարինման առաջարկի դեպքում վերաբնակեցվողներին տրամադրվում է այնպիսի հող, որի արտադրողական ներուժը, տեղակայման վայրի առավելությունները և այլ

գործունեությունը միասին առնվազն համարժեք են վերցված հողի առավելություններին: Վերբնակեցման տարածքում հնարավորության դեպքում կկառուցվեն և կբարելավվեն համայնքային ենթակառուցվածքները և ծառայությունները՝ ապահովելով վերջիններիս հասանելիությունը ԾԱԵԱ-ներին:

93. Եթե հողը ԾԱԵԱ-ների նախընտրելի տարբերակը չէ, կամ եթե հողի տրամադրումն ազդեցության կենթարկի որևէ զբոսայգու կամ պաշտպանվող տարածքի կենսունակությունը կամ եթե չկա բավարար քանակով հող մատչելի գներով⁹, ապա ի հավելումն հողի կամ կորցրած այլ գույքի դրամական փոխհատուցման, անհրաժեշտ է նաև առաջարկել զբաղվածության կամ ինքնազբաղվածության հնարավորությունների այլ տարբերակներ:
94. Կորցրած ակտիվների դիմաց դրամական փոխհատուցումը կարող է տրամադրվել այն դեպքերում, երբ (a) հողը հանդիսանում է ապրուստի միջոց, սակայն ծրագրի համար օտարված հողը հանդիսանում է ծրագրի ազդեցությանը ենթակա ակտիվի մի փոքր մասը (արտադրական տարածքի 20%-ից պակաս), իսկ մնացած մասը տնտեսապես կենսունակ է, (b) կան հողի, բնակարանային և աշխատանքի ակտիվ շուկաներ, տեղահանված անձինք օգտվում են այս շուկաներից, և կա բավարար քանակությամբ հող և բնակարան կամ (c) հողը ապրուստի միջոց չի հանդիսանում: Դրամական փոխհատուցման մակարդակները պետք է լինեն բավարար՝ կորցրած հողը և այլ ակտիվները տեղական շուկայական գներով փոխարինման արժեքով փոխհատուցելու համար:
95. Փոխհատուցումը կտրամադրվի առանց փրկված նյութերի/կրկին օգտագործման ենթակա նյութերի, գրանցման ծախսերի, հարկերի և այլ կիրառելի վճարումների համար մասհանումների:

Վերականգնման ծախսերը և կենսապահովման միջոցների վերականգնումը

96. Ի հավելումն կորցրած գույքի դիմաց տրվող փոխհատուցմանը՝ ԾԱԵԱ -ներն իրավունք ունեն ստանալ վերականգնման աջակցություն կենսապահովման միջոցները վերականգնելու համար: Օրինակ՝ ԾԱԵԱ -ներն իրավունք կունենան ստանալ անցումային շրջանում տեղափոխման ծախսերի, ժամանակավոր կացարանի (անհրաժեշտության դեպքում), աշխատանք գտնելու համար վերապատրաստման և աշխատանքին սպասելու ժամանակահատվածում եկամտի ապահովման օժանդակության: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել և օժանդակություն տրամադրել խոցելի խմբերին, ինչպես նաև այն տնային տնտեսություններին, որոնք զգալի ազդեցության են ենթարկվել.

- a. Խոցելի տնային տնտեսությունները, ներառյալ՝ աղքատ, կանանց և տարեցների կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները¹⁰, կստանան միանվագ

9 Համապատասխան հողի բացակայությունը պետք է ցույց տալ և փաստաթղթավորվել՝ բավարարելով ՀԲ-ի պահանջները:

¹⁰ Խոցելի տնային տնտեսություններն են՝ (a) տնային տնտեսությունները, որոնք ղեկավարվում են կանանց կողմից, որտեղ աշխատունակ տարիքի անձինք չկա (այն չի ներառում ՀՀ զինված ուժերում պարտադիր զինծառայություն անցնող, 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամ կամ քսաներեք տարին չլրացած ցերեկային ուսուցմամբ սովորող ընտանիքի անդամներին), (b) տնային տնտեսությունները, որոնք ղեկավարվում են տարիքային կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց կողմից (տարեցների), (այն չի ներառում ՀՀ զինված ուժերում պարտադիր զինծառայություն անցնող, 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամ կամ քսաներեք տարին

օժանդակություն, ինչպես նաև նրանց կտրվի առաջնայնություն Օրագրի իրականացման հետ կապված աշխատատեղերի համար ընտրություն կատարելիս:

- b. Երբ ազդեցության է ենթարկվում եկամտի աղբյուր հանդիսացող գույքի ավելի քան 10%-ը, ԾԱԵԱ-ները կստանան լրացուցիչ օժանդակություն զգալի ազդեցության համար, որը համարժեք է ազդեցության ենթակա հողից ստացվող մեկ տարվա համախառն բերքի շուկայական արժեքին:

97. Փոխհատուցման միջոցառումները կնախատեսվեն հատուկ ՏՔՇ-ի ներքո՝ ի լրումն օտարված գույքի փոխարինման արժեքի վճարման:

98. Այնպիսի կորուստների դեպքում, որոնք հեշտությամբ չեն կարող գնահատվել կամ փոխհատուցվել դրամական առումով (ինչպես օրինակ՝ հանրային ծառայությունների մատչելիությունը, հաճախորդները և մատակարարները, ձկնորսությունը, արտավայրերը կամ անտառային տարածքները), փորձեր կկատարվեն՝ ապահովելու համարժեք և մշակութային տեսանկյունից ընդունելի միջոցների հասանելիությունը և վաստակելու հնարավորությունները:

Հանրային լսումներ, պլանավորում և ժամկետներ

99. ԾԱԵԱ-ներին կտրվի լիարժեք փոխհատուցում փոխարինման արժեքով՝ առանց ամորտիզացիոն մասհանումների, և նրանք կվերաբնակեցվեն պատշաճ խորհրդակցություն ստանալուց հետո:

100. Տարաբնակեցման ծրագրերը կմշակվեն և կիրականացվեն՝ խորհրդակցելով ԾԱԵԱ-ների հետ:

101. Կիրականացվի տարաբնակեցման և վերականգնողական միջոցառումների արդյունավետ և ժամանակին նախագծում, պլանավորում և իրականացում՝ խուսափելու համար անհարկի ուշացումներից և ԾԱԵԱ-ների համար անհարմարությունների առաջացումից:

102. ԾԱԵԱ-ների տարաբնակեցման, փոխհատուցման և վերականգնողական ծրագրերի համար սահմանվում են այնպիսի ժամկետներ, որպեսզի երաշխավորվի նոր հողի և բնակարանների առկայությունը նախքան ծրագրի կամ վերջինիս ենթաբաղադրիչի շրջանակներում շինարարական աշխատանքների մեկնարկը:

103. Հողի մաքրման կամ ծրագրին առնչվող ցանկացած շինարարական աշխատանք, որն ազդեցության է ենթարկում ԾԱԵԱ-ներին, չի մեկնարկի մինչև ԾԱԵԱ-ները չստանան փոխհատուցումը և վերականգնման համար տրամադրվող աջակցությունը:

չլրացած ցերեկային ուսուցմամբ սովորող ընտանիքի անդամներին), (c) աղքատ տնային տնտեսությունները, որոնք հաշվառված են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Ընտանեկան նպաստի համակարգում և ՀՀ օրենսդրությամբ ահմանված կարգով ստանում են համապատասխան օժանդակություն. եթե ԱԵՏՏ-ն, ըստ ազդեցության գնահատման հետազոտության, ճանաչվել է աղքատ, ապա ՀՎԷԷ հիմնադրամը աջակցություն կցուցաբերի ԱԵՏՏ-ին գրանցվելու համար: Ընտանեկան նպաստի համակարգում գրանցվելուն պես, այս տնային տնտեսությունները նպաստ ստանալու իրավունք ունեն:

Տեղափոխում

104. ԾԱԵԱ-ներին կտրամադրվի լիարժեք աջակցություն անձնական իրերի, գույքի և/կամ շարժական կառույցների, եթե այդպիսիք կան, տեղափոխման համար: Նրանց նաև կվճարվի տեղափոխման նպաստ՝ ի հավելումն տան, հողի և այլ գույքի դիմաց տրվող փոխհատուցման:

Մոնիտորինգ

105. Կիրականացվեն ինստիտուցիոնալ միջոցառումներ տարաբնակեցման գործողությունների ներքին մոնիտորինգի համար: Անհրաժեշտության դեպքում, ՏԳԾ-ում կներգրավվի արտաքին վերահսկողության մարմին՝ ապահովելու համար ՏԳԾ-ի մշակման և իրականացման գործողությունների անկախ մոնիտորինգը¹¹:

4.3. Ազդեցության ենթակա գույքի գնահատումը

106. ՏԳԾ-ի մշակման ընթացքում ՀՎԷԷ հիմնադրամը կվարձի գիտակ և իրագեկ անկախ գնահատողի ծառայությունները, որը պատասխանատու կլինի ազդեցության ենթակա գույքի փոխարինման արժեքը որոշելու համար: Գնահատման գործընթացում կարող են խորհրդակցություններ անցկացվել ԾԱԵԱ-ների, ՏԻՄ-երի և ՀՀ կառավարությանն առընթեր համապատասխան մարմինների (ինչպես օրինակ՝ ՀՀ կառավարությանն առընթեր ԱԳՊԿ-ն) հետ: Գնահատումը կիրականացվի ՀՀ գնահատման մասին օրենքի և ՀՀ գնահատման ստանդարտների շրջանակում: Այն դեպքում, եթե ներպետական օրենքները չեն համապատասխանում լիարժեք փոխարինման արժեքով փոխհատուցման ստանդարտներին, ապա փոխարինման արժեքով փոխհատուցման համար կկիրառվեն ՀԲ քաղաքականությունները, ուղեցույցները և տեխնիկական մասնագրերը: Հետևաբար, փոխհատուցման և վերականգնման միջոցառումները կմշակվեն ՀՎԷԷ հիմնադրամի կողմից՝ գնահատման հաշվետվությունների հիման վրա: Կանխատեսվող կորուստների տեսակների գնահատման ուղղորդող սկզբունքները թվարկված են ստորև:

4.3.1. Հողի և կառույցների գնահատումը

107. Հողի մասով փոխարինման արժեքը սահմանվում է հետևյալ կերպ.

108. Գյուղատնտեսական նշանակության հողի դեպքում այն հանդիսանում է ծրագրի ազդեցությանը ենթակա հողին մոտ տեղակայված և արտադրողականության կամ օգտագործման համարժեք ներուժով հողի շուկայական գինը, որն առկա է կամ նախքան ծրագրի մեկնարկը կամ նախքան տեղափոխումը (որն ավելի բարձր է), գումարած այն ծախսերը, որոնք կատարվում են հողը հասցնելու համար ծրագրի ազդեցությանը ենթակա հողի մակարդակին, ինչպես նաև գրանցման և փոխանցման հարկերի գումարը՝ ՀՀ գնահատման ստանդարտի համեմատական մեթոդի հիման վրա (մանրամասները ներկայացված են ՀԱՎԵԼՎԱԾ 7-ում):

109. Քաղաքային վայրերի հողի դեպքում այն հանդիսանում է ազդեցությանը ենթակա հողին մոտ տեղակայված և համարժեք չափի և օգտագործման, նմանատիպ կամ բերելավված հանրային ծառայությունների մատուցման ենթակառուցվածքներով և ծառայություններով հողի նախքան

¹¹Մանրամասները տես ստորև բերված Մաս 5.3 -ում

տեղափոխումն առկա շուկայական գինը գումարած գրանցման և փոխանցման հարկերի գումարը՝ ՀՀ գնահատման ստանդարտի համեմատական մեթոդի հիման վրա (մանրամասները ներկայացված են ՀԱՎԵԼՎԱԾ 7-ում):

110. Կառույցները կգնահատվեն շինության տեսակի, նյութերի արժեքի, աշխատուժի, տրանսպորտային/այլ շինարարական աշխատանքների փոխարինման արժեքի հիման վրա: Եթե ԾԱԵԱ-ն չի ցանկանում վերաբնակեցվել, մասնակի ազդեցությունները կարող են վճարվել միայն շինության ազդեցության ենթակա մասի կամ վերանորոգման համար:
111. Ազդեցության ենթակա գույքի դիմաց ԾԱԵԱ-ին փոխհատուցելու նպատակով գույքի փոխարինման արժեքը որոշելիս հաշվի չեն առնվում գույքի ամորտիզացիան և փրկված նյութերի/կրկին օգտագործման ենթակա նյութերի արժեքը: Բացի այդ, ազդեցությանը ենթարկված գույքի արժեքը գնահատելիս չեն հանվում նաև այն օգուտները, որոնք պետք է ստացվեն ծրագրից: Օտարման գործընթացին առնչվող գործառնական ծախսերի և/կամ հարկերի համար մասհանումներ չեն կատարվի:

4.3.2 Մշակարույսերի գնահատումը

112. Առկա միամյա մշակարույսերը կգնահատվեն մեկ տարվա բերքի զուտ շուկայական արժեքի չափով:

4.3.3. Ծառերի գնահատումը

113. Ազդեցության ենթակա հավանական տարածքում ծառ չկա:

5. ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

5.1. Տարաբնակեցման վերաբերյալ պահանջները և նախագծային փուլում ստուգման գործընթացը

114. Տարաբնակեցմանն առնչվող պլանավորման գործընթացը պետք է սկսվի նախագծային փուլում ենթակառուցվածքների ծրագծի նախնական պլանավորմամբ: Հողի մշտական կորստից/տարաբնակեցման ազդեցություններից խուսափելը և հողի ժամանակավոր կորուստը նվազագույնի հասցնելը Ծրագրի շրջանակներում ենթակառուցվածքների կառուցման նախագծի հիմնական նախապայմանն է:

115. Յուրաքանչյուր բաղադրիչի/ենթաբաղադրիչի շրջանակում հնարավոր մշտական և/կամ ժամանակավոր կորուստները բացահայտելու նպատակով Ծրագրի շրջանակներում կիրականացվի Պաշտոնական ստուգման/նախնական հետազոտության գործընթաց, ներառյալ հետևյալ քայլերը՝

a. ՀՎԷԷ հիմնադրամը ՆԽ-ի աջակցությամբ կբացահայտի հնարավոր ազդեցությունները և կհետևի դրանց՝ անհրաժեշտության դեպքում այցելություններ կատարելով այն տեղամասերը, որտեղ ակնկալվում են ազդեցությունները: ՆԽ-ն պետք է ՀՎԷԷ հիմնադրամին տրամադրի գոյություն ունեցող ելակետային վիճակի նախնական և փաստաթղթավորված նկարագրությունը, որը մասնավորապես առնչվում է, սակայն սահմանափակված չէ, տարաբնակեցմանը, բաղադրիչի համար անհրաժեշտ հողին (մշտական կամ ժամանակավոր), ինչպես նաև ազդեցության ենթակա տարածքում հողի սեփականության և ազդեցության ենթակա գույքի բացահայտմանն ու քարտեզագրմանը, եթե այդպիսիք կան: Յուրաքանչյուր նախագծից առաջ ՆԽ-ն կուսումնասիրի յուրաքանչյուր համայնքի կադաստրային քարտեզները՝ բացահայտելու համար մասնավոր և/կամ օգտագործվող հողերի, ինչպես նաև համայնքային հողերի տեղավայրերը: ՏԻՄ-երը պետք է տրամադրեն հավաստի տվյալներ այն հողերի և կառույցների նկատմամբ սեփականության իրավունքի տեսակի վերաբերյալ, որոնք հավանական է, որ Ծրագրի արդյունքում ազդեցության կենթարկվեն: Կադաստրային և համայնքային քարտեզների ստուգումը պետք է կատարվի նաև դաշտում՝ դիտարկումների և չափագրումների հիման վրա, որտեղ կիրառելի է: Վերջինիս իրականացմամբ հնարավոր կլինի խուսափել/նվազագույնի հասցնել ազդեցությունը իրավական գրանցում ունեցող/իրավական գրանցում չունեցող հողերի/կառույցների վրա: Գործունեությունը պետք է իրականացվի Տեղական ինքնակառավարման մարմինների հետ սերտ համագործակցությամբ:

b. ՀՎԷԷ հիմնադրամն անհրաժեշտության դեպքում կկազմակերպի տեղամասային այցելություններ: Վերջինս կներառի (i) տեղական իշխանությունների հետ նախնական քննարկումներ, (ii) ՆԽ-ի կողմից տրամադրված տեղեկատվության ստուգում և (iii) անհրաժեշտության դեպքում, հնարավոր ազդեցությունների ծավալի և նշանակության վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների ձեռքբերում:

c. Բաղադրիչի համար, որը կհաստատվի, որ ներառում է հավանական տարաբնակեցում կամ տարաբնակեցման ազդեցություններ, հետագայում պետք է պլանավորվի ինտենսիվ ակտիվացման և խորհրդատվության գործընթաց՝ ներառելու հավանական

ազդեցության ենթակա համայնքները: Խորհրդատվության գործընթացը պետք է պատշաճ կերպով փաստաթղթավորվի ՆԽ-ի կողմից, և արդյունքները ներկայացվեն ՀՎԷԷ հիմնադրամին՝ հետագա մշակման համար, ինչպես նաև հաստատելու, որ տվյալ նախագծին կարելի է ընթացք տալ (կամ հակառակը):

d. Եթե շարունակելու վերաբերյալ հաստատումը ձեռք է բերվել և իրավունքների կասեցման օրը հայտարարվել է, ԾԱԵԱ-ները և տեղական իշխանությունները տեղեկացվում են նախատեսված փոխհատուցման և տարաբնակեցման մասին:

e. Այնուհետև, միաժամանակ կիրականացվի ԾԱԵԱ-ների մարդահամարի հետազոտություն և կորուստների գույքագրում՝ ԾԱԵԱ-ներին պատճառվող անհանգստությունը նվազագույնի հասցնելու և ՏԳԾ-ի մշակման գործընթացն արագացնելու համար: Անհրաժեշտության դեպքում, միաժամանակ կիրականացվի Էլակետային հետազոտություն¹²:

f. Հետազոտության արդյունքները պատրաստ լինելուն պես, որոշում է կայացվում՝ արդյոք այդ բաղադրիչի համար պետք է մշակվի ՏԳԾ-ի (հակիրճ կամ ամբողջական, ինչպես կիրառելի է) նախագծային տարբերակ ՀՎԷԷ հիմնադրամի կողմից, կամ արդյոք Պաշտոնական ստուգումը բավարար է:

g. Եթե ՏԳԾ-ով պահանջվում է, ապա կօգտագործվեն Հավելված 5-ում ցույց տրված սխեմաները: Կապահովվեն բավարար մանրամասներ և ՏԳԾ-ները պետք է համապատասխանեն սույն ՏԲԾ-ին (վերջինիս սկզբունքներին):

5.2. Տարաբնակեցման գործողությունների ծրագրի տեսակները

116. Համաձայն ՀԲ ՕՔ 4.12-ի՝ բոլոր ծրագրերի համար, որոնք ենթադրում են տարաբնակեցում, պահանջվում է ՏԳԾ: Տարաբնակեցման ծրագրի շրջանակն ու մանրամասնությունների աստիճանը տարբերվում են ըստ տարաբնակեցման ծավալի և բարդության՝ Ծրագրի կատեգորիայի հիման վրա (ԳՔ 4.12, պարբերություն 25, Հավելված A, պարբերություն 2-22):

a. Այն դեպքում, եթե ծրագրի հողի օտարման արդյունքում ազդեցության են ենթարկվում ավելի քան 200 անձինք, օտարվում է հողի ավելի քան 10 տոկոսը և/կամ այն ներառում է բնակչության ֆիզիկական տեղահանում, ապա անհրաժեշտ է ամբողջական ՏԳԾ:

b. Ընդունելի է հակիրճ ՏԳԾ-ի պատրաստումը, եթե վերաբնակեցվում են 200-ից պակաս անձինք:

117. Եթե նույնիսկ ազդեցության են ենթարկվում ավելի քան 200 անձինք, եթե հողի ամբողջ օտարումը զգալի չէ (օտարվում է բոլոր հողերի 10 տոկոսը կամ ավելի պակաս) կամ/և չի ներառում բնակչության ֆիզիկական տեղահանում, ապա հակիրճ ՏԳԾ-ն ընդունելի է: Եթե 200-ից պակաս թվով անձինք են տեղահանվում, սակայն կա ֆիզիկական տեղահանում, ապա հակիրճ ՏԳԾ-ն ընդլայնվում է՝ ներառելով տարաբնակեցման ծրագիրը: Նկարագրությունը ներկայացված է Աղյուսակ 1-ում:

¹² Էլակետային հետազոտությունը պահանջվում է, եթե ԾԱԵԱ-ի ֆիզիկական տեղափոխությունն անխուսափելի է և/կամ եթե որոշ ԾԱԵԱ-ներ կորցնում են իրենց արտադրական գույքի ավելի քան 10%-ը: ծանոթագրություն 6, ՀԲ ՕՔ 4.12, Հավելված A

Աղյուսակ 1: Ենթաբաղադրիչի դասակարգումը և Տարաբնակեցման ծրագրի վերաբերյալ պահանջները

Ծրագրի կատեգորիա	Ազդեցության ենթակա անձանց թիվը	Տարաբնակեցման	Ծրագրավորման պահանջները
A	200 կամ ավել ԾԱԵԱ-ներ ենթարկվում են հիմնական ազդեցությունների՝ -Ֆիզիկական տեղահանում և/կամ - իրենց արտադրական գույքի ավելի քան 10%-ի կորուստ	Զգալի	Ամբողջական ՏԳԾ
B	200-ից պակաս անձինք են ենթարկվում հիմնական ազդեցություններին	Ոչ զգալի	Հակիրճ ՏԳԾ
C	Գույքի և եկամուտների կորուստ, կամ Ֆիզիկական տեղահանում չկա	Չկա	ՏԳԾ չի պահանջվում

118. Սույն ՏՔՇ-ի շրջանակում հատուկ ՏԳԾ-ները կներառեն մարդահամարի և սոցիալ-տնտեսական հետազոտության ելակետային տվյալները, փոխհատուցման հատուկ դրույքաչափերը և ստանդարտները, քաղաքականության իրավասությունները՝ կապված մարդահամարի և հետազոտության միջոցով բացահայտված որևէ լրացուցիչ ազդեցությունների հետ, տարաբնակեցման տեղավայրերի նկարագրությունը, բարելավման ծրագրերը կամ կենսապահովման միջոցների և կենսամակարդակի վերականգնումը, տարաբնակեցման գործողությունների իրականացման ժամանակացույցը և մանրամասն նախահաշիվները: Այս առաջադրանքներն իրականացնելիս առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել վերաբնակեցվողների շրջանակում խոցելի խմբերի կարիքներին, հատկապես նրանց, որոնք աղքատության սահմանագծից ցածր են գտնվում, հաշմանդամներին, տարեցներին, կանանց և երեխաներին կամ այլ վերաբնակեցված անձանց, ովքեր չեն կարող պաշտպանված լինել հողի/գույքի փոխհատուցման վերաբերյալ ներպետական օրենքներով:

119. Հաստատումը ձեռք բերելուց հետո կնախաձեռնվեն փոխհատուցման, տարաբնակեցման և վերականգնման գործողությունները, որոնք կավարտվեն նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը:

120. ՀՀ օրենսդրությունը պահանջում է հասարակության բոլոր խմբերի պաշտպանությունը միևնույն մակարդակով, ներառյալ նրանց, ովքեր նշված են որպես խոցելի խմբեր: Այս սկզբունքն արտացոլված է ՀՀ Սահմանադրության մեջ: Մասնավորապես, Սահմանադրության Հոդված 14.1-ը սահմանում է. «Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

121. Սահմանադրության Հոդված 6-ը սահմանում է. «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն»: Բոլոր օրենքները և այլ իրավական ակտերը պետք է համահունչ լինեն Սահմանադրությանը:

5.3. Տարաբնակեցման գործողությունների պլանի մշակումն ու հաստատումը

122. Սույն ՏԶԾ-ն ուղեցույց է հանդիսանում Տարաբնակեցման գործողությունների ծրագրերի (ՏԳԾ) մշակման համար: ՏԳԾ-ներն անհրաժեշտության դեպքում հատուկ կմշակվեն ՀՎԷԷ հիմնադրամի կողմից՝ համապատասխան սոցիալական մասնագետի, շինարար-ինժեների և գնահատման խորհրդատուների աջակցությամբ: ՀՎԷԷ հիմնադրամն անհրաժեշտության դեպքում կվերանայի և ՀԲ-ի հաստատմանը կներկայացնի ՏԳԾ-ների վերջնական տարբերակը: Հաստատումը ձեռք բերելուց հետո կիրականացվեն փոխհատուցման, տարաբնակեցման և վերականգնման գործողությունները և կավարտվեն նախքան Ծրագրի շինարարական աշխատանքների մեկնարկը:

123. ՏԳԾ-ի մշակումը կմեկնարկի նախնական նախագծի պատրաստումից և ՀՎԷԷ հիմնադրամի կողմից հաստատվելուց և համապատասխան մարմինների կողմից ԾԱԵԱ-ների բացահայտման նպատակներով կասեցման օրը հրապարակայնորեն հայտարարելուց անմիջապես հետո: Հիմնական իրականացվելիք գործողությունները ներառում են, սակայն կարող են սահմանափակված չլինել հետևյալով՝

- i. Կասեցման օրի սահմանում
- ii. Մարդահամարի և չափագրման հետազոտություն, ինչպես նաև ԾԱԵԱ-ների կորուստների գույքագրում
- iii. Խորհրդակցություններ ԾԱԵԱ-ների հետ, ինչպես նաև հանրային լսումներ ազդեցության ենթակա համայնքում
- iv. Ազդեցության ենթակա համայնքում Բողոքների լուծման մեխանիզմի հիմնում
- v. Փոխհատուցման սխեմայի մշակում
- vi. Հողի և գույքի կորստի գնահատում
- vii. Տարաբնակեցման իրականացման միջոցառումների փաստաթղթավորումը, ներառյալ՝ գույքի օտարումը, փոխհատուցումը, տեղափոխությունը և վերականգնումը
- viii. Ինդիկատիվ բյուջեի և իրականացման ժամանակացույցի մշակումը
- ix. ՏԳԾ-ների հաստատումը ՀՎԷԷ հիմնադրամի, և ՀԲ-ի կողմից:

5.4. ՏԳԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

5.4.1 Ծրագրի ազդեցությանը ենթակա անձանց մարդահամար և ցուցակագրում

124. Ծրագրի կողմից կիրականացվի Ծրագրի գործողությունների բացասական ազդեցությանը ենթարկվող ընտանիքների և անձանց մարդահամար: Մարդահամարի ընթացքում կազմվում է այն բոլոր կորուստների ցուցակը, որոնք ունենալու է ծրագրի ազդեցությանը ենթակա յուրաքանչյուր անձ: Այս տեղեկատվությունը պետք է ընդգրկի առնվազն հետևյալը՝ (ա) անձանց քանակը, հիմնական զբաղմունքը և եկամտի մակարդակը, (b) տների քանակը, տեսակը և չափերը; (c) բոլոր բնակելի նշանակության հողակտորների քանակը, որակը և մակերեսը, (d) յուրաքանչյուր ԾԱԵԱ-ին պատկանող գյուղատնտեսական նշանակության այն հողի մակերեսը, տեսակը, կատեգորիան և քանակը, որը վերջինս կորցնելու է, (e) գյուղատնտեսական նշանակության հողի սեփականության կարգավիճակը և վարձակալի կողմից վճարվող

վարձակավման վճարը, եթե կիրառելի է, (f) վարձակավող այն բոլոր այլ անշարժ գույքի քանակը, կատեգորիան և չափը, որոնց վրա ծրագիրն ունեցել է բացասական ազդեցություն, (g) կորցրած արտադրական ակտիվները՝ որպես ընդհանուր արտադրական ակտիվների տոկոսը, (h) արտադրական ակտիվներին հասցված ժամանակավոր վնասը, (i) ոչ գյուղատնտեսական գործունեության արդյունքում վաստակած ապրուստի որակը, կատեգորիան և ծավալը, որի վրա ծրագիրն ունի բացասական ազդեցություն, (j) օտարվող համայնքային ռեսուրսների որակը, տեսակը և քանակը:

5.4.2. Գույքատների բացահայտում

125. Գույքագրումը կներառի ա) ազդեցության ենթակա հողակտորի նկարագրությունը (տեսակը, չափը, այլ կիրառելի նկարագրությունը), բ) ազդեցության ենթակա մշակաբույսերի վերաբերյալ տվյալներ՝ ըստ տեսակի և քանակի, գ) ազդեցության ենթակա ծառերի վերաբերյալ տվյալներ՝ ըստ տեսակի և քանակի, դ) ազդեցության կամ տեղափոխման ենթակա կառույցների վերաբերյալ տվյալներ:

126. Եթե ծրագիրը ներառի ԾԱԵԱ-ների վերաբնակեցում կամ հողի փոխարինում, ապա տվյալները պետք է հավաքագրվեն բնակելի և/կամ գյուղատնտեսական նպատակներով հասանելի/առկա փոխարինող հողի կատեգորիայի, տեղավայրի, տարածքի, տեսակի վերաբերյալ: Պետք է հոգ տանել, որ վերաբնակեցման վայրը կամ փոխարինող հողը գտնվեն ԾԱԵԱ-ի նախորդ տեղավայրի մերձակայքում՝ խուսափելով սոցիալական միջավայրը փոխելուց և ԾԱԵԱ-ների տնտեսական կենսամակարդակի անիրատեսական դասակարգումից:

5.4.3 Ելակետային հետազոտություն

127. Բացի մարդահամարից և ծրագրի ազդեցությանը ենթակա հողերի և գույքի գույքագրումից, ամբողջական ՏԳԾ-ն պետք է ներառի ծրագրի ազդեցությանը ենթակա բնակչության ելակետային հետազոտություն: Ելակետային հետազոտությունը կապահովի տվյալներ առկա սոցիալական կառուցվածքի, սեփականության հարցերի և ռեսուրսների օգտագործման, ընդհանուր գույքային ռեսուրսներից օգտվելու հնարավորության, սոցիալական ծառայությունների և ենթակառուցվածքների վերաբերյալ, որոնք հասանելի են ծրագրի տարածքում տարբեր սոցիալական խմբերի համար՝ հստակորեն բացահայտելով հատուկ հետաքրքրություններ կայացնող բոլոր խմբերը, մասնավորապես՝ անապահով և խոցելի խմբերը (օրինակ՝ վարձակալներ, հող չունեցող աշխատողներ և կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսություններ) և նկարագրելով ծրագրի առումով նրանց առանձնահատկությունները:

5.5. Տարաբնակեցման գործողությունների ծրագրի իրականացման գործընթացը

128. ՀՎԷԷ հիմնադրամի կողմից կհիմնվի/կնշանակվի այն մարմինը, որը կգործի որպես ՏԳԾ իրականացման բաժին (ՏԳԾԻԲ) և Ծրագրի համար կիրականացնի հաստատված ՏԳԾ (ները): ՏԳԾԻԲ-ը կաշխատի ՀՎԷԷ հիմնադրամի և ՀԲ-ի վերահսկողության ներքո: ՏԳԾ-ում ներկայացված բոլոր գործողությունները կֆինանսավորվեն վարկային միջոցներից և կավարտվեն նախքան

առնչվող շինարարական աշխատանքների մեկնարկը: Ազդեցության փոքր ծավալի դեպքում, ՀՎԷԷ հիմնադրամը կարող է որոշել փոխանցել այս գործառնությունները ՀՎԷԷ հիմնադրամի որևէ բաժնին: Այդ դեպքում, եթե անհրաժեշտ է, կհզորացվեն ՀՎԷԷ հիմնադրամի կարողությունները՝ որոշ մասնագետների (օրինակ՝ արտոնագրված չափագրող) կարճաժամկետ ծառայությունների միջոցով: ՏԳԾԻԲ-ի հիմնական պարտավորություններն ու գործողությունները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով.

- a. Հանգամանորեն խորհրդակցել ԾԱԵԱ-ների և Տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Հանրությանը տրամադրել անհրաժեշտ տեղեկատվությունը և ազդեցության ենթակա բոլոր համայնքներում (ոչ միայն ԾԱԵԱ-ներին) ապահովել տարաբնակեցման հարցերի վերաբերյալ թափանցիկ և ժամանակին իրազեկում և հաղորդակցություն,
- b. Ստուգել ՏԳԾ-ի մարդահամարի և գույքագրման տվյալները,
- c. Իրականացնել կադաստրային և տեղագրական հետազոտություններ և ապահովել չափագրման և գույքագրման տվյալների ուղղումը, եթե դա պահանջվում է հնարավոր նախագծային փոփոխությունների հետևանքով,
- d. Պատրաստել պայմանագրեր և/կամ համաձայնագրեր՝ ԾԱԵԱ-ների կողմից ստորագրվելու համար, բանակցել դրանց շուրջ և համաձայնեցնել ԾԱԵԱ-ների հետ,
- e. Պատրաստել փաստաթղթեր նոր հողակտորների գրանցման համար կամ հողի սերվիտուտի իրավունքի կադաստրային գրանցումը, եթե անհրաժեշտ լինի,
- f. Փոխհատուցման տրամադրում. դրամական փոխանցումները կվճարվեն բանկային փոխանցումների միջոցով: Եթե ԾԱԵԱ-ն չունենա բանկային հաշիվ, վերջինս անվճար կբացվի նրա համար Ծրագրի կողմից,
- g. Պահպանել բողոքների լուծման ընթացակարգը,
- h. Դեպքերի դատական կարգով լուծում, համաձայնություն ձեռք չբերելու դեպքում,
- i. Ենթակառուցվածքի կառուցում (տարաբնակեցման անհրաժեշտության դեպքում) և ԾԱԵԱ-ների վերաբնակեցման կազմակերպում,
- j. Պատրաստել ՏԳԾ-ի Ավարտական հաշվետվություն:

129. Հարկ է նշել, որ ՏԳԾ-ի գոհացուցիչ ավարտը և ՏԳԾ-ի ավարտական հաշվետվությունը բաղադրիչի շինարարական (ֆիզիկական) աշխատանքների մեկնարկի նախապայման է (Մանրամասները ներկայացված են Գլուխ 8-ում): Աղյուսակը, որը ներկայացնում է ՏԳԾ-ի մշակման և իրականացման համար առաջարկվող յուրաքանչյուր քայլերի և պարտականությունների հպանցիկ դիտարկում, ներկայացված է ստորև.

N	Գործողություն	Պատասխանատվություն և*
A	Տարաբնակեցման գործողությունների ծրագրի մշակումը (ՏԳԾ)	
1	ՏԳԾ-ի գնահատում	ՆԽ
2	Մանրամասն նախագծի վերջնականացում	ՆԽ


N	Գործողություն	Պատասխանատվություն*
3	Մարդահամարի և կորուստների մանրամասն գույքագրման գործիքների, հանրային կապերի զարգացման ծրագրի և ՏԳԾի մշակման ժամանակացույցի պատրաստում	ՆԽ / ՀՎԷԷ հիմնադրամ
4	Կադաստրային տվյալների և քարտեզների ձեռքբերում	ՀՎԷԷ հիմնադրամ / ՆԽ
6	Համայնքի ղեկավարների և ազդեցության ենթակա անձանց ներկայացուցիչների հետ քայլերով անցնել առաջարկվող ծրագծի երկայնքով	ՀՎԷԷ հիմնադրամ / ՆԽ
7	Նախնական ուսումնասիրությունների (եթե անհրաժեշտ են) ՀՀ կառավարության որոշման հաստատում	ՀՀ կառավարություն, պատրաստվելու է ՀՎԷԷ հիմնադրամի կողմից
8	Կասեցման օրվա սահմանում	ՀՎԷԷ հիմնադրամ
9	ԾԱԵԱ-ների հետ հանրային լսումների կազմակերպում	ՆԽ/ ՀՎԷԷ հիմնադրամ
10	Մարդահամարի անցկացում	ՆԽ
11	Հողի սեփականության հաստատում և ոչ իրավասու հողօգտագործողների բացահայտում, հողի օրինական կարգավիճակի ստացում, եթե կիրառելի է	ՆԽ
12	Մանրամասն չափագրման հետազոտության իրականացում	ՆԽ-ն՝ արտոնագրված կազմակերպության միջոցով
13	Գույքագրում	ՆԽ
14	Ազդեցության ենթակա գույքի գնահատում	ՆԽ-ն՝ արտոնագրված գնահատողների միջոցով
15	Գույքի նկարագրության արձանագրությունների ստորագրում	ՆԽ/ ՀՎԷԷ հիմնադրամ
16	Գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշում	ՀՀ կառավարություն, պատրաստվելու է ՀՎԷԷ հիմնադրամի կողմից
17	ՏԳԾ հաշվետվության պատրաստում	ՆԽ
18	ՀԲ-ի կողմից ՏԳԾ-ի հաստատումը	ՀԲ
19	ՏԳԾ-ի հրապարակումը	ՆԽ/ ՀՎԷԷ հիմնադրամ
20	ՏԳԾ-ի վերանայումը՝ շահառուների մեկնաբանությունների հիման վրա	ՆԽ
21	ՀԲ-ի վերջնական դիտարկումը և հաստատումը	ՀԲ
22	ՏԳԾ-ի ներկայացումը ՀՀ կառավարությանը	ՀՎԷԷ հիմնադրամ
B	ՏԳԾ-ի իրականացման նախապատրաստական գործողություններ	
1	ՏԳԾ իրականացման բաժնի հիմնում	ՀՎԷԷ հիմնադրամ
2	Բողոքների լուծման մեխանիզմի հիմնում, ներառյալ՝ բողոքների լուծման հանձնաժողովը	ՀՎԷԷ հիմնադրամ
3	Վճարման մեթոդի սահմանումը և առևտրային բանկերի (եթե այդպիսիք կան) սահմանումը՝ փոխհատուցման գումարները փոխանցելու համար	ՀՎԷԷ հիմնադրամ
C	ՏԳԾ-ի իրականացում	
1	Փոխհատուցումների վճարում	ՀՎԷԷ հիմնադրամ /ՏԳԾԻԲ
2	Համապատասխանության հաշվետվության պատրաստում	ՀՎԷԷ հիմնադրամ
3	Համապատասխանության հաշվետվության հաստատում	ՀԲ
4	ՇԻՆԱԸԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿ	Կապալառու
D	Շարունակական առաջադրանքները	
1	ՏԳԾ-ի իրականացման ներքին մոնիտորինգ	ՀՎԷԷ հիմնադրամ
2	Բողոքների լուծում	ՀՎԷԷ հիմնադրամ

* Պարտավորությունները կարող են վերանայվել ՊՇ-ների և համապատասխան խորհրդատուների պայմանագրերի հիման վրա

6. ԲՈՂՈՔՆԵՐ ԵՎ ԴԺԳՈՀՈՒԹՅՈՒՆՆԵՐ

130. ԾԱԵԱ-ների և շահառու համայնքների անդամների ծրագրի իրականացման վերաբերյալ մտահոգությունները, դժգոհությունները և բողոքները ստանալու և դրանց լուծման գործընթացին նպաստելու համար կհիմնվի բողոքների լուծման մեխանիզմը (ԲԼՄ), որի միջոցով կլուծվի ցանկացած բողոք, որն առաջանում է նախագծման, ՏԳԾ-ի մշակման և շինարարության փուլերում:
131. Բողոքների լուծման մեխանիզմն ակտիվորեն և արագորեն կլուծի ազդեցության ենթակա անձանց մտահոգություններն ու բողոքները՝ օգտագործելով հասկանալի, հաղորդակցված և թափանցիկ գործընթաց՝ գենդերային տեսակետից զգայունակ, մշակութային տեսանկյունից համապատասխան, ինչպես նաև ԾԱԵԱ-ների բոլոր սեգմենտների և շահառու համայնքի համար մատչելի՝ առանց ծախսերի: Նախքան ՏԳԾ-ն մշակելը և շինարարական աշխատանքները ՀՎԷԷ հիմնադրամը կիրառելի շահառու համայնքին բողոքների լուծման մեխանիզմի մասին և կտրամադրի կոնտակտային անձանց տվյալները, ովքեր պատասխանատու են ՏԳԾ –ի մշակման վաղ փուլերում և շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ կազմակերպված հանրային լսումների ընթացքում համայնքի բողոքներն ու արձագանքները հավաքագրելու համար: Մեխանիզմը չի խոչընդոտի գործը երկրի դատական կամ վարչական մարմիններին ներկայացնելը: ԲԼՄ-ն կներառի երկու մակարդակ՝ ՀՎԷԷ հիմնադրամը և բողոքների լուծման հանձնաժողովը: Յուրաքանչյուր մակարդակ նկարագրված է ստորև.

Նկար 2. Բողոքների լուծման մեխանիզմ



Տեղական ինքնակառավարման մարմիններ. ներգրավվածությունը ԲԼՄ-ում

132. ԾԱԵԱ-ների և համայնքի անդամների հետ ուղիղ կապ ապահովելու և նրանց դժգոհությունները գրանցելու և դրանց համապատասխան ժամկետներում լուծումներ տալու նպատակով ՀՎԷԷ հիմնադրամը կհիմնի բողոքների լուծման մեխանիզմի առաջին փուլը՝ համագործակցելով Տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Սույն ՏԳԾ-ն համայնքներում իրականացնելու համար հանրային լսումների ընթացքում համայնքից կընտրվի հանրության հետ կապերի պատասխանատու (կոնտակտային անձ)՝ խորհրդակցելով համայնքի անդամների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Համայնքի կոնտակտային անձը կգրանցի բողոքը և կփոխանցի այն ՀՎԷԷ հիմնադրամի կոնտակտային անձին:

Բողոքների լուծման հանձնաժողով. առաջադրանքները և կազմը

133. Եթե բողոքը մնում է չլուծված, ապա ԾԱԵԱ-ներն անձամբ կամ Տեղական ինքնակառավարման մարմինների/ՀՎԷԷ հիմնադրամի միջոցով կարող են բողոքի ձևաթուղթը ներկայացնել Բողոքների լուծման հանձնաժողովին (ԲԼՀ), որը կկազմվի ՀՎԷԷ հիմնադրամի կողմից: Բողոքների լուծման հանձնաժողովը (ԲԼՀ) ծրագրային մակարդակում կհիմնվի անմիջապես՝ հետևելով ծրագրի մեկնարկին (և ոչ ուշ, քան նախագծային փուլի մեկնարկը)՝ տարաբնակեցմանն առնչվող դժգոհություններն ու բողոքները լուծելու համար՝ կանխելով տարաձայնությունների տեղափոխումը դատարան: ԲԼՀ-ն կազմված կլինի ՀՎԷԷ հիմնադրամի աշխատակիցներից, ծրագրի տարածաշրջանի համապատասխան Տեղական ինքնակառավարման մարմինների և/կամ մարզպետարանի ներկայացուցիչներից, ինչպես նաև տեղական հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ների) և համայնքի անդամներից: ԲԼՀ-ն կունենա նախագահ (ՀՎԷԷ հիմնադրամի ներկայացուցիչը) և առնվազն 4 անդամներ: ԲԼՀ-ի նիստերը կգումարվեն ՀՎԷԷ հիմնադրամի կողմից՝ առանձին դեպքերի քննարկման հիմունքներով՝ տարաբնակեցմանն առնչվող բողոքներն ու դժգոհությունները լուծելու համար: ՀՎԷԷ հիմնադրամը պետք է ապահովի, որ ԲԼՀ նիստերը գումարվեն ոչ ուշ, քան բողոքը ստանալուց հետո՝ 5 օրվա ընթացքում: Հիմնավորող բոլոր փաստաթղթերը (լուսանկարներ, տեխնիկական եւ իրավական փորձագետների կարծիքները, անհրաժեշտ հավաստագրերը և այլն) պետք է պատրաստվեն ՀՎԷԷ հիմնադրամի կողմից նախքան հանդիպումը: ՀՎԷԷ հիմնադրամը կկազմի յուրաքանչյուր հանդիպման արձանագրությունը, որը կհամաձայնեցվի և կստորագրվի ԲԼՀ բոլոր անդամների կողմից քննարկումից հետո՝ 2 օրվա ընթացքում:

134. Ստեղծվելուց հետո մեկ շաբաթվա ընթացքում ԲԼՀ-ն պետք է ՀՎԷԷ հիմնադրամ ներկայացնի աշխատանքի ընթացակարգը: Ընթացակարգով հստակ կսահմանվեն բողոքների ներկայացման և լուծման կանոնները, այդ թվում՝ բողոքարկումների մասով հաշվետվողականության մեխանիզմները, ինչպես նաև կենտրոնական և տեղական մակարդակներում պատասխանատու պաշտոնյաների հասցեներն ու անունները (բողոքարկումների հաշվետվության ձևաչափը ներկայացված է Հավելված 10-ում): Ընթացակարգի հաստատումից հետո այն պետք է հասանելի լինի ՀՎԷԷ հիմնադրամի կայքէջում ծրագրի իրականացման ժամանակահատվածում և ԾԱԵԱ-ներին ներկայացվի հանրային լսումների ընթացքում: ԲԼՀ-ն պետք է կազմակերպի իր աշխատանքը՝ ապահովելով առավելագույն մատչելիություն, թափանցիկություն, տեղեկատվության տրամադրում և մասնակցություն և ուղղված կլինի ծրագրի ազդեցությանը ենթակա բնակչության շահերի առավելագույն պաշտպանությանը: ԲԼՀ-ի Պարտավորությունների շրջանակը ներառում է հետևյալը.

- a. Հստակորեն հասկանալ ԾԱԵԱ-ների կողմից ներկայացվող խնդիրները
- b. Միջնորդ դատարան կամ բանակցություն՝ ԾԱԵԱ-ների և իրականացնող մարմինների միջև վիճահարույց դեպքերի թափանցիկ և արդար լսումների հիման վրա
- c. Կայացնել անաչառ և անկողմնակալ որոշումներ իրենց ներկայացված բոլոր բողոքների վերաբերյալ

- d. Խորհուրդ տալ ՀՎԷԷ հիմնադրամին՝ ինչպես լավագույնս լուծել ԾԱԵԱ-ների խնդիրները
- e. ԾԱԵԱ-ների բողոքները ստանալու և իրականացման կարգավիճակի մոնիտորինգ:

Ընթացակարգը

- 135. ՀՎԷԷ հիմնադրամը բոլոր ջանքերը կգործադրի ՏԳԾ-ի շրջանակներում տարաբնակեցման բացահայտված խնդիրները համայնքային (1-ին քայլ) և ծրագրային (2-րդ քայլ) մակարդակում խաղաղ ճանապարհով հարթելու ուղղությամբ: Եթե առաջարկված լուծումը/արձագանքը չի բավարարել բողոքարկողին, ապա ԾԱԵԱ-ն կարող է իր բողոքը ներկայացնել ԲԼՀ-ին: Չհաջողելու դեպքում ծրագրի ազդեցությանը ենթակա անձը կարող է իր հայեցողությամբ բողոք ներկայացնել դատարան կամ ԲԼՀ-ին:
- 136. Սույն ՏԲԾ-ին առնչվող հանրային լուսմների ընթացքում ՀՎԷԷ հիմնադրամը կապ կհաստատի համայնքային իշխանությունների հետ, կներկայացնի ծրագիրը և հնարավոր սոցիալական ու տարաբնակեցման ռիսկերը, ինչպես նաև կընտրի կոնսուլտային անձ յուրաքանչյուր համայնքային իշխանությունից ՀՎԷԷ հիմնադրամի հետ համագործակցելու և համայնքային մակարդակում բողոքների լուծման գործընթացը համակարգելու համար:
- 137. ՏԳԾ-ի մշակման ընթացքում (ինչպես օրինակ՝ հանրային լուսմներին զուգահեռ) համայնքի պատասխանատու անձանց համար ՀՎԷԷ հիմնադրամի և/կամ վերջինիս խորհրդատուների կողմից կկազմակերպվեն ուսուցողական դասընթացներ: Դասընթացները կներառեն թեմաներ, որոնք վերաբերում են բողոքների գրանցմանը, ԾԱԵԱ-ների հետ հաղորդակցությանը, ՏԲԾ հիմնական սկզբունքներին, ներառյալ՝ իրավունքներին և իրավասություններին, ծրագրի ժամկետներին և դրա նյութատեխնիկական ապիովմանը և այլ առնչվող խնդիրներին, որոնք պետք է սահմանվեն ՏԳԾ մշակման փուլի սկզբում:
- 138. Պոտենցիալ ԾԱԵԱ-ներից բոլոր բողոքներն արդյունավետ հավաքելու համար կարելի է հատկացնել որևէ կոնկրետ վայր(եր)՝ բողոքները ժամանակին ներկայացնելու և հավաքելու համար, օրինակ՝ ազդեցության ենթակա բոլոր համայնքներում տեղադրել տուփեր՝ բողոքների և առաջարկությունների համար:
- 139. ԾԱԵԱ-ները կարող են ներկայացնել բողոքները բանավոր (դրանք պետք է պատշաճ կերպով փաստաթղթավորվեն հատկացված վայրում՝ բողոքը ներկայացնելու պահին) կամ գրավոր կերպով:
- 140. Պատասխանը կտրվի բողոքի ստացումից հետո՝ երկու շաբաթվա ընթացքում:
- 141. Եթե հարցը չի լուծվում Տեղական ինքնակառավարման մարմինների, այնուհետև՝ ՀՎԷԷ հիմնադրամի, իսկ հետո՝ Բողոքների լուծման հանձնաժողովի մակարդակով, ապա այն կարող է կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ ներկայացվել դատարան: Նշվածի համար անհրաժեշտ բոլոր վճարումները կկատարվեն Ծրագրի կողմից, երբ հաստատվում է, որ ծրագրի ազդեցությունը կրող անձը ստանում է նպաստ ՀՀ կառավարության Ընտանեկան նպաստների

ծրագրից¹³: Բոլոր մյուս ԾԱԵԱ-ները պատասխանատու կլինեն իրենց ծախսերը սեփական միջոցներով հոգալու համար:

142. Բողոքների լուծման առաջարկվող ընթացակարգը և մեխանիզմները ԾԱԵԱ-ներին կներկայացվեն և կքննարկվեն հանրային լսումների ընթացքում ՏԳԾ-ի մշակման գործընթացի վաղ փուլերում և անհրաժեշտության դեպքում կվերանայվեն:

143. ՀՎԷԷ հիմնադրամը մոնիտորինգի կենթարկի ԲԼՄ իրականացումը՝ այդ մասին զեկուցելով ՀԲ-ին ծրագրի առաջընթացի վերաբերյալ հաշվետվությունների միջոցով (Հավելված 10-ում ներկայացված է ԲԼՄ-ի մոնիտորինգի ձևաթուղթը):

Հարկադիր օտարման վարույթ

144. Եթե ՀՎԷԷ հիմնադրամը և ԾԱԵԱ-ն չեն կարողանում գալ համաձայնության մասնավոր սեփականության օտարման շուրջ, ՀՀ կառավարությունը հետամուտ կլինի հարկադիր օտարման վարույթի՝ համաձայն «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-185-Ն, 27 նոյեմբեր, 2006 թ.):

Դատարան

145. Հայաստանում գործող դատարանները հանդիսանում են ՏԳԾ իրականացման հետ կապված մտահոգությունների և խնդիրների լուծման վերջին աստյանը: ՀՎԷԷ հիմնադրամի և ԾԱԵԱ-ի միջև մասնավոր սեփականության օտարման շուրջ բանակցությունների ձախողման դեպքում, ՀՀ կառավարությունը, օգտագործելով գործող օրենսդրության վրա հիմնված բռնագրավման իր մանդատը, բռնագրավման հայց կներկայացնի դատարան: Դրա հաստատումից և սահմանված ընթացակարգերից հետո տվյալ սեփականությունն անցնում է Կառավարությանը, երբ դատարանի կողմից վերջինիս շնորհվում է բռնագրավման իրավունք:

146. Այն դեպքերում, երբ չի հաջողվում հարթել ՏԳԾ իրականացման և փոխհատուցման հետ կապված բողոքներն ու դժգոհությունները և Բողոքների լուծման հանձնաժողովի միջնորդությունը ևս արդյունք չի տալիս, ծրագրի ազդեցությանը ենթակա անձն ունի դատարան՝ որպես վերջին աստյան, բողոք ներկայացնելու իրավունք: Դատարանի որոշումը վերջնական է և ենթակա է կատարման:

147. Ըստ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի (հոդված 13)՝ ձեռք բերողը պարտավոր է դիմել դատարան, եթե սեփականատերը և/կամ օտարման ենթակա սեփականության նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձինք կամավոր կերպով չեն ստորագրում օտարման մասին համաձայնագիրը, ընդ որում, դատարանում քննարկման ենթակա են միայն փոխհատուցման գումարի հետ կապված խնդիրները: Այսպիսով, ԾԱԵԱ-ները չեն կարող վիճարկել փոխհատուցման գումարը դատարանում սեփական նախաձեռնությամբ: Առաջարկված գումարի հետ համաձայն չլինելու դեպքում նրանք չեն ստորագրում օտարման համաձայնագիրը, ինչի

13 Հիմնվելով մի շարք (ունեցվածք և եկամուտ) ցուցանիշների վրա՝ սույն Ծրագիրը տարբեր չափի աջակցություն է տրամադրում այն ընտանիքներին, որոնք ի վիճակի չեն լիարժեք կամ մասնակիորեն հոգալ իրենց ամենօրյա պահանջները

դեպքում էլ ձեռք բերողը դիմում է դատարան, եթե դեռևս ցանկանում է ձեռք բերել օտարման ենթակա գույքը:

7. ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

148. Համաձայն ՀԲ ԳՔ 4.12-ի՝ ԾԱԵԱ-ներին պետք է տրվի լիարժեք խորհրդատվություն և հնարավորություն՝ մասնակցելու ՏԳԾ-ի պլանավորման և իրականացման բոլոր փուլերին: Նույն սկզբունքով, ԾԱԵԱ-ները ժամանակին և համապատասխան ձևով կտեղեկացվեն գործընթացի պլանավորման արդյունքների, ինչպես նաև ՏԳԾ-ի իրականացման ժամանակացույցերի և ընթացակարգերի մասին: ՀՎԷԷ հիմնադրամի կողմից պետք է իրականացվի հանրային տեղեկատվական և խորհրդատվական քարոզարշավ ՏԳԾ-ի իրականացման բոլոր փուլերի ընթացքում: Ազդեցության ենթակա կողմերին կտրվի հնարավորություն ներկայացնել իրենց մտքերը և առաջարկությունները՝ տարաբնակեցման գործողությունների պլանավորման և իրականացման գործընթացում հաշվի առնելու նպատակով: Հետաքրքրված տարբեր ՀԿ-ները ՀՎԷԷ հիմնադրամի կողմից ակտիվորեն ներգրավված կլինեն հանրային լուսմների ողջ գործընթացում:
149. ՀՎԷԷ հիմնադրամը կկազմակերպի խորհրդակցություններ ԾԱԵԱ-ների հետ և կհրավիրի նրանց մասնակցելու հանրային լուսմներին՝ գործընթացի սկզբնական փուլում, ինչպես նաև ՏԳԾ-ի մշակման և իրականացման ընթացքում կազմակերպվող հանրային լուսմներին, ինչպես նկարագրված է նախորդ բաժիններում:
150. ՏԳԾ-երը հասանելի կլինեն ՏԻՄ գրասենյակներում՝ ծրագրի, դրա ազդեցությունների և առաջարկվող մեղմացնող միջոցառումների և տնտեսական վերականգնման գործողությունների վերաբերյալ հուսալի տեղեկատվությամբ:
151. Յուրաքանչյուր ազդեցության ենթակա տնային տնտեսությանը կտրամադրվի հանրային տեղեկատվական թերթիկ՝ կասեցման օրվա, իրավունքների և իրավասությունների չափանիշների, փոխհատուցման ձևերի, բողոքների և դժգոհությունների լուծման ընթացակարգերի վերաբերյալ տեղեկություններով: Այս տեղեկատվությունը հասանելի կլինի հանրության համար և ԾԱԵԱ-ների համար՝ առանց ծախսերի: Հրապարակման վայրը նույնպես կհայտարարվի հանրային լուսմների ընթացքում:
152. Հանրային լուսմների ընթացքում կայացած բոլոր քննարկումները կփաստաթղթավորվեն և կպահվեն ՀՎԷԷ հիմնադրամի կողմից:
153. Յուրաքանչյուր ՏԳԾ-ի ավարտից հետո ՀՎԷԷ հիմնադրամի և իր խորհրդատուների կողմից կիրականացվի ամփոփ հետազոտություն ԾԱԵԱ-ների շրջանում՝ գնահատելու նրանց գոհունակությունը գործընթացից և ՏԳԾ-ի արդյունքներից: Այս հետազոտություններից քաղված դասերը կներառվեն ծրագրի առաջընթացի վերաբերյալ հաշվետվություններում:

8. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

154. Ինստիտուցիոնալ միջոցառումներ կիրականացվեն տարաբնակեցման գործողությունների ներքին մոնիտորինգի համար: ՏԳԾ-ում, անհրաժեշտ համարվելու դեպքում, կներառվի արտաքին մոնիտորինգի կազմակերպություն՝ ապահովելու համար ՏԳԾ-ի մշակման և իրականացման գործողությունների անկախ մոնիտորինգը, մասնավորապես՝ համապատասխանությունը դիտարկելու և հաշվետվություններ պատրաստելու համար: ՏԳԾ-ն (և Ծրագրի ներքո հետագա ՏԳԾ-ները) կթարմացվի ՏԳԾ-ի վերջնական աուդիտի բացահայտումների արդյունքում: Տարաբնակեցման գործողությունները բոլոր բաղադրիչներում կանոնավորապես կվերահսկվեն և մոնիտորինգի կենթարկվեն ՀՎԷԷ հիմնադրամի անձնակազմի կողմից: Ներքին մոնիտորինգի վերաբերյալ հաշվետվությունը կիրականացվի ՀՎԷԷ հիմնադրամի կողմից և կներառվի Ծրագրի առաջընթացի վերաբերյալ հաշվետվությունում: Յուրաքանչյուր ՏԳԾ-ի ավարտին ՀԲ-ին կներկայացվի ՏԳԾ-ի ավարտական հաշվետվությունը: Ներքին մոնիտորինգի և վերահսկողության իրականացմամբ

- a. հաստատվում է, որ իրականացվել է բոլոր ԾԱԵԱ-ների մարդահամար,
- b. հաստատվում է, որ անհրաժեշտության դեպքում, մշակվել են ՏԳԾ և ելակետային հետազոտություն,
- c. հաստատվում է, որ իրականացվել է գույքի գնահատում և տարաբնակեցում՝ համաձայն սույն ՏՔՇ -ի և համապատասխան ՏԳԾ-ի դրույթների,
- d. վերահսկվում է, որ տարաբնակեցման բոլոր միջոցառումներն իրականացվեն ըստ հաստատվածի,
- e. ապահովվում է, որ տարաբնակեցման աշխատանքների իրականացման համար ֆինանսական միջոցները տրամադրվեն ժամանակին, բավարար լինեն նախատեսված նպատակների իրագործման համար և ծախսվեն համաձայն սույն ՏՔՇ-ի և համապատասխան ՏԳԾ -ի դրույթների:

155. Անհրաժեշտության դեպքում ՏԳԾ -ում կներգրավվի արտաքին մոնիտորինգ իրականացնող մարմին՝ տարաբնակեցման աշխատանքների անկախ մոնիտորինգի համար: Ներքին մոնիտորինգի հաշվետվությունների ստուգումից/հաստատումից բացի, արտաքին մոնիտորինգի միջոցով իրականացվում է հետևյալը՝

- a. ԾԱԵԱ-ների վրա տարաբնակեցման սոցիալ-տնտեսական ազդեցության գնահատում
- b. ստուգում, թե արդյոք ԾԱԵԱ-ների կենսապայմանների և եկամտի մակարդակների բարելավման կամ, առնվազն, վերականգնման նպատակն իրագործվել է, և
- c. անհրաժեշտության դեպքում տարաբնակեցման իրականացումը բարելավելու վերաբերյալ առաջարկների ներկայացում՝ ապահովելու համար սույն ՏՔՇ -ում և համապատասխան ՏԳԾ(ներ)ում սահմանված սկզբունքների և նպատակների իրագործումը:

156. Շինարարության ավարտից հետո ՏԳԾ-ն կյթարմացվի, եթե անհրաժեշտ համարվի ՀՎԷԷ հիմնադրամի կամ վերջինիս խորհրդատուների կողմից: ՏԳԾ-ի վերջնական աուդիտի համար պատասխանատու կողմը կսահմանվի ՏԳԾ-ում՝ առկա ռեսուրսների և ազդեցության նշանակության հիման վրա: Օրինակ՝ դա կարող է լինել վերահսկողություն իրականացնող կազմակերպությունը կամ արտաքին մոնիտորինգ իրականացնող մարմինը:

9. ԾԱԽՍԵՐ ԵՎ ԲՅՈՒՋԵՆԵՐ

157. Ծրագրի նպատակներին հասնելու համար անհրաժեշտ տարաբնակեցման գործողությունների ամբողջական ծախսերը պետք է ներառվեն ծրագրի ընդհանուր ծախսերում: Տարաբնակեցման ծախսերը, ինչպես ծրագրի այլ գործողությունների ծախսերը, համարվում են վճար՝ ծրագրի տնտեսական օգուտների դիմաց, և տարաբնակեցվողների ցանկացած զուտ օգուտը ("առանց ծրագրի" պայմանների հետ համեմատությամբ) ավելացվում է ծրագրի օգուտների հոսքին¹⁴:

158. ՏԳԾ իրականացման ֆինանսավորման աղբյուրը պետք է նշվի Ծրագրի վարկային համաձայնագրում: ՀՎԷԷ հիմնադրամը ՀԲ-ին կներկայացնի տարաբնակեցման մանրամասն ծախսերը վերջնական ՏԳԾ-ների հիման վրա, ներառյալ՝ ազդեցությունների/կորուստների բացվածքն ըստ տեսակի (օրինակ՝ գյուղատնտեսական նշանակության հող, բնակելի հող, տներ, այլ ակտիվներ) և ազդեցության ենթակա ապրուստի միջոցները: Ծախսերի նախահաշիվները բավարար կլինեն ՏԳԾ-ի իրականացման (ՏԳԾ իրականացման խորհրդատուների ներգրավում, օտարման պայմանագրերի և գրանցմանն առնչվող ծախսերը և այլն (ըստ անհրաժեշտության)) համապատասխան մոնիտորինգի և վերահսկման և չնախատեսված ծախսերի համար:

159. Ծրագիրը չի համարվի ավարտված, քանի դեռ չեն իրագործվել ՏԳԾ-ների բոլոր նպատակները:

¹⁴ՀԲ ԳՔ 4.12, պարբ. 20

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՍԽԵՄԱ

Կորստի տեսակը	Նկարագրություն	Ազդեցությանը ենթակա անձինք	Փոխհատուցում ստանալու իրավունքը
1. Գյուղատնտեսական հողի մշտական կորուստ	Բոլոր կորցրած հողերը անկախ ազդեցության աստիճանից	Հողի սեփականատեր, օրինական կարգավիճակ ստանալու ենթակա սեփականատեր՝ սեփականության նկատմամբ իր իրավունքները գրանցելուց հետո	* Հնարավորության դեպքում հող հողի դիմաց փոխհատուցում կորցրած հողակտորներին համարժեք և նույն արտադրողականությամբ հողակտորներով, կամ * Ազդեցության ենթարկված հողի դիմաց դրամական փոխհատուցում շուկայական կամ կադաստրային արժեքով (որն ավելի բարձր է)՝ առանց հարկերի, գրանցման և փոխանցման՝ գումարած 15% շուկայական արժեք կամ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է) * Օտարման գոտու անհրաժեշտության հետևանքով հողակտորների մնացած մասը, որը վերածվել է փոքր, ոչ կենսունակ կտորների կամ դարձել է անօգտագործելի մուտքերի փոփոխման, ոռոգման կամ աշխատանքի համար պիտանելիության առումով, կընդգրկվի ազդեցությանը ենթակա հողում և դրանց դիմաց կտրամադրվի փոխհատուցում ըստ վերը նշվածի: Այսպիսի դեպքերում, ՀՀ օրենսդրության համաձայն, ՄԱԵԱ-ները պետք է ծրագրից պահանջեն օտարել իրենց ամբողջ հողակտորը և ոչ միայն դրա ազդեցության ենթարկվող մասը Գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 60 օրվա ընթացքում:
		Համայնքային և պետական հողի իրավական գրանցման կարգավիճակ ունեցող վարձակալ	* Վարձակալության թարմացում այն հողակտորների համար, որոնք ունեն նույն արժեքը/արտադրողականությունը, ինչ կորցրած հողակտորները, կամ դրամական փոխհատուցում, եթե ազդեցության է ենթարկվել ամբողջ հողակտորը, կամ * պետք է ստանա փոխհատուցում ազդեցության ենթակա հողի շուկայական կամ կադաստրային արժեքով (որն ավելի բարձր է)՝ ըստ վարձակալության տարիների՝ հետևյալ համամասնություններով. 1) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%, 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%, 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%, 4) 25 և ավելի տարի՝ հողի արժեքի 25%
		Համայնքային և պետական հողի իրավական գրանցման կարգավիճակ չունեցող վարձակալ	* Հողի օգտագործման կորստի դիմաց միանգամյա վերականգնման նպաստ՝ մեկ տարվա բերքի զուտ շուկայական արժեքին համարժեք (ի հավելումն բերքի համար փոխհատուցման), վերականգնման լրացուցիչ նպաստ ըստ անհրաժեշտության (որոշվելու է կոնկրետ ՏԳԾ-ում)

	Հավելյալ դրույթներ եկամուտ ստեղծող ակտիվների վրա զգալի ազդեցության դիմաց (գյուղատնտեսական նշանակության հողի > 10% կորուստ)	Բոլոր ԾԱԵԱ-ները անկախ իրավական գրանցման կարգավիճակից	* Միանգամյա զգալի ազդեցության նպատակով, որը համարժեք է ազդեցության ենթակա հողի մեկ գույտ բերքի շուկայական արժեքին մեկ տարվա համար, ի հավելումն բերքի համար փոխհատուցման
2. . Հողի ժամանակավոր կորուստ		Հողի սեփականատերերը և իրավական գրանցման կարգավիճակ ունեցող վարձակալները	* Ազդեցության ենթակա հողը և հաղորդողները կվերականգնվեն՝ բերվելով մինչ ծրագիրն առկա վիճակին * Վարձավճարը ենթակա է համաձայնեցման հողատիրոջ/վարձակալի և կապալառուի միջև՝ կորցրած եկամտին համարժեք՝ ըստ շուկայական գնի (օրինակ՝ կորցրած բերքի փոխհատուցում ըստ 1 հեկտարից միջինում հավաքված բերքի) * Դրամական փոխհատուցում կորցրած ակտիվների համար (օրինակ՝ բերք)
		Իրավական գրանցման կարգավիճակ չունեցող հողօգտագործողները	* Ազդեցության ենթակա հողը և հաղորդողները կվերականգնվեն՝ բերվելով մինչ ծրագիրն առկա վիճակին * Դրամական փոխհատուցում կորցրած ակտիվների համար (օրինակ՝ բերք)
3. Ոչ գյուղատնտեսական հողի մշտական կորուստ		Հողի սեփականատեր	* Հնարավորության դեպքում հող հողի դիմաց փոխհատուցում կորցրած հողակտորներին համարժեք և նույն արտադրողականությամբ հողակտորներով, կամ * Ազդեցության ենթարկված հողի դիմաց դրամական փոխհատուցում շուկայական կամ կադաստրային արժեքով (որն ավելի բարձր է)՝ առանց հարկերի, գրանցման և փոխանցման՝ գումարած 15% շուկայական արժեք կամ գույքի կադաստրային արժեք (որն ավելի բարձր է) * Օտարման գոտու անհրաժեշտության հետևանքով հողակտորների մնացած մասը, որը վերածվել է փոքր, ոչ կենսունակ կտորների կամ դարձել է անօգտագործելի մուտքերի փոփոխման, ոռոգման կամ աշխատանքի համար պիտանելիության առումով, կընդգրկվի ազդեցությանը ենթակա հողում և դրա դիմաց կտրամադրվի փոխհատուցում ըստ վերը նշվածի: Այսպիսի դեպքերում, ՀՀ օրենսդրության համաձայն, ԾԱԵԱ-ները պետք է ծրագրից պահանջեն օտարել իրենց ամբողջ հողակտորը և ոչ միայն դրա ազդեցության ենթարկվող մասը Գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 60 օրվա ընթացքում:

		Իրավական գրանցման կարգավիճակ ունեցող վարձակալ	* Վարձակալության թարմացում այն հողակտորների համար, որոնք ունեն նույն արժեքը/արտադրողականությունը, ինչ կորցրած հողակտորները կամ դրամական փոխհատուցում, եթե ազդեցության է ենթարկվել ամբողջ հողակտորը , կամ * պետք է ստանա փոխհատուցում ազդեցության ենթակա հողի շուկայական կամ կադաստրային արժեքով (որն ավելի բարձր է)՝ ըստ վարձակալության տարիների՝ հողի արժեքի հետևյալ համամասնություններով. 1) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%, 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%, 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%, 4) 25 և ավելի տարի՝ հողի արժեքի 25%
		Իրավական գրանցման կարգավիճակ չունեցող հողօգտագործող	* Անհրաժեշտության դեպքում ինքնավերաբնակեցման նպատակով, անհրաժեշտության դեպքում , լրացուցիչ վերականգնման նպատակով (որոշվելու է կոնկրետ ՏԳԾ-ում)
4. Տներ, շենքեր և կառույցներ		Բոլոր իրավական գրանցման կարգավիճակ ունեցող կառույցների սեփականատերերը	* Դրամական փոխհատուցում փոխարինման դրույքաչափերով՝ ազդեցության ենթակա շինությունների և այլ հիմնական միջոցների համար առանց փրկված նյութերի, ամորտիզացիոն մասնահանումների և գործառնական ծախսերի՝ զումարած փոխարինման արժեքի 15%: Մասնակի ազդեցության դեպքում տրամադրվում է լիարժեք ֆինանսական աջակցություն՝ շինության մնացած մասը վերականգնելու համար: Փոխհատուցումը կներառի կորցրած ջրամատակարարման և էլեկտրական միացումների արժեքը:
		Իրավական գրանցման կարգավիճակ չունեցող կառույցների օգտագործողները	* Դրամական փոխհատուցում փոխարինման դրույքաչափերով՝ ազդեցության ենթակա շինությունների և այլ հիմնական միջոցների համար առանց փրկված նյութերի, ամորտիզացիոն մասնահանումների և գործառնական ծախսերի: Մասնակի ազդեցության դեպքում տրամադրվում է լիարժեք ֆինանսական աջակցություն՝ շինության մնացած մասը վերականգնելու համար: Փոխհատուցումը կներառի կորցրած ջրամատակարարման և էլեկտրական միացումների արժեքը:
5. Բերք	Ազդեցության ենթարկված/կորցրած բերք	Բոլոր ԾԱԵԱ-ները անկախ իրավական գրանցման կարգավիճակից	* Բերքի դիմաց դրամական փոխհատուցում շուկայական արժեքով մեկ տարվա համախառն բերքի համար, որը տրամադրվում է և՛ հողատերերին, և՛ վարձակալներին՝ հիմնվելով նրանց բերքի մասնաբաժնի մասով կոնկրետ համաձայնագրերի վրա: Անհրաժեշտության դեպքում կտրամադրվի հավելյալ աջակցություն վերականգնման համար (որոշվելու է կոնկրետ ՏԳԾ -ում):
6. Գենսապա հովման միջոցներ	Մոցիալական աջակցության համակարգերի կորուստ	Բոլոր ԾԱԵԱ-ները անկախ իրավական գրանցման կարգավիճակից	* Գենսապահովման միջոցները առնվազն պետք է վերականգնվեն մինչև այն մակարդակը, որն առկա էր սեփականությունից զրկվելու, տեղահանման կամ հասանելիության սահմանափակման պահին * Եթե կրած կորուստները փոխարինելու տարբերակներ չկան, կիրառվող ռազմավարությունները կարող են ներառել հմտությունների զարգացումը, աշխատավարձով աշխատանքի ընդունելը կամ ինքնազբաղվածությունը, այդ թվում՝ վարկից օգտվելու հնարավորությունը

7. Տեղափոխում	Տեղափոխման (տրանսպորտային) և անցումային ժամանակահատվածում կենսապահովման ծախսեր	Տեղահանված բոլոր ԾԱԵԱ-ները	* Դրամական փոխհատուցում տեղափոխմամբ պայմանավորված տրանսպորտային ծախսերը և ապրուստի միջոցները հոգալու համար: Ժամանակահատվածը սահմանվելու է ՏԳԾ-ում:
8. Տան վարձակալներ		Տուն վարձակալած վարձակալներ	* Կանխիկ դրամի տրամադրում երեք ամսվա վարձի համար՝ տվյալ վայրում առկա շուկայական արժեքով, աջակցության տրամադրում այլ կացարան գտնելիս
9. Համայնքային ակտիվներ			* Ազդեցության ենթարկված շինությունների/հարմարությունների վերականգնում/փոխարինում (օրինակ՝ պաշտամունքի վայրեր, հետիոտների համար նախատեսված կամուրջներ, ճանապարհներ, դպրոցներ, բուժկենտրոններ, արտավայրեր, անտառային տարածքներ և այլն)՝ ապահովելով նախքան ծրագրի մեկնարկն առկա գործառույթները և խորհրդակցելով համայնքների հետ
10 Խոցելի անձանց կենսապահովման միջոցները		Աղքատության սահմանագծից ցածր կենսամակարդակ ունեցող ԾԱԵԱ-ները	*Առաջնահերթություն ծրագրին առնչվող աշխատատեղերում աշխատանք գտնելու , վերապատրաստման հնարավորություններում, ինքնազբաղվածության և աշխատավարձով աշխատանքի աջակցություն *Վերականգնման աջակցության փաթեթը որոշվելու է ըստ դեպքերի վերլուծության՝ կախված ազդեցության տեսակից, ազդեցության աստիճանից և անհրաժեշտ աջակցությունից

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ

Անձինք՝

- * Մարդկանց և տնային տնտեսությունների հանրագումարը ազդեցության ենթակա յուրաքանչյուր կատեգորիայում
Յուրաքանչյուր անձի տարիքը, սեռը, զբաղմունքը
- * Խոցելիության տեսակներ (օրինակ՝ հաշմանդամ, սոցիալական աջակցություն ստացող և այլն)

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Անձնական գույք, այդ թվում՝ մանրամասներ ստորև նշված սեփականությունների մասին՝

- * Շինություններ՝ տներ, ֆերմերային շինություններ, խանութներ, արտադրական շինություններ, հացահատիկի չորացման տարածք, արտաքնոցներ և այլն
- * Հող և տեսակը՝ ոռոգվող և չոռոգվող, անտառային տարածքներ, արոտավայրեր, անմշակ հող և այլն
- * Հողի վրա չհավաքված բերքի մոտավոր արժեքը և նկարագիրը
- * Այլ՝ ընտանի անասուններ, ջրհորներ, ծառեր, բնական ռեսուրսներ և այլն

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- * Հող՝ գյուղի ընդհանուր հողեր, հավաքման վայրեր և արոտավայրեր, ձկնորսության տարածքներ/վայրեր և այլն
- * Շինություններ և հաստատություններ՝ դպրոցներ, բուժհաստատություններ, գերեզմանոցներ, տաճարներ, համայնքային կենտրոններ, հասարակական տրանսպորտ, բանկեր, կոոպերատիվներ և այլն

Ենթակառուցվածք՝ խմելու ջրի և ջրամատակարարման այլ համակարգեր, մուտքի և ներքին ճանապարհներ, էլեկտրաէներգիայի և սնուցման այլ աղբյուրներ:

ԱԵԱ -ՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՆ ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝

- * Ֆերմայից ստացվող եկամուտ
- * Ֆերմայից դուրս աշխատանք
- * Ոչ պաշտոնական աշխատանքների ոլորտում

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Ընդհանուր տեղեկություններ

- i. Հարցաշարի ծածկագիր և հարցման ամսաթիվ
- ii. Հարցազրուցավարի անուն
- iii. Մարզի, շրջանի և գյուղի/ անվանում

2. Տնային տնտեսությունների հաշվառում

- ա/ Տնային տնտեսության ղեկավարի և բոլոր անդամների անունները
- բ/ Տնային տնտեսության անդամների կապը տնային տնտեսության ղեկավարի հետ
- գ/ Տնային տնտեսության յուրաքանչյուր անդամի տարիքը և սեռը
- դ/ Տեղեկատվություն էթնիկ պատկանելության մասին
- ե/ Յուրաքանչյուր անդամի կրթական մակարդակը
- զ/ Յուրաքանչյուր անդամի հիմնական զբաղվածությունը և ամսական եկամուտը
- է/ Յուրաքանչյուր անդամի եկամուտները երկրորդական աղբյուրներից
- ը/ Աշխատանքի կամ ձեռնարկատիրական գործունեության տեղակայման վայրը, եթե կան այդպիսիք
- թ/ Տվյալ վայրում մնալու տևողությունը

3. Հողի սեփականության կարգավիճակը

- ա/ Հողի կատեգորիան
- բ/ Հողի սեփականության տեսակը և սեփականատիրոջ/տնային տնտեսության անդամի անունը
- գ/ Սեփականության տեսակը հաստատող առկա փաստաթղթի տեսակը
- դ/ Եթե հողի տերը չէք հանդիսանում, ապա սեփականատիրոջ անունն ու հասցեն
- ե/ Եթե առկա է ոչ պաշտոնական օգտագործման իրավունք, ապա՝ համաձայնության տեսակը
- զ/ Օգտագործման տարիների քանակը
- է/ Վարձակալման ամսավճարը վճարվում է վարձակալի կողմից
- ը/ Վարձակալի կողմից կատարված կանխավճարները

Նշում՝ Եթե հաշվառումն ու ցուցակագրումը կատարվում են առանձին-առանձին, անհրաժեշտ է նաև հավաքել որոշ տեղեկատվություն հողի օգտագործման, ազդեցությանը ենթակա շինությունների և այլ հիմնական միջոցների և ազդեցությանը ենթակա ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ:

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Հողի օգտագործում

ա/ Հողի առկա օգտագործում

բ/ Վայրեր, որտեղ հողն օգտագործվում է տարբեր նպատակներով, եթե կիրառելի է

գ/ Հողի ընդհանուր և ազդեցության ենթարկված մակերեսը՝ բաժանված ըստ օգտագործման նպատակների, եթե կիրառելի է

դ/ Գնահատել, թե արդյոք մնացած մակերեսը կենսունակ է շարունակական օգտագործման համար

ե/ Հողի ընդհանուր մակերեսն ըստ տեսակների՝ փոխհատուցման նպատակով

2. Շինություններ

ա/ Շինության տեսակը

բ/ Հարկերի քանակը

գ/ Մակերեսն ըստ հարկերի

դ/ Շինության սեփականատիրոջ անունը

ե/ Կառուցման տարին

զ/ Շինության համար թույլտվության առկայությունը

է/ Շինության օգտագործումը և մակերեսներն ըստ օգտագործման նպատակի, եթե կիրառելի է

ը/ Տանիքի, պատերի և հատակի համար օգտագործված շինանյութի նկարագիրն ըստ մակերեսների

թ/ Հիմքի տեսակը

ժ/ Շինության ատանձնահատկությունների նկարագիր

ի/ Հաղորդողիների միացում (էլեկտրաէներգիայի հաշվիչ, ջրամատակարարում և այլն)

լ/ Հաղորդողիների միացումների վարձավճարները

խ/ Շինության ազդեցության ենթարկված մասը

ծ/ Գնահատել, թե արդյոք մնացած շինությունը կենսունակ է շարունակական օգտագործման համար

կ/ Շենքի ընդհանուր մակերեսը՝ փոխհատուցման նպատակով

3. ԱՅԼ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա/ Շինությունների տեսակը (պատեր, պատնեշ պատեր, ցանկապատ, պահեստ և այլն)

բ/ Ազդեցության ենթակա ձկնաբուծական լճի մակերեսը

գ/ Տնային տնտեսության միջին եկամուտը ձկնաբուծական լճից

դ/ Ազդեցության ենթակա շինությունների մակերեսների և շինանյութերի նկարագիրը

ե/ Այլ շինությունների օգտագործում

4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ

ա/ Ազդեցության ենթակա բերքի տեսակը

բ/ Ազդեցության ենթակա բերքի սեփականատերը

գ/ Ազդեցության ենթակա հողի տարեկան ընդհանուր արտադրողականությունը

դ/ Միջին բերքատվությունը

ե/ Շուկայում վաճառվող ցանկացած ապրանք

զ/ Բերքի աճեցման համար ներգրավվող աշխատողներ/աշխատուժ

է/ Բերքի միջին արժեքը

ը/ Տնային տնտեսության միջին եկամուտը գյուղատնտեսական գործունեությունից

5. ԾԱՌԵՐ

ա/ Ազդեցության ենթակա ծառերի քանակը և տեսակը

բ/ Ծառերի տարիքը

գ/ Ծառերի սեփականատիրոջ անունը

դ/ Մրգատու ծառերի միջին բերքատվությունը

ե/ Մրգատու ծառերից ստացվող միջին տարեկան եկամուտը

6. Ձեռնարկատիրական գործունեություն

ա/ Ազդեցության ենթակա ձեռնարկատիրական գործունեության տեսակը

բ/ Ձեռնարկատիրական գործունեության սեփականատիրոջ անունը

գ/ Ձեռնարկատիրական գործունեության գրանցումը/թույլտվության համարը (ստուգել փաստաթուղթը)

դ/ Տնային տնտեսության տարեկան ընդհանուր եկամուտը ձեռնարկատիրական գործունեությունից

ե/ Ձեռնարկատիրական գործունեության գործարկման միջին ծախսերը

զ/ Ձեռնարկատիրական գործունեությունում ներգրավված աշխատակիցների քանակը

է/ Մշտական և ժամանակավոր աշխատակիցների քանակը

ը/ Միջին եկամուտը և շահույթը՝ ըստ եկամտահարկի համար ներկայացված հաշվետվության (ստուգել փաստաթուղթը)

թ/ Արդյոք կա՞ ձեռնարկատիրական գործունեության վայրի տեղափոխման անհրաժեշտություն

7. Ազդեցության ենթակա հաղորդուղիներ և հարմարություններ

ա/ Ազդեցության ենթակա համայնքային ենթակառուցվածքի նկարագիրը

- բ/ Ազդեցության ենթակա հարմարությունների նկարագիրն ըստ մակերեսի և օգտագործված շինանյութերի
- գ/ Հարմարությունների/ենթակառուցվածքի բացասական ազդեցությանը ենթակա բնակիչների քանակը

8. Տեղափոխման նախապատվություն

- ա/ Արդյոք առկա՞ է տեղափոխման կամ վերակազմակերպման անհրաժեշտություն
- բ/ Հողի համար փոխհատուցման նախընտրելի եղանակը (դրամական կամ բնամթերքով)
- գ/ Շինության համար փոխհատուցման նախընտրելի եղանակը
- դ/ Եկամտի վերականգման համար աջակցության նախընտրելի տեսակը

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՏԳԾ-Ի ՁԵՎԱԶԱՓԵՐՐ ԵՎ ՀԱԿԻՐՃ ՏԳԾ-Ն

Ամբողջական ՏԳԾ	Հակիրճ ՏԳԾ Սույն ծրագրի համար համապատասխան կլիների հակիրճ ՏԳԾ-ն, եթե կիրառելի է
<p>Ներկայացնում է նպատակները, քաղաքականությունը և սկզբունքները՝ ներառելով հետևյալը՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Ծրագրի նկարագրություն 2. Ծրագրի տարաբնակեցման պոտենցիալ ազդեցությունները 3. Նպատակները 4. Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունները, ակնկալվող հետևանքները 5. Իրավական դաշտը 6. Իրավունքները 7. Կորուստների գնահատում և փոխհատուցում 8. Վայրի ընտրություն, նախապատրաստում և տեղափոխում 9. Բնակարանային պայմանները, ենթակառուցվածքը և սոցիալական ծառայությունները 10. Կազմակերպչական պատասխանատվությունները 11. Հանրային մասնակցություն, խորհրդատվություն և բողոքարկման մեխանիզմ 12. Իրականացման ժամանակացույցը 13. Ծախսերի նախահաշիվը և բյուջեն 14. Մոնիտորինգ և գնահատում 	<p>Ընդգրկում է հետևյալ նվազագույն տարրերը ¹⁵:</p> <ol style="list-style-type: none"> 1. Տեղահանված անձանց հաշվառում և գույքի գնահատում 2. Հատկացվելիք փոխհատուցման և այլ՝ տարաբնակեցման աջակցության նկարագրությունը 3. Խորհրդատվություն տեղահանված անձանց հետ ընդունելի այլընտրանքների վերաբերյալ 4. Բողոքների լուծման ընթացակարգերի և իրականացման վերաբերյալ ինստիտուցիոնալ պատասխանատվություն 5. Մոնիտորինգի և իրականացման միջոցառումներ, և 6. Ժամանակացույց և բյուջե

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՏՎՅԱԼՆԵՐ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Հավելյալ տեղեկատվությունը կընդգրկի հետևյալը՝

1. ՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

- ա/ Էլեկտրաէներգիայի հասանելիությունը
- բ/ Առկա ջրամատակարարման տեսակը
- գ/ Շենքի ներսում առկա կոյուղու/ջրահեռացման հարմարությունների տեսակը
- դ/ Հեռավորությունը դպրոցից
- ե/ Հեռավորությունը բուժհաստատություններից
- զ/ Հեռավորությունը շուկայից

2. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

- ա/ Տնային տնտեսության սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական սարքավորումների և միջոցների/գործիքների տեսակը և քանակը
- բ/ Տնային տնտեսության սեփականություն հանդիսացող այլ արտադրական սարքավորումների տեսակը
- գ/ Ազդեցության ենթարկված սարքավորումների մոտավոր արժեքը
- դ/ Սեփականություն հանդիսացող փոխադրամիջոցի տեսակը (հեծանիվ, մոտոցիկլ, բեռնատար, սայլ, մեքենա, այլ)
- ե/ Սեփականություն հանդիսացող խոհանոցային հիմնական սարքավորումներ (գազօջախ, վառարան և այլն)
- զ/ Սեփական սառնարան, ռադիո, հեռուստացույց և այլն
- է/ Շենքի ընդհանուր վիճակը (հրաշալի, լավ, միջին, վատ)
- ը/ Տնային տնտեսության կահավորման ընդհանուր վիճակը (կահույք, պահարաններ և այլն)

3. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ

- ա/ Տնային տնտեսության տարեկան միջին եկամուտը բոլոր աղբյուրներից
- բ/ Հիմնական կարիքների մասով միջին ծախսերը՝ սնունդ, փոխադրամիջոց, առողջություն, կրթություն
- գ/ Բանկերից, ընկերներից կամ բարեկամներից վերցված փոխառություններ
- դ/ Մոտավոր խնայողությունները, եթե կան

4. ՈՒՆԵՑԱԾ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ներածություն

1. Ինչպես արդեն նշվել է, Ծրագրի ազդեցության ենթակա անձանց (ԾԱԵԱ-ների) սեփականության գնահատումը բաղկացած է երկու բաղադրիչներից: Առաջին բաղադրիչը ԾԱԵԱ -ի սեփականությունը հանդիսացող կամ նրա կողմից արտադրության նպատակներով օգտագործվող գույքի փոխարինման արժեքն է: Երկրորդը ԾԱԵԱ-ին օժանդակության միանվագ վճարումն է, որը սահմանվում է որպես փոխարինման ընթացիկ արժեքը գերազանցող գումար (ֆինանսական առումով) և օգտագործվում է փոխհատուցելու համար ազդեցությանը ենթարկված անձի կրած անհարմարությունները, բնակության կամ գտնվելու վայրի փոփոխությամբ պայմանավորված ժամանակի կորուստը, փոխարինված սեփականության արտադրողականությանը նոր վայրում համարժեք մակարդակին հասցնելու համար անհրաժեշտ հավելյալ ջանքերը, տեղափոխման գործընթացում եկամտի կորուստը և այլ նմանօրինակ կորուստներ:
2. Անհրաժեշտ են գործնական ուղեցույցներ Ծրագրի շրջանակներում տարաբնակեցման ծախսերի հաշվարկման համար: Անհրաժեշտ է նշել, որ ստորև ներկայացված մոտեցումը չի հանդիսանում անփոփոխ շրջանակ: Այն բանակցման ենթակա ուղեցույցների և առաջարկների փաթեթ է: Հարցը նրանում է, որ յուրաքանչյուր դեպք տարբեր է լինելու: Ամեն դեպքի համար կպահանջվի խորհրդակցություն տեղական մակարդակով՝ ազդեցությանը ենթակա շահագրգիռ կողմերի հետ: Գոհացուցիչ արդյունքներ ստանալու համար, սովորաբար, պահանջվում են զգալի ջանքեր և ժամանակ:

Գործընթացը կարգավորող փաստաթղթեր

3. Փոխհատուցումների հաշվարկի և միավորի գնի հաշվարկի մեթոդաբանությունը մշակվել է՝ ըստ հետևյալ փաստաթղթերի.
 - (i) ՀԲ ՕՔ 4.12
 - (ii) ՀՀ 04.10.2005թ. ընդունված թիվ ՀՕ-189-Ն «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» օրենք
 - (iii) Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի գնահատման Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտ
 - (iv) ՀՀ քաղաքաշինության նախարարի կողմից 14.01.2008թ. թիվ N 09-Ն «ՀՀ տարածքում կառուցվող շենքերի, կառուցվածքների, ինչպես նաև շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշների ժողովածուն հաստատելու մասին» հրաման)

Հողի գնահատումը

4. Ազատ շուկայական տնտեսությունում գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական հողի արժեքը սահմանվում է անշարժ գույքի շուկայում գնվող և վաճառվող գնի հիման վրա: Հողը դասակարգվել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից (ԱԳԿՊԿ): Այնուամենայնիվ, հաճախ դասակարգումը չի համապատասխանում հողի փաստացի օգտագործման նպատակի հետ: Այս ծրագրի շրջանակում կօգտագործվի ավելի բարձր գին ունեցող տեսակը՝ հողի գինը ի օգուտ ԾԱԵԱ-ի որոշելու համար:

Հողի փոխարինման արժեքի գնահատում

5. Հողի գնահատումը պետք է իրականացվի փոխարինման արժեքով՝ հիմք ընդունելով շուկայական դրույքաչափերը: Շուկայական դրույքաչափերը կգնահատվեն համեմատական մեթոդի միջոցով, ինչպես սահմանված է ՀՀ գնահատման ստանդարտով: Սույն մեթոդի հիման վրա որոշվում է հողակտորի արժեքը՝ հաշվի առնելով միևնույն տեղակայվածությունը և կիրառման նույն նպատակները/հատկանիշներն ունեցող վերջերս վաճառված առնվազն երեք համեմատելի հողերի վաճառքի ճշգրտված միջին արժեքը: Եթե գնահատվող հողամասի նույն վայրում ընդունելի համեմատելի հողեր առկա չեն, մեկ կամ ավելի համեմատելի հողամասեր կվերցվեն այլ մոտակա/ համեմատելի վայրերից:
6. Գնահատվող հողի և համեմատելի հողի հատկանիշների/որակի միջև փոքր տարբերություններն արտացոլելու նպատակով՝ ճշգրտվել են համեմատելի հողերի միջին շուկայական վաճառքները՝ ըստ մի քանի համեմատության պարամետրերի և համապատասխան գործակիցների:

Գնահատման ընթացակարգը

7. Հողի գնահատման համեմատական մեթոդը կկիրառվի հետևյալս.
 - (i) վերլուծության կենթարկվեն նմանատիպ անշարժ գույքի շուկաները
 - (ii) կսահմանվեն առնվազն երեք համեմատության միավորներ
 - (iii) կտարբերակվեն համեմատության անհրաժեշտ տարրերը
 - (iv) կճշգրտվի համեմատության միավորների արժեքը՝ ըստ համեմատության տարրերի և համեմատվող անշարժ գույքի համար միջինացված մի քանի փոփոխված գնային ցուցանիշների
 - (v) ստացված շուկայական արժեքը կհամեմատվի կադաստրային արժեքի հետ
 - (vi) կսահմանվի հողակտորի գինը:

Քայլ 1

8. Նմանատիպ անշարժ գույքի շուկայական իրավիճակը վերլուծելու և վերլուծության համար

գովազդներ), անհատական տվյալների բազայից¹⁶, ինչպես նաև ՀՀ ԱԳԿՊԿ «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ՊՈԱԿ-ից ձեռք բերված տեղեկատվությունից: Ստացված տեղեկատվության հիման վրա գնահատողն օգտագործում է ամենահամադրելի/համապատասխան տեղեկատվությունը (իր համեմատության տարրերով):

Քայլ 2

9. Սկզբունքորեն համեմատելի արժեքների աղբյուր են հանդիսանում կատարված վաճառքների արձանագրությունները՝ ստացված ՀՀ ԱԳԿՊԿ «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ՊՈԱԿ-ից: Եթե որոշակի հողակտորի համար արձանագրությունները չեն ներառում օգտագործելի համեմատիչներ, ապա օգտագործվում են կադաստրի ցուցակների շուկայական գները կամ հողի վաճառքի առաջարկները (նորությունների թերթերում ու կայքերում)՝ համեմատիչների ձևավորման նպատակով: Յուրաքանչյուր գնահատված հողամաս համադրվում է առնվազն (3) երեք համեմատելի հողամասերի հետ:

Քայլ 3

10. Համեմատելի հողակտորները բացահայտելուց հետո մի քանի այլ լրացուցիչ պարամետրեր նույնպես հաշվի կառնվեն՝ գնահատված հողամասերի և համեմատելի հողակտորների հարաբերական որակի/հատկությունների համեմատության նպատակով: Գնային ճշգրտումների պարամետրերը և գործակիցները թվարկված են ստորև՝

Վաճառքի պայմանները և շուկայի վիճակը

11. Սրանք շուկայական գնի փոփոխություններն են, որ տեղի են ունեցել համեմատվող հողերի շուկայական վաճառքների և գնահատման ժամանակահատվածի միջև: Գնահատողը նաև հաշվի է առել գույքի՝ տարածամկետ վճարման պայմանով գնվելու հանգամանքը:

Նպատակային նշանակությունը

12. Մա ցույց է տալիս տվյալ հողակտորի փաստացի օգտագործումը՝ անկախ իր կադաստրային, նպատակային և գործառնական նշանակությունից:

Տեղակայվածությունը և դիրքը

13. Գնահատվող և համեմատելի հողակտորները ներկայացված են ըստ թաղամասերի: Դրանց հեռավորությունը գլխավոր ճանապարհից նույնպես ցույց է տրվում: Տվյալ դեպքում կարող է կիրառվել 20 % քայքայվ նվազեցնող կամ բարձրացնող գործակիցներ:

14. Տրանսպորտի հասանելիությունը

15. Մույն գործակիցը բնութագրել է գնահատվող և համեմատելի հողակտորների հեռավորությունը տրանսպորտային գլխավոր հանգույցներից: Տրանսպորտի հասանելիությունը նույնն է գնահատվող և համեմատելի հողակտորների համար, և որևէ գործակից չի կիրառվի:

Ընդհանուր մակերեսը

16. Ազդեցության ենթակա հողակտորների ընդհանուր մակերեսն ազդեցություն չի ունեցել հողակտորի գնի վրա, քանի որ այն ունեւ համեմատելի հողակտորների նույն մակերեսը:

Ճակատային մաս

17. Սա ցույց է տալիս, թե տվյալ հողակտորը գլխավոր ճանապարհի վրա քանի մետր ճակատային մաս ունի:

Ենթակառուցվածքների հասանելիությունը

18. Բնութագրում է գնահատված հողակտորի հեռավորությունը գլխավոր ենթակառուցվածքներից (ճանապարհ, ռոզման և խմելու ջրատար, էլեկտրական հոսանքի գիծ, գազատար, կոյուղի):

Թեքություն

19. Շուկայի համակարգված դիտարկումները ցույց են տալիս, որ թեքություն ունեցող և չունեցող հողամասերը տարբեր գներ ունեն: Այդ պատճառով գնահատողը կարող է նաև հաշվի առնել այս համեմատման տարրը: Քանի որ գնահատված և համեմատելի հողակտորները հարթ են, տվյալ տարրի շտկման անհրաժեշտությունը չկա:

Քայլ 4

20. Հողամասերի շուկայական գնի միավորը ճշգրտվել է՝ ըստ թվարկված համեմատության տարրերի: Ճշգրտման տրամաբանությունը ներկայացված է ստորև աղյուսակի միջոցով՝

**Աղյուսակ 1
Ընդհանուր հողամասի 1 քմ արժեքի հաշվարկը**

Համեմատության տարրեր	Գնահատվող անշարժ գույք	Համանման անշարժ գույք 1	Համանման անշարժ գույք 2	Համանման անշարժ գույք 3
Մեկ քմ գին (ՀՀ դրամ)		30,064	13,333	12,933
Մակարկում (Վաճառքի		Վաճառք	Վաճառք	Վաճառք
Ճշգրտման գործակից		1.00	1.00	1.00
Ճշգրտումը ՀՀ որամով		0	0	0
Ժամանակ (Շուկայի	02.2013	11.2012	02.2012	02.2012
Ճշգրտման գործակից		1.00	1.00	1.00
Ճշգրտումը ՀՀ որամով		0	0	0
Նպատակային	Բնակավայր	Բնակավայր	Բնակավայր	Բնակավայր
Ճշգրտման գործակից		1.00	1.00	1.00
Ճշգրտումը ՀՀ որամով		0	0	0
Գործառնական	Այլ հողեր	Բնակ. կառ.	Բնակ. կառ.	Բնակ. կառ.
Ճշգրտման գործակից		1.00	1.00	1.00
Ճշգրտումը ՀՀ որամով		0	0	0
Փաստացի նշանակություն	Այգի	Բնակ. կառ.	Բնակ. կառ.	Բնակ. կառ.
Ճշգրտման գործակից		1.00	1.00	1.00
Ճշգրտումը ՀՀ որամով		0	0	0
Տեղադրություն	Լավ	Գերազանց	Բավարար	Բավարար
Ճշգրտման գործակից		0.80	1.20	1.20
Ճշգրտումը ՀՀ որամով		-6,013	2,667	2,587
Դիրք	Գերազանց	Գերազանց	Լավ	Լավ
Ճշգրտման գործակից		1.00	1.20	1.20
Ճշգրտումը ՀՀ որամով		0	2,667	2,587
Տրանսպորտի	Լավ	Լավ	Լավ	Լավ
Ճշգրտման գործակից		1.00	1.00	1.00
Ճշգրտումը ՀՀ որամով		0	0	0
Ֆիզիկական սնութազեղ՝ առ				
Ընդամենը (ոմ)	400.0	266.10	300.0	300.0

Ճշգրտումը ՀՀ որսմով		0	0	0
Ենթահարուսվածիեռհ	Բավարար	Լավ	Բավարար	Բավարար
Ճշգրտման առձակհա		0.85	1.00	1.00
Ճշգրտումը ՀՀ որսմով		-4,510	0	0
Թեռուրուր	Հարթ	Հարթ	Հարթ	Հարթ
Ճշգրտման առձակհա		1.00	1.00	1.00
Ճշգրտումը ՀՀ որսմով		0	0	0
Բարեւաձումնեռ	Առկա չեռ	Առկա չեռ	Առկա չեռ	Առկա չեռ
Ճշգրտման առձակհա		1.00	1.00	1.00
Ճշգրտումը ՀՀ որսմով		0	0	0
Ընհանրուր Ճշգրտում (ՀՀ		-10,522	5,333	5,173
Ճշգրտւաձ մեռ սմ սհն (ՀՀ		19,542	18,666	18,106
Կշռահն առձակհա		0.33	0.34	0.33
Գնահատւոդ անշարձ	18,770			

Քայլ 5

21. Անշարժ գույքի արժեքի վերաբերյալ վերջնական որոշումը կսահմանվի վաճառքների համեմատության մեթոդի միջոցով՝ վերլուծելով անշարժ գույքի համեմատելի վաճառքների ճշգրտված գները: Գնահատողը միջինացնում է երեք համանման հողակտորների ճշգրտված գները այն բանից հետո, երբ հաստատում է, որ բոլոր երեք համանման հողակտորները գնահատվող հողակտորի նման են, և որ տվյալների ստացման աղբյուրները հավաստի են:

Քայլ 6

22. Այնուհետև հաշվարկվում է հողամասի շուկայական արժեքը հետևյալ բանաձևով՝

$ՀԵ = ՀՄ \times ՆԵ$, որտեղ՝

ՀԵ –ն հողամասի շուկայական արժեքն է,

ՀՄ-ն հողամասի մակերեսն է,

ՆԵ-ն համանման հողամասերի 1 քմ շուկայական ճշգրտված արժեքն է:

ՀԱՎԵԼՎԱԾ 8. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1. ՀՄՀ- Հայաստան ՊՈԱԿ, Տարաբնակեցման քաղաքականության շրջանակ (2009 թ.)
2. Հայաստանի սոցիալական պաշտպանության վարչարարության երկրորդ ծրագիր (2014-2018 թթ.), Տարաբնակեցման քաղաքականության շրջանակ (2014 թ.)
3. Հրագրան - Շինուհայր բարձրավոլտ գծի վերականգնման ծրագիր, Տարաբնակեցման քաղաքականության շրջանակ (2011թ.)
4. Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիր, Տարաբնակեցման քաղաքականության շրջանակ (2012 թ.)
5. Ոռոգման համակարգի զարգացման ծրագիր, Տարաբնակեցման քաղաքականության շրջանակ (2013 թ.)
6. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (1995 թ., փոփոխված 2005 թ.)
7. Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգիրք (1998 թ.)
8. Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգիրք (2001թ.)
9. Հայաստանի Հանրապետության օրենք «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» (2006 թ.)
10. Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական դատավարության օրենսգիրք (1998 թ.)
11. Հայաստանի Հանրապետության Վարչական իրավախախտումների օրենսգիրք (2007 թ.)
12. Հայաստանի Հանրապետության օրենքը «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» (2005 թ.)
13. Հայաստանի Հանրապետության օրենքը «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» (2005 թ.) ՀՕ-189-Ն
14. Հայաստանի Հանրապետությունում Անշարժ գույքի գնահատման ազգային ստանդարտը
15. Համաշխարհային բանկ. Հարկադիր տարաբնակեցման գործառնական քաղաքականություն (ՀԲ ԳՔ/WB ՕՔ 4.12) (հունվար 2002թ.)
16. Համաշխարհային բանկ. Հարկադիր տարաբնակեցման գործառնական քաղաքականություն, Հավելված Ա - ԳՔ 4.12 (հունվար 2002թ.)
17. Համաշխարհային բանկ. Բանկի ընթացակարգը (ԲԸ) 4.12 (հունվար 2002 թ.)
18. Համաշխարհային բանկ. Հարկադիր տարաբնակեցման ձեռնարկ և հավելվածներ (2004 թ.)
19. Վերականգնվող էներգիայի ընդլայնման ծրագիր (ՎԷԸՕ). Ներդրումային ծրագիր, 2014 թ. հունիս
20. Քարքարի երկրաջերմային հետազոտական հորատման ծրագիր. Տեխնիկական ասպեկտները, ծախսերը և պայմանագրերի կնքումը. Տեխնիկական խորհրդատվություն ՀՀ կառավարությանը, ՀԲ, 2014 թ. մայիս
21. Հայաստան. Երկրաջերմային էներգիայի ծրագրի նախապատրաստական առաքելություն, սեպտեմբերի 1-6, 2014, Aide Memoire

ՀԱՎԵԼՎԱԾ 9. ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՌԱՑՄԱՆ ԿԱՊԱԼԱՌՈՒՄ ԶԵՎԱԹՂԹԵՐԸ

Ձեռք կրերվի համաձայնություն առ այն, որ շինարարական աշխատանքների կապալառուները կհոգան շինարարական աշխատանքների ընթացքում կառույցների ժամանակավոր և մշտական հեռացման ծախսերը: Այս փոխհատուցման և վերականգնման գործընթացը կիրականացվի նախքան աշխատանքների մեկնարկը կապալառուի կողմից կից ներկայացված ձևաթղթերը լրացնելուց և ներկայացնելուց հետո, եթե չկան առարկություններ ՀՎԷԷ հիմնադրամի և ՀԲ-ի կողմից:

- Հեռացրեք կառույցները միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում,
- Մի հեռացրեք կառույցն առանց դա նախապես քննարկելու սեփականատիրոջ և օգտագործողի հետ հետ,
- Հավաստիացրեք սեփականատիրոջը, որ աշխատանքների ավարտից հետո կառույցը կվերականգնվի և կրերվի իր նախնական վիճակին
- Տեղեկացրեք ՀՎԷԷ հիմնադրամին հեռացման ենթակա կառույցների մասին՝ ներկայացնելով սույն ձևաթղթի պատճենները (մեկական՝ յուրաքանչյուր շինության համար, լրացնելով 1-2 մասերը) նկարների հետ միասին
- Վերականգնումից հետո լրացրեք 4-րդ մասը և կրկին հանձնեք ձևաթուղթը ՀՎԷԷ հիմնադրամին, որտեղ դրանք կպահվեն իրենց գրառումներում

1. Կառույցի վերաբերյալ տեղեկատվություն (կցել նկարներ)

Կառույցի տեղավայրը (համայնք)	
Կառույցի վայրը (հողակտորի լոտ/կողը)	
Կառույցի տեսակը/անվանումը	
Կառույցի նյութը	
Օգտագործման նպատակը	
Հեռացման պատճառը	

2. Սեփականատիրոջ վերաբերյալ տվյալներ

Սեփականատիրոջ անունը	
Սեփականության փաստաթուղթը*	
Անձնագրային տվյալներ	
Կոնտակտային հասցեն և հեռախոսի համարը	

Հանդիպման ամսաթիվը	
Սեփականատիրոջ ստորագրությունը	
* Գրանցված սեփականատերերի դեպքում այն կարող է լինել կադաստրի վկայականը, վարձակալների դեպքում՝ վարձակալության համաձայնագիրը կամ վարձակալության կադաստրի վկայականը, իսկ չգրանցված օգտագործողների դեպքում այն կարող է լինել Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրված վկայականը:	

3. Ներկայացնել ՀՎԷԷ հիմնադրամին (անհրաժեշտության դեպքում ԳՄԻԳ-ը կարող է տեղեկացնել ՀԲ-ին)

Դիտարկման ամսաթիվը	
Ստորագրություն	
Մեկնաբանություն	

4. Կառույցների փոխհատուցումը (օգտագործել արտոնագրված գնահատողի կողմից պատրաստված գնահատման հաշվետվությունը)

Կառույցի անվանումը	Մակերեսը (մ ²)	մ ² միավորի արժեքը	Փոխհատուցման ընդհանուր արժեքը

5. Հաստատել սեփականատիրոջ գոհունակությունը կառույցի վերականգնումից հետո

Սեփականատիրոջ ստորագրությունը և ամսաթիվը	
Կապալառուի ստորագրությունը և ամսաթիվը	

ՀԱՎԵԼՎԱԾ 10. ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՁԵՎԱԹՈՒՂԹ

(Տվյալների բազան Excell ֆայլով կարող է մշակվել այս ձևաթղթի հիման վրա՝ լայնածավալ բողոքարկումների դեպքում հաշվետվության գործընթացը հեշտացնելու նպատակով)

Բողոքարկուի տվյալները

1. Անուն
2. Հասցե
3. Անձնագրի համարը
4. Կոնտակտային անձի տվյալները <i>(եթե ԾԱԵԱ-ն չունի բջջային հեռախոս, կարելի է նշել այլ կոնտակտային անձի)</i>
5. Սեռը
6. Կարգավիճակը՝ ԾԱԵԱ, Միջնորդ, ՀԿ, Տեղական ինքնակառավարման մարմիններ, այլ

Բողոքի տվյալները

1. Գրանցման ամսաթիվը
2. Բողոքներն ընդունող պատասխանատուի տվյալները (անունը, պաշտոնը, բողոքներն ընդունող գրասենյակի անունը)
3. Բողոքի ձևաչափը՝ նամակ, հեռախոսագանգ, էլ. փոստ, բանավոր բողոքարկում, առաջարկությունների տուփ, այլ
4. Բողոքի տեսակը (օրինակ՝ հողի օտարում, փոխհատուցում/գնահատում, շինարարական աշխատանքներ, այլ)
5. Խնդրի նկարագրությունը <i>(ամփոփում)</i>
6. Խնդրի պատճառ հանդիսացող անձի/կազմակերպության անունը

<p>7. Գործողությունների պլան (<i>գործողությունը, պատասխանատու անձի անունը, ամսաթիվը</i>)</p> <p>A.</p> <p>B.</p> <p>Եվ այլն</p>
<p>8. Վերջնական լուծում (<i>ամփոփում</i>)</p>
<p>9. Բողոքարկուի գոհունակության նամակը (<i>ամփոփում</i>)</p>

Մոնիտորինգի իրականացման պատասխանատուի տվյալները

<p>1. Անուն</p>
<p>2. Պաշտոն</p>
<p>3. Ձևաթղթի լրացման վերջնական ամսաթիվը</p>

**ՀԱՎԵԼՎԱԾ 11. ԾՐԱԳՐԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ**

#	Անունը	Կոնտակտային տվյալներ
1	«Գորիսի Օրհուս կենտրոն»	Հասցե՝ ք. Գորիս, Մաշտոցի 3, Քաղաքապետարանի վարչական շենք Հեռ.՝ /374 94/ 81 50 52,/374 096/09 08 95, Էլ. փոստ՝ info_goris@aarhus.am, nver.goris@mail.ru, nver.goris@gmail.com, mharoutunyan@mail.ru
2	«Էկո-Սիս» ՀԿ	Հասցե՝ ք. Սիսիան, Սիսական 3 Հեռ.՝ (374 55) 77-68-00 Էլ. փոստ՝ ecosisian@yahoo.com
3	«Գորիսի սերունդ» ՀԿ	Հեռ.՝ 093-73-41-74 Էլ. փոստ՝ gorisiserund@rambler.ru
4	«Վորլդ Վիժն» Սիսիանի ՏԶԾ	Հասցե՝ ք. Սիսիան, Խանջյան 1բ Հեռ.՝ +374 (0283) 2 6532 Էլ. փոստ՝ wvarmenia@wvi.org
5	«Գորիսի մամուլի ակումբ» ՀԿ	Հասցե՝ ք. Գորիս, Անկախության 2 Հեռ.՝ 028420731, 091013575, 091024677 Էլ. փոստ՝ gorispresclub@gmail.com, susannashahnazaryan9@gmail.com, shushan.ohanyan@gmail.com
6	«Սալվարդ» ՀԿ	Հասցե՝ ք. Գորիս, Խանջյան 1ա Հեռ.՝ (094)- 330905 Էլ. փոստ՝ salvardfund@mail.ru
7	«Ասպարեզ» ՀԿ	Հասցե՝ ք. Գորիս, Մաշտոցի 1 Հեռ.՝ 091241901 Էլ. փոստ՝ toxsanvage@rambler.ru
8	«Համայնքային զարգացման աջակցության ցանց»	Էլ. փոստ՝ http://hamaynq.am
9	«ITEK» ՀԿ	Հասցե՝ ք. Գորիս, Մաշտոցի 3/3 Հեռ.՝ +374 284 2 40 20 Էլ. փոստ՝ itekngo@gmail.com http://www.itekngo.com

ՀԱՎԵԼՎԱԾ 12. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամսաթիվը՝ 26-ը մարտի, 2015 թ.

Վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, Ծղուկ համայնք, Տեղական ինքնակառավարման մարմնի գրասենյակ

Ժամը՝ 12:00 - 13:00

ՏԲՇ-ի նախնական տարբերակի պաշտոնական հրապարակումից հետո ՀՎԷԷՀ-ի կողմից կազմակերպվեցին հանրային լուսմներ ազդեցության ենթակա համայնքներից մեկի տեղական ինքնակառավարման մարմնի գրասենյակում, որը տեղակայված է նախատեսված ծրագրի տարածքի մերձակայքում:

ՏԲՇ-ի նախնական տարբերակը հրապարկվեց 2014 թվականի դեկտեմբերին ՀՎԷԷՀ-ի կայքէջում: ՏԲՇ-ի թղթային տարբերակը տրամադրվեց ազդեցության ենթակա բոլոր համայնքներին, իսկ ընտրված ՀԿ-ներին ուղարկվեց էլ. փոստով՝ փաստաթղթի նախնական տարբերակի վերաբերյալ վերջիններիս հարցերը կամ մտահոգությունները հավաքագրելու նպատակով: «Գորիսի Օրհուս կենտրոն», «Էկո-Սիս» ՀԿ, Սիսիան, «Հակոբյան բնապահպանական կենտրոն» (Հայաստանի ամերիկյան համալսարան), «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ, «Թրանսփերենսի ինթերնեյշնլ Հայաստան և էներգախնայողության միություն» ՀԿ-ներին տրամադրվեց ՀՎԷԷՀ-ի էլ. փոստը և այլ կոնտակտային տվյալներ՝ նրանց հնարավորություն ընձեռելով իրենց տեսակետները ներկայացնել ոչ միայն հանրային լուսմներին մասնակցության միջոցով:

Հանրային լուսմների վերաբերյալ հայտարարությունը տեղադրվեց ՀՎԷԷՀ-ի կայքէջում և մարտի 17-ին տպագրվեց «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում: Ի լրումն, ՀՎԷԷՀ-ն «Գորիսի Օրհուս կենտրոնի» միջոցով ՀԿ-ների ցանցում տարածեց փաստաթուղթը և հայտարարությունը:

Տասը շահառուներ՝ ազդեցության ենթակա բոլոր երեք համայնքներից, ՀՎԷԷՀ-ն և խորհրդատուն ակտիվորեն մասնակցեցին հանրային լուսմներին (մասնակիցների ցուցակը ներկայացված է ստորև):

Օրակարգ.

1. Բացման խոսք

Բանախոս՝ Հմայակ Ավագյան

Բնապահպանության մասնագետ, ՀՎԷԷՀ

2. Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման և կառավարման պլանի նախնական տարբերակի ներկայացում (ՇՄՄԱԳ և ԲԿՊ) և քննարկում

Բանախոս՝ Հմայակ Ավագյան

Բնապահպանության մասնագետ, ՀՎԷԷՀ

3. ՏՔՇ-ի ներկայացում և քննարկում

Բանախոս՝ Ջարուհի Հայրապետյան, Տարաբնակեցման խորհրդատու, ՀՎԷԷՀ

Ծրագրի ներկայացումը

Պրն. Հ. Ավագյանը ներկայացրեց ծրագիրը, դրա հիմնական նպատակը և առաջարկվող ծրագրի շինարարական աշխատանքներին առնչվող բաղադրիչները: Այնուհետև նա ներկայացրեց հանրային լուսման հիմնական նպատակը և նշեց, որ մասնակիցների արձագանքները կարտացոլվեն վերջնական փաստաթղթերում՝ ՇՄՍԱԳ /ԲԿՊ-ում և ՏՔՇ-ում:

Պրն. Ավագյանը ներկայացրեց նաև ՇՄԱԳ-ը և կազմակերպվեց քննարկում, որտեղ տեղական ինքնակառավարման մարմինները ներկայացնող համայնքների ղեկավարները ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին (քննարկումների մանրամասն արձանագրությունը ներկայացված է ՇՄՍԱԳ հաշվետվությունում):

Այնուհետև կայացավ հանրային լուսման երկրորդ մասը, որի ընթացքում տարաբնակեցման խորհրդատուն ներկայացրեց ՏՔՇ-ն, դրա նպատակները, կառուցվածքը և բոլոր գլուխները, ներառյալ՝ հավանական ազդեցությունների վերլուծությունները, ինստիտուցիոնալ կառուցվածքը, ԲԼՄ-ն, հիմնական փաստաթղթերը (ՏՔՇ, ՏԳԾ, ՀՀ բացառիկ՝ գերակա հանրային շահի մասին օրենքը), փոխհատուցումը և իրավունքները, և այլն: Պարզության նպատակով մասնակիցներին տեղեկատվությունը ներկայացվեց PowerPoint ծրագրի միջոցով: Խորհրդատուն ընդգծեց տեղական ինքնակառավարման մարմինների դերակատարությունը բողոքների լուծման մեխանիզմում և համաձայնեցվեց, որ ծրագիրը սկսելուն պես համայնքների ղեկավարները կնշանակեն պատասխանատու անձանց՝ ՕԱԵԱ-ների բողոքները, դժգոհությունները և հարցերը գրանցելու համար: «Կասեցման օր» հասկացությունը ներկայացվեց մանրամասնորեն: Մասնավորապես, մասնակիցներին բացատրվեց, որ բարելավումները, որոնք կիրականացվեն կասեցման օրից հետո, չեն փոխհատուցվի: Նշվեց նաև, որ կասեցման օրվա ամսաթիվը լրացուցիչ կհայտարարվի: 20 րոպե ներկայացումից հետո տարաբնակեցման խորհրդատուն պատասխանեց բարձրացված հարցերին:

Հարցեր և պատասխաններ

Հարց.

Արդյո՞ք համայնքները կփոխհատուցվեն ճանապարհի տակ գտնվող հողի համար: Ի՞նչ կարգավիճակ կունենա ճանապարհը: Ո՞վ է շահագործելու/սպասարկելու ճանապարհը վերակառուցումից հետո:

Պատասխան

Վերակառուցված ճանապարհը կլինի համայնքի սեփականությունը հանդիսացող հողի վրա: Գոյություն ունեցող ճանապարհի կարգավիճակը չի փոխվի: Հետևաբար, անհրաժեշտ չի լինի ճանապարհի համար օտարել հողը: Ենթակառուցվածքը կօգտագործվի համայնքի անդամների կողմից, ինչպես նախկինում: Վերակառուցումից հետո այն ավելի լավ

Ճանապարհ կդառանա, և համայնքի բոլոր անդամները կշահեն դրանից: Այս պահի դրությամբ նշանակված է նախագծային ընկերությունը, և ճանապարհի նախագիծը պատրաստ լինելուն պես այն կուղարկվի տեղական ինքնակառավարման մարմիններին՝ հաստատման համար:

Հարց

Ի՞նչ կլինի, եթե նոր կառուցված ճանապարհի արդյունքում մասնավոր սեփականությունները ենթարկվեն ազդեցությանը:

Պատասխան

Ինչպես արդեն ներկայացրել ենք, ճանապարհի մերձակայքում գտնվող մասնավոր սեփականությունները ցրված են, ինչը հնարավորություն կընձեռի նախագծային կազմակերպությանը խուսափել մասնավոր հողակտորներին հասցվող ազդեցություններից: Սակայն, եթե դա հնարավոր չէ, ապա կմշակվի ՏԳԾ, կիրականացվի ազդեցության գնահատում և ծրագրի ազդեցությանը ենթարկվող բոլոր անձանց կվճարվի լիարժեք փոխհատուցում բոլոր կորուստների դիմաց: Նման դեպքերում ազդեցության ենթակա համայնքների հետ կանցկացվի լրացուցիչ խորհրդակցություն: Ծրագիրը կհիմնի բողոքների լուծման մեխանիզմ, և եթե կունենաք առնչվող որևէ հարց, դժգոհություն, ապա ձեր բողոքը կարող եք ներկայացնել տեղական ինքնակառավարման մարմիններին կամ ՀՎԷԷՀ-ին և ձեր դեպքը լրացուցիչ կքննվի:



Մասնակիցների անվանացանկը

- Մեսրոպ Ամիրջանյան – Ծղուկ համայնքի ղեկավար
- Հակոբ Խաչատրյան – Ծղուկ համայնքի անդամ
- Մանուչար Մկրտչյան – Սառնակունքի համայնքի ղեկավար
- Վարդան Ենոքյան – Սպանդարյան համայնքի անդամ
- Մանվել Սարգսյան – Սպանդարյան համայնքի անդամ
- Դավիթ Ենոքյան – Սպանդարյան համայնքի անդամ
- Վրեժ Մարկոսյան – Սպանդարյան համայնքի անդամ

Հմայակ Ավագյան – ՀՎԷԷ հիմնադրամ
Սիմոն Պետիկյան – ՀՎԷԷ հիմնադրամ
Գայանե Բախչիսարայցևա – ՀՎԷԷ հիմնադրամ